Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԱՐՏԱՇԵՍ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄՈՏ

«ԱՐՑԱԽ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱՇԵՍ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄՈՏ

ԵՐԵՎԱՆ
2001

Խմբագիր՝ Հ. Մ. Հարությունյան

Արտաշես Հակոբջանյան
Արցախյան ազատամարտի ակունքների մոտ. հոդվածներ. Երևան, 2001. 124 էջ:

Հոդվածների ժողովածուն սրծարծում է արցախյան կնճռոտ հիմնախնդրի քաղաքական-պատմական շերտերում ծավալվող կենսական հարցադրումներ. արտահայտում հեղինակի ուրույն տեսակետը արցախյան ազատամարտի հանգուցալուծումների ճանապարհին.

ԿԱՐԾԻՔՆԵՐ

Սույն գրքույկի հոդվածները ոչ միայն նորություններ են, այլև հայագիտության ու արցախագիտության կողմից գրեթե չուսումնասիրված տարածքներում «սպիտակ բծեր» վերացնելու նպատակ են հետապնդում: Հեղինակը պրոբլեմային խնդիրները լուսաբանել է արդիական, ռազմաքաղաքական տեսանկյունով: Այս առումով այն հրատապ է և ունի գաղափարաքարոզչական ու գիտահրապարակախոսական նշանակալից արժեք: Գիրքը հատկապես շատ կարևոր նյութ կտա Արցախի հիմնահարցը քաղաքական ու դիվանագիտական ճանապարհով լուծելու հարցով զբաղվող գործիչներին: Այն նաև մի ապտակ է թուրք-ազերի կեղծարարների երեսին, որոնք ուժ ու եռանդ չեն խնայում՝ ապակողմնորոշելու Արցախ-Ադրբեջան հակամարտությամբ հետաքրքրվողներին:

Սույն գրքույկի տպագրությունը հայերեն, ռուսներեն և անգլերեն լեզուներով առավել անհրաժեշտ է:

ԵԱՀԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
14.03.1995 թ.

Հետաքրքրությամբ կարդացի Արտաշես Հակոբջանյանի «Արցախյան ազատամարտի ակունքների մոտ» ձեռագիր աշխատությունը: Սա պատմագիտական հոդվածների մի ուշագրավ շարք է, որով հեղինակն աղբյուրագիտական նյութի հիման վրա բացահայտում է աշխարհը ցնցած արցախյան շարժման համառոտ պատմությունը և այդ պատմության հնամյա ակունքները: Պատմագիտական այս ժողովածուն օգտակար կլինի արցախահայության ազատագրական շարժման պատմության բազմաշերտ ծալքերը լուսաբանելու համար:

Սա տպագրության արժանի գործ է, որով ևս մի քար կդրվի Արցախի հիմնահարցի լուծման շենքին :

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հայկական հանրագիտարանի
պատասխանատու քարտուղար
4.04.1997 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ղարաբաղյան հիմնահարցն անցել է 300-ամյա արյունոտ ճանապարհ և դեռևս իր բավարար լուծումը չի ստացել: Հանդես գալով որպես պարսկական տիրակալությունից Հայոց Արևելից Կողմանց ազատագրման հարց, որպես Անդրկովկասի բաղկացուցիչ մաս, ժամանակի ընթացքում շահագրգիռ հզորները հարցի շրջանակները նեղացրել, հանգեցրել են Ղարաբաղին: Ավելին: Երկատել են նաև Ղարաբաղ հասկացությունը, այն բաժանել Լեռնայինի ու Դաշտայինի, և դաշտային Ղարաբաղը մարսած համարելով՝ օղակը սեղմել են Լեռնային Ղարաբաղի վզին՝ այդ վերջին հենակետը ևս բռնազավթելու հեռանկարով:

Մեզ պարտադրված պատերազմը հաստատեց այս արևի տակ Ղարաբաղի գոյատևելու իրավունքը: Սակայն դա իրականացավ Ղարաբաղի մի հատվածում միայն: Նույնիսկ նախկին Ինքնավար մարզի տարածքի մի խոշոր մաս՝ մարզի վարելահողերը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բաղկացուցիչ մաս դարձած Շահումյանի շրջանը, ինչպես նաև Մարտակերտի շրջանի մի մասը բռնազավթված են հակառակորդի կողմից: Էլ չենք խոսում իր պատմական ու աշխարհագրական սահմաններով Ղարաբաղի մասին:

Հնարավոր է նույնքան պարտադրված զինադադարը վերածի խաղաղության, բայց դա տևական ու վերջնական լինել չի կարող, որովհետև հիմնահարցը դեռևս սպասում է իր վերջնական, քաղաքական լուծմանը: Միգուցե այսքան էր վիճակված ներկա սերնդին, մանավանդ որ ազգովի նախապատրաստված չէինք այսքանին էլ, չնայած ամբողջ 70 տարի գտնվում էինք պայքարի մեջ: Թերևս կգան ավելի բարենպաստ ժամանակներ մեր ազգային դատի արդարացի լուծման համար: Բայց քանի որ ղարաբաղյան հիմնահարցը այսօր մեր խնդիրների կիզակետն է, պետք է արթուն պահել հիշողությունը պատմական հեղաբեկումների մասին:

Հոդվածների այս փոքրիկ շարքը ստեղծվել է շիկացած իրադարձությունների մթնոլորտում, որպես դրանց անմիջական արձագանք:

ԻՆՉՊԵՍ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ԴԱՐՁՐԻՆ ԱԴՐԲԵՋԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Հայկական բարձրավանդակի հետ միաժամանակ Արևելյան Անդրկովկասը ևս եղել է հայ ժողովրդի բնական հայրենիքն այն հեռավոր ժամանակներից, երբ նա առանձնացել է հնդեվրոպական նախամայր ժողովրդից որպես ինքնուրույն էթնիկական միավոր: Չնայած այդ երկրատարածքը գիտական ծրագրով չի ենթարկվել պեղումների, և հնագիտությունը դեռևս իր խոսքը չի ասել, իր խոսքը չի ասել նաև պատմահամեմատական լեզվաբանությունը, այնուամենայնիվ, այլևայլ բնագավառներին վերաբերող ուսումնասիրություններից, շատ դեպքերում կոդմնակիորեն ու պատահական, ջրի երես են դուրս գալիս փաստեր և իրողություններ, որոնք խոսում են այդ տեսակետի օգտին:

Այսպես: Ղարաբաղի բարբառում կան որոշակի քանակությամբ բառեր, որոնք գործածական են միայն այդ բարբառում, չեն մտել հայերենի ընդհանուր բառապաշարի մեջ: Այդ բառերը իրենց հնչյունական կազմով ու արտահայտած իմաստով նույնությամբ արձանագրված են նաև հնդկական սուրբ գրքում՝ «Ռիգվեդայում»: Օրինակ, ըստ «Ռիգվեդայի», Յաման մահվան թագավորության տիրակալն է, մարդկանց մահ բերող աստվածը: Նույն հնչյունական կազմով և նույն իմաստով բառը պահպանվել է նաև Ղարաբաղի բարբառում և այսօր էլ ամենօրյա գործածական բառ է: Այդպես են նաև հոթար (հռետոր), սվահա (սվաբա), արշա և այլ բառեր: Միայն Ղարարաղի բարբառում գործածվող բառերի մի խումբ էլ առկա է ժամանակակից անգլերեն լեզվում: (Տես՝ «Սովետական Ղարաբաղ», 1988 թ., հ. հ. 184, 190, 194):

Սրանք իրողություններ են, որոնք մտածելու տեղիք են տալիս, մանավանդ եթե վերջնականապես ապացուցված իրողություն է դառնում, որ հնդեվրոպական նախամայր լեզուն կրող ժողովրդի նախահայրենիքը եղել է Արևելյան Փոքր Ասիայից մինչև Արևմտյան Իրանն ընդգրկող երկրատարածքը:

Հնագետների հայտնաբերած հնագույն քաղաքակրթություններից մեկը Շումերական քաղաքակրթությունն է Հարավային Միջագետքում, ուր շումերները ապրել են մ.թ.ա. 5-րդ հազարամյակի վերջերից մինչև 2-րդ հազարամյակի սկիզբը: Շումերական գրական հուշարձաններից է

նաև մարդկությանը հայտնի ամենահին էպոսը, որը ներկայացնում է շումերական իրականությունը մ.թ.ա. 28-27-րդ դարերում: Այդ էպոսում բավական որոշակի տեղեկություններ կան նաև շումերների հարևան ու մրցակից Արատտա երկիր-պետության մասին, որի արևելյան, հարավային ու արևմտյան սահմանները համընկնում են պատմական Հայաստանի սահմանների հետ: Շումերական էպոսում հիշատակություն կա նաև Արատտայի աստվածային պանթեոնի մասին: Մայր աստվածուհին կոչվում էր Տուրտուր, որը շումերներից աքքադացիներին փոխանցված «Գիլգամեշ» էպոսում դառնում է արդեն Ուբար Տուտու: Ուբար մակդիրի կորուստով Տուտու բառը հասել է մեր օրերը՝ կրկնակի իմաստով: Արևմտահայերենում Տուտու նշանակում է մեծ մայր, տատիկ՝ ինչ-որ չափով պահպանելով նախկին իմաստը: Իսկ Ղարաբաղի բարբառում Տուտու են ասում դանդաղաշարժ, անկարող, որևէ գործում շնորհք ցուցաբերելու անընդունակ կնոջը: Ըստ երևույթին, այդ հեռավոր ժամանակներում, հայկական ցեղերի միավորմանը զուգընթաց, նրանց աստվածային պանթեոնների միջև ևս մրցակցություն ու «կռիվ» է եղել, և արևելյան հատվածում հաղթող է դուրս եկել Նանե մայր աստվածուհին՝ դառնալով մեծ մայր, տատիկ, իսկ պարտված Տուտուն ստացել է բացասական իմաստ:

Ընդամենը մեկ բառ, որը, սակայն, հնարավորություն է տալիս թափանցելու դարերի խորքը և կռահելու, որ Արևելյան Անդրկովկասը ևս Արատտա երկիր-պետություն կազմի մեջ է եղել, և այդ երկիր-պետությունն էլ հայ ժողովրդի հնագույն պետական կազմավորումն է: Իսկ ինչքա՜ն այդպիսի փաստեր կհայտնաբերվեին նպատակամղված հնագիտական ու լեզվաբանական ուսումնասիրությունների դեպքում՝ հնարավորություն ստեղծելով վերականգնելու հնագույն ժամանակների պատմական իրականությունը:

Վանի Արարատյան թագավորության սեպագիր արձանագրություններից հայտնի է, որ Արգիշտի երկրորդը, շարունակելով իր նախորդների քաղաքականությունը՝ մի միասնական պետության կազմում հայկական ցեղերի միավորման ուղղությամբ, 8-րդ դարի վերջերին երկրի սահմանները հասցրեց Կասպից ծովի արևմտյան ափերը: Ահա այդ ժամանակ էլ նա հիմնադրեց Բագուն, ինչպես իր անվանակից նախորդը, նվաճելով Արարատյան դաշտը, այնտեղ հիմնադրեց Էրեբունին ու Արգիշտիխինիլի-Արմավիրը: Չէ՞ որ Բագու բառը կազմված է զուտ հայկական բառակազմական միջոցներով: Բագ (բոգ) արմատը հնդեվրոպական նախամայր լեզվից հայոց լեզվին փոխանցված բառ է, որը առկա է հայերեն մի շարք բառակազմություններում՝ Բագ-ին, Բագ-արան, Բագ-ավան: Բագ արմատը հայոց լեզվի գործուն բառապաշարի մեջ է եղել մինչև մ.թ.ա. երկրորդ դարի սկիզբը, երբ Երվանդ Վերջինը իր կառուցած պաշտամունքային կենտրոնն անվանակոչեց Բագարան: Բագու բառը կազմված է նույն բագ արմատից և հայերեն **ու** ածանցից, որը բառին տալիս է ունենալու իմաստը, ինչպես ազդ-ու, կծ-ու, հատ-ու և այլն:

Բագուն հայերենի բառակազմական միջոցներով ստեղծված միակ տեղանունը չէ Ապշերոնյան թերակղզում.տառացիորեն նրա հարևանն է դարերի խորքից եկող Մարդականը՝ կազմված մարդ արմատից և ական ածանցից՝ բառակազմական իր զուգահեռներն ունենալով Բյուր-ական, Սիս-ական, Բայլ-ական, Վասպուր-ական և նման շատ ու շատ բառերում:

Այս կարգի ցրված փաստերի, մանավանդ մինչև մեր օրերը հասած տեղանունների շարքը ամբողջ Արևելյան Անդրկովկասով մեկ կարելի է բազմապատկել, փաստեր, որոնք դուրս են մնացել գիտական հետաքրքրությունների տեսադաշտից: Սակայն մի բան որոշակի է. Արևելյան Անդրկովկասը մինչև 17-րդ դարի վերջերը իր հիմնական մասով գիտակցվում էր որպես Հայաստան, հայ ժողովուրդն էր այդ տարածքի հիմնական ու գերակշռող էթնիկական տարրը, չնայած դարեր շարունակ այնտեղ մեկը մյուսին հերթափոխել են օտար նվաճողները՝ ամեն մի նվաճող իրեն ծեռնտու ձևով վարչատերիտորիալ բաժանումների ենթարկելով այն: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր է եղել օտարի լուծը թոթափել, տեղը կանգնել է հայկական ազգային իշխանություն, վերջինը՝ Բաքվի կոմունան 1918 թ.: Իր իրական բովանդակությամբ և ոչ թե կոմունայի ղեկավարության գաղափարաքաղաքական ուղղվածությամբ, մի հակասություն, որը դարձավ կոմունայի պարտության պատճառներից մեկը, թերևս ամենահիմնականը:

ԵՐԵՔՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ղարաբաղա-ադրբեջանական ներկա հակամարտության նախապատրաստողները և այն երկու ժողովուրդների համար արյունահեղ պատերազմի վերածողները այն գլխից Գորբաչովի բերանով բանաձևել են, թե հաղթողներ ու պարտվողներ չպետք է լինեն: Դա ինքնին ենթադրում է մի լուծում, որը բացառում է պատմության հազարամյակների փորձը, երբ հաղթող կողմը պարտադրում էր իր պայմանները, իսկ պարտվողը հարկադրաբար ընդունում էր այն: Բայց քանի որ առկա է

հիմնահարցը և այն էլ՝ վերածված արյունահեղ պատերազմի, անխուսափելիորեն պետք է ունենա և իր լուծումը, ինչքան էլ այն հավասարապես չբավարարի հակամարտող կողմերից որևէ մեկին: Դա կարող է լինել և պետք է լինի մի լուծում, որը բխում է կոնֆլիկտի բուն էությունից, կոնֆլիկտ, որը բովանդակավորվել է շուրջ 300-ամյա մի ժամանակահատվածում և այսօր հասել իր գերլարված հանգուցալուծմանը: Դա կարող է և պետք է լինի մի լուծում, որը կիրառելի է միայն ղարաբաղյան հիմնահարցի համար, ինչքան էլ այդ հիմնահարցը նմանության եզրեր ունի նախկին ԽՍՀՄ-ի այլ տարածքներում առկա հակամարտությունների հետ:

Այստեղ ամբողջ հասակով կանգնում է այն իրողությունը, որ պատմության մեջ չի եղել և հնարավոր էլ չէ, որ լինի որևէ գաղափար, կնճռոտ հարցերի լուծման որևէ դեղատոմս, որ կիրառելի լինի ամենուր: Ապացույցը կրոնական տարբեր ուսմունքներն ու միևնույն կրոնի շրջանակներում առկա և մեկը մյուսին ժխտող հոսանքներն են, սոցիալական բազմաթիվ ու բազմաբնույթ ուսմունքները, ապացույցը կրախի մատնված մարքսիզմ-լենինիզմն է, նրան փոխարինելու եկած «նոր աշխարհակարգ» կառուցելու մասին ամերիկյան ժամանակակից կարգախոսները, որոնք ամեն քայլափոխի հակասել ու հակասում են իրենք իրենց՝ պայմանավորված այն հանգամանքով, թե տվյալ գաղափարի կրող հզոր ժողովրդի ծավալապաշտական շահը տվյալ պահին ինչ է ուզում պարտադրել աշխարհին:

Հզոր է՝ կարող է: Ահա միակ իրավունքը, որ ամեն անգամ ներկվում է մի որևէ նոր գույնով: Իրականում հրապարակ նետված «նոր աշխարհակարգի» մասին ամպագոռգոռ կարգախոսները աստառը շուռ տված լենինիզմն է, որը կոչված է քողարկելու համաշխարհային տիրապետության ձգտող ամերիկյան նկրտումները: Վերջին հաշվով ո՞րն է բոլշևիզմի և ԱՄՆ-ի առաջ քաշած «նոր աշխարհակարգի» տարբերությունը: Բոլշևիկները սվիններով էին իրականացնում իրենց գաղափարները՝ լաթի կտորի վրա ժողովուրդներին դեմ անելով ապագա երջանկության խոստումներ, իսկ «նոր աշխարհակարգի» ասպետները ոչնչացնող զրահատեխնիկայի հետևից քարշ են տալիս սննդամթերքի ու դեղորայքի բեռներ՝ տեղնուտեղը թմրեցնելու համար դիմադրող ուժերին:

Կրախի մատնվեց մարքսիզմ-լենինիզմը, վաղը նույն ճակատագիրը սպասում է ԱՄՆ-ից «ճառագող արևին», որքան էլ ԱՄՆ-ն իր հզորությամբ միջազգային ժանդարմի դեր կատարի երկրագնդի ցանկացած անկյունում: Պատմության հազարամյակների փորձը ցույց է տվել, որ

հնարավոր չէ աշխարհին հագցնել «մի համընդհանուր կախարդիչ հանդերձ»: Հետևապես այն մոտեցումները, որ այսօր կիրառելի են Ամերիկայի կամ Եվրոպայի համար, քննություն չեն բռնում Ասիայում կամ Աֆրիկայում: Եվ այն անտեսումն ու արհամարհանքը, որ այսօր ցուցաբերում են պատմության նկատմամբ, փոխարենը բացարձականացնում առկա պետական սահմանների անձեռնմխելիությունը, որ, կիրառելի լինելով Արևմտյան Եվրոպայի և Ամերիկայի համար, չպետք է տարածվեն բոլոր այն ժողովուրդների վրա, որոնք թոթափում են գաղութատիրության լուծը՝ ստեղծելով կամ վերականգնելով իրենց հայրենիք-պետությունը: Այս դեպքում պետք է հաշվի առնել ամեն ինչ՝ և՛ պատմությունը, և՛ ժամանակակից ռեալ իրավիճակը, և՛ հարևան ու հակամարտող կողմերի փոխադարձ հարաբերությունների ու միմյանց նկատմամբ մշակված վարվելակերպի դարավոր նստվածքները: Պետք է հաշվի առնել ճնշված ու գաղութացված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի մասին ստեղծված միջազգային իրավական նորմերը, որոնք շատ ավելի առաջնային են, քան «բաժանիր, որ տիրես» կայսերապետական ելակետով կամայականորեն գծված ինչ-որ սահմաններ:

Երբ այս ելակետից մոտենում ենք «Ադրբեջանական Հանրապետությանը», տեսնում ենք, որ գործ ունենք անունից սկսած կեղծ, հակապատմական ու հակաօրինական մի պետական կառուցվածքի հետ, ուր իսպառ անտեսվել է ու ոտնահարվել մի շարք ժողովուրդների ազգային շահեր, ժողովուրդներ, որոնք իրենց հազարամյակների հայրենիքում դարձել են ոչ վաղ անցյալում երկրատարածք թափանցած և դեռևս քոչվորական կյանքը չմոռացած եկվորների ագրեսիվ քաղաքականության զոհեր: Նորաթուխ Ադրբեջանի շովինիստական կառավարությունը անարգել իրենցը հռչակեց մահմեդական այն ամբողջ քաղաքակրթությունը, որ այդ տարածքում ստեղծել էին պարսիկներն ու տեղաբնիկ ժողովուրդները, այդ ժողովուրդներին կրոնական հիմքի վրա արդեն ծուլված էին համարում և հետևողականորեն, մարդահամարից մարդահամար, քայլ առ քայլ փոքրացնում էին նրանց թվաքանակը՝ ընդհուպ մինչև ուրանալով որոշ ժողովուրդների գոյության փաստն անգամ: Նրանց կոկորդում մնացած ոսկորը հայերն էին, որոնց հարցը ևս պետք է լուծեին և «լուծում» էին՝ փորձելով սեփականել անգամ հայոց խաչքարերը: Չնայած այդ համառ ու հետևողական ջանքերին՝ այսօր Ադրբեջանական Հանրապետություն կոչվածը դեռևս մնում է մի երկրատարածք, որը դարերի հոլովույթով ձևավորվել է որպես ընդհանուր տուն ինչպես տեղաբնիկ, այնպես էլ եկվոր ժողովուրդների համար: Եվ այնտեղ ծա-

գող ազգային-ազատագրական շարժումներին ինչ-որ լուծում տալու համար պետք է ելակետ ունենալ ընդհանուր տան գաղափարը, որը հավասարապես պատկանում է տան բոլոր անդամներին, և այդ ընդհանուր տնից իրենց անկողոպտելի բաժինն ունեն ինչպես ադրբեջանցիները, այնպես էլ լեզգիներն ու թալիշները, թաթերն ու հայերը, մյուսները: Ահա թե ինչու դարաբաղյան արյունոտ կնճիռը պետք է լուծվի ընդհանուր տան բաժանման հիմքի վրա՝ անպայմանորեն հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ 300 տարի դանդաղ գործողությամբ ցեղասպանություն է կիրառվել հայերի նկատմամբ և դրա համար, միջազգային առկա օրենքների համաձայն, հայերը պետք է հատուցում ստանան՝ սկսած Բաքվի նավթի իրենց մասնաբաժնից:

Մի կողմ թողնելով աշխարհի բախտը տնօրինող հզոր պետությունների շահախնդրությունները այս երկրատարածքի նկատմամբ, շահախնդրություններ, որոնց պարտադրանքով խճճում, անլուծելիության չափ բարդացնում են հիմնահարցը՝ ընդհուպ մինչև զոհին զավթիչ, զավթիչին զոհ ներկայացնելու տեսքով, անդրադառնանք այն հարցին, թե ինչպես ստեղծվեց այդ ընդհանուր տունը և ինչ է իրենից ներկայացնում այն: Առանց այս և նման կարգի հարցերի հստակեցման անհնար կլինի հիմնախնդրի ճիշտ ու արդարացի լուծումը:

Անշրջանցելի իրողություն է, որ, սկսած մարդկային քաղաքակրթության արշալույսից, Արևելյան Անդրկովկասը ձևավորվել է որպես հայրենիք հայերի, լեզգիների, ուդիների և այլ փոքրաքանակ ժողովուրդների համար, իսկ 2,5 հարյուրամյակ առաջ սկսել են այդտեղ տեղափոխել քոչվոր ցեղերի մի զանգված, որն այսօր կոչվում է ադրբեջանցի: Ստալինի հանձնարարությամբ և հրեաների ձեռքով այդ եկամուտ ժողովրդի համար թխվեց հազարամյակների խորքը թափանցող մի պատմություն, որում ամեն ինչ կա, բացի այդ ժողովրդի պատմությունից: Իրականում Արևելյան Անդրկովկասում ադրբեջանցի կոչվող ժողովրդի պատմությունը սկսվում է Նադիր շահի օրերից: Բոլոր վերագրումները այդ թխված պատմության մեջ հոդս են ցնդում, երբ մոտենում ենք պատմական բուն իրողություններին: Այնպես որ, անհիշելի ժամանակներից մինչև 1988 թվականը ողջ Արևելյան Անդրկովկասը էթնիկական ինչպիսի տեղաշարժերի էլ ենթարկվել է, այնուամենայնիվ, որպես անկողոպտելի ժառանգություն մնացել է հայրենիք նաև հայերի համար:

Ի սկզբանե հայերի տեսակարար կշիռն այնքան մեծ է եղել այդ երկրատարածքում, որ հնագույն ժամանակներից մինչև արաբական տիրապետությունը Անդրկովկասում, Կովկասյան լեռնաշղթայի արևելյան հատվածի ամրությունների պաշտպանությունը հյուսիսային ցեղերից իրականացրել են հայերը, և դրա համար հայերին վարձատրում էին ժամանակի գերտերություններ Պարսկաստանն ու Բյուզանդիան: Հայերը մինչև 1988 թվականը այդ ընդհանուր հայրենիքի մեջ դեռևս մնում էին երկրորդ էթնիկական միավորը իրենց թվաքանակով:

Դրությունն սկսեց փոխվել 11-րդ դարից, երբ պարսկաթուրանական հազարամյա մրցակցության մեջ Պարսկաստանը պարտվեց, և թուրքական ցեղերի առաջ բացվեց Արևմուտքի ճանապարհը: Դարեր տևած այդ վայրիվերումների հետևանքով Արևելյան Անդրկովկասի տափաստանային շրջանները վերածվեցին անմարդաբնակ անապատների, իսկ տեղաբնիկները, հարկադրաբար քաշվելով լեռնային շրջանները, ապահովեցին իրենց հարատևումը: Եվ քանի որ իրար հերթափոխող բոլոր նվաճողներն էլ քոչվոր անասնապահներ էին, իրենց հետևից չթողեցին ո՛չ էթնիկական և ո՛չ էլ մշակութային նկատելի նստվածք. հերթական նվաճողը դուրս էր մղում նախորդին և տեղն ինքը զբաղեցնում սեփական հոտերով: Սեֆյան Պարսկաստանի և Թուրքիայի երկուհարյուրամյա հակամարտությունը Անդրկովկասին տիրելու համար, նրանց բորբոքած անընդմեջ պատերազմները ևս ավերածություններ գործածելուց բացի ուրիշ վերափոխումներ չմտցրեցին այնտեղ, մանավանդ էթնիկական տեղաշարժերի իմաստով: Այնպես որ, մինչև Պետրոս Առաջինի Կասպիական արշավանքը ադրբեջանցի կոչվող ժողովուրդն աննշան և ոչ մշտակյաց տարր էր երկրատարածքում:

18-րդ դարի 20-ական թվականներին պարսկական տիրապետության դեմ բարձրացրած հայ-վրացական ազատագրական շարժումը և դրան շաղկապված ռուսական հարավային ներթափանցումը հարկադրեց Պարսկաստանին՝ այդ տարածքների էթնիկական նվաճումը դարձնելու պետական քաղաքականության առաջնահերթ խնդիր: Առաջին օրինակը տվեց Նադիր շահը՝ երկրատարածք տեղափոխելով քոչվոր ցեղերի: Պարսկական իշխանությունները Պարսկաստանի խորքերից, Իրաքից և այլ տեղերից տեղափոխեցին ու մերձարաքսյան անմարդաբնակ տափաստաններից մինչև Թբիլիսիի մատույցները տեղավորեցին մի շարք թուրքալեզու քոչվոր ցեղերի, որպեսզի խափանեն հայ-վրացական ազատագրական շարժումները: Այդ ցեղերի՝ Պարսկաստանից կատարվող ներհոսքը, ինչպես նաև նրանց նստակեցության անցնելն ավարտվեց միայն մեր դարի 50-ական թվականներին: (Ադրբեջանցիների վերջին ներհոսքը եղել է 1954 թ., երբ պարսկական կառավարությունը ճնշեց բուն Ադրբեջանում ծագած ապստամբությունը: Իսկ 1959 թ. մար-

դահամարում դեռևս նշվում էր, թե Ադրբեջանի բնակչության որ մասն է նստակյաց, որը՝ քոչվոր):

Իսկ թե պարսկական վարչակարգին համարյա մեկ հարյուրամյակում ինչ ծավալով է հաջողվել Անդրկովկասի էթնիկական նվաճումը, երևում է Ապշերոնյան թերակղզուց և Բաքվից: 18-րդ դարի սկզբներին այդ համարյա անմարդաբնակ տարածքը Ռուսաստանի երկրորդ նվաճման ժամանակ ուներ ընդամենը 1500 ծուխ ազգաբնակչություն, որից 500-ը՝ Բաքվում[1]:

Այսօր դեռ հարց է՝ ովքեր են ավելի առաջ տիրացել Բաքվին՝ ռուսնե՞րը, թե՞ ադրբեջանցիները, և ինչքանո՞վ է Բաքուն ադրբեջանական հայրենիք:

Ինչքան էլ խոշտանգված ու ավերակված, այնուամենայնիվ, 18-րդ դարի առաջին կեսին Արևելյան Անդրկովկասը, փոքր քանակությամբ թուրքալեզու քոչվոր ցեղերի առկայությամբ, դեռևս մնում էր հայերի և մյուս տեղաբնիկ ժողովուրդների հայրենիք, որի բնակիչները ամրացած էին շատ թե քիչ ապահով լեռնային ու կիսալեռնային շրջաններում:

Իսկ ի՞նչ էր ներկայացնում այդ հայրենիքը հայկական էթնիկական տարրի առումով: Հարցի պատասխանը տալիս են ժամանակին ստեղծված պատմական վավերագրերը, որոնց հաղորդած տվյալների նկատմամբ կասկածներ լինել չեն կարող, որովհետև այդ դարաշրջանում իրողությունները դեռևս կոչվում էին իրենց անուններով, մանավանդ որ այն ժամանակ նավթի հոտը դեռևս չէր գրգռում աշխարհն իրենց բուռը հավաքել ցանկացող հզոր երկրների ախորժակը, որպեսզի ամեն ինչ շուռ տան գլխիվայր:

Այդպիսի վավերագրերից առաջինը հայ ազատագրական շարժման ռահվիրա Իսրայել Օրու 1699 թ. սեպտեմբերի 22-ի թվակիր զեկուցագիրն է Եվրոպայի տիրակալներին՝ նրանց օգնությամբ Հայաստանը պարսկական տիրապետությունից ազատագրելու ծրագրով: Այդ զեկուցագրից պարզ երևում է, թե աշխարհագրական ինչ տարածք էր ընկալվում որպես Հայաստան և ինչ հարաբերակցության մեջ էին այդ տարածքի հայ և մահմեդական (ընդհանրապես մահմեդական և ոչ ադրբեջանական) էթնիկական միավորները: Այդ փաստաթղթում Օրին տեղեկացնում է, թե Կասպից ծովից «դուրս կգանք մի նավահանգիստ, ուր ամբողջ շրջանում չկան ո՛չ քաղաք և ո՛չ էլ գյուղեր: **Այդ տեղը տասը մղոնով է հեռու Բաքվից, ուր կան երկու գեղեցիկ շատրվաններ... Այդտեղ է**

1 Օրոգրենիե ռուսսկոյե վլադենիե զա Կավկազոմ, չաստ 4, 1836, ստ. 39-40:

ահա Հայաստանի սահմանագլուխը»: Այնուհետև առաջ անցնելով՝ շարունակում է. «Հարուստ և առևտրական քաղաք է Շամախին: ...Մենք այնտեղ ունենք յոթը հայ ծխական համայնքներ և քաղաքի բոլոր վաճառականները և առևտրականները հայ են: Հենց որ նրանք տեսնեն ծածանելիս ձեր կայսրընտրիչ բարձրության դրոշակները..., անմիջապես դուրս կգան այդ քաղաքից տասը հազար հայ մարդիկ, ամենքն էլ հեծյալ, կազմ ու պատրաստ... **Ահա առաջին մուտքը Հայաստան, որ սկսվում է Շամախուց:... Պարսկաստանի թագավորությունը - դա Հայաստանի թագավորությունն է ներս մտնելիս»»**[2]:

Ուշագրավ է, որ պարսկական առաքելությունից վերադարձի ճանապարհին Օրին Ղուբայի խանության Նիզաբադի տարածքում երեք կամուրջ է կառուցել և վանքի հիմքեր դրել՝ առաջիկա ռուսական առաջխաղացման ժամանակ նրանց երթուղին դյուրացնելու հեռանկարով: Նիզաբադը փաստորեն Օրու ներկայացրած Հայաստանի հյուսիս-արևելյան ծայրակետն է: Այդտեղ նույն նպատակով վանք կառուցելու հարցը երկրորդ անգամ ցարին է ներկայացրել Օրու զինակից Մինաս վարդապետը 1714 թվականին[3]:

Այնուհետև Օրին ներկայացնում է Արևելյան Հայաստանի նահանգները մինչև Երևան՝ յուրաքանչյուրի դիմաց նշելով, թե ինչքան զինվոր կարող է տրամադրել ազատագրական պայքարին: Ստացվում է 192 հազար մարդուց կազմված մի բանակ այն դեպքում, երբ նույն տարածքից պարսկական տիրողները կարող էին դուրս բերել ընդամենը 48 հազարանոց մահմեդական զորք: Վիճակագրական ուղղակի տվյալների բացակայության դեպքում թվերի այս հարաբերակցությունն է միակ չափա-

2 Լեո, Երկերի ժողովածու. հ. III, 1973 թ., էջ 51, 53 և հետագա:

3 Տես՝ Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հատ. 2, 1959 թ., էջ 613-614:

Արդյոք ռուսական առաջխաղացումը արագացնելու այս հետևողական ջանքերը չե՞ն Աստրախանում Օրու առեղծվածային մահվան պատճառը: Ռուսաստանը դեռ պատրաստ չէր հարավային ծավալման համար, իսկ անհապաղ գործողության դիմելու Օրու համառ պահանջի մերժումը, մանավանդ շվեդական պատերազմից հետո Օրու ծրագիրը իրականացնելու Պետրոս Մեծի տված խոստումից հետո, կլիներ քաղաքական անհեռատեսության, հայերին հուսախաբ անելու ակտ: Ամենահեշտը գաղափարը փրկելու համար գաղափարակիրին լռեցնելու՝ հազարամյակներով արդարացված միջոցն էր: Այլապես միամտություն է կարծել, թե ռուսական որևէ չինովնիկ, թեկուզև թալանի մոլուցքով բռնված, կհանդգներ ցարի դեսպանին, այն էլ Պետրոս ցարի դեսպանին թունավորելով վերացնել:

նիշը դրանց կրող տարրերի թվաքանակը որոշելու համար, այսինքն՝ 192 և 48 հարաբերակցությամբ էին հայերն ու մահմեդականները:

Ժամանակակից Ադրբեջանի տարածքի հաշվով Շամախի քաղաքը, որ «մեծ է ինչպես Կյոլնը» (Քյոլնը), կարող է տալ տասը հազար զինվոր, չհաշված այն 60 հայկական գյուղերը, որ գտնվում էին Շամախու խանության մեջ: Շաքիի (Նուխու) խանությունը, որտեղ «շատ քիչ են թուրքերը», կարող է տալ «սկզբում տասը հազար զինվոր», Գանձակը՝ 15000, Քաշաթաղը (ժամանակակից Լաչին-Քարվաճառը)՝ 10000, Զագամը (ժամանակակից Ղազախ-Թռուզի շրջանները)՝ 5000, Վարանդան՝ 6000, Մեծ Ղափանը (ժամանակին այդպես էր կոչվում Ղարաբաղի հիմնական մասը)՝ 60000 զինվոր: Ընդամենը 116000 զինվոր այն դեպքում, երբ նույն տարածքի պարսկական խանություններից միայն Շամախու և Գանձակի խանություններն էին պարտավոր կառավարությանը զորք տրամադրելու, ըստ որում Շամախին՝ 10000, իսկ Գանձակը՝ 5000 զինվոր: Ընդամենը 15000 զինվոր: Թվերի այս հարաբերակցությունը՝ 116 և 15, ցույց է տալիս, որ 18-րդ դարի սկիզբն Արևելյան Անդրկովկասը ժամանակակից Ադրբեջանի համապատասխան տարածքով, որն այն ժամանակ ընկալվում էր Հայաստանի մաս, ուներ բնակչության մի կազմ, որի 87%-ը հայեր էին, 13-ը՝ մահմեդականներ:

Որ Օրին չափազանցված թվեր չէր բերում հայերի թվաքանակի հարցում, երևում է հետագա բազմաթիվ վավերագրերից: Այսպես, Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսի 1722 թ. օգոստոսի 18-ի մի նամակից իմանում ենք, որ միայն ապստամբած Ղարաբաղն ուներ 40000-անոց զինված մարտիկներ և այդքան էլ ընդունակ էր զինելու, եթե Պետրոսի պարսկական արշավանքը իրականանա[4]: Իսկ 1724 թ. Պետերբուրգ ուղարկված դարաբաղյան պատվիրակությունը ցարին տեղեկացնում էր, որ միայն Ղարաբաղն ունի 100000 ծուխ ազգաբնակչություն[5]:

Եթե իր հաշվարկներում Օրին թույլ է տվել սխալ, ապա սխալվել է մահմեդականների հարցում: Ժամանակի պետական-պաշտոնական փաստաթղթի՝ «Թաղքիրաթ-ալ-մուլուքի» տվյալներով 17-րդ դարի վերջում և 18-րդ դարի սկզբում Անդրկովկասի հայաբնակ գավառներ ունեցող տարածքը բաժանված էր երեք բեկլերբեկությունների, որոնք

4 Լեո, նշված աշխատությունը, էջ 131:
5 Լեո, նշված աշխատությունը, էջ 162:

պատերազմի դեպքում պարտավոր էին տալ հետևյալ քանակով զինվորներ: Չուխուր-Սաղ (Երևան)՝ 4297, Ղարաբաղ՝ 6084, Շիրվան՝ 5856: Ստացվում է 15,227 զինվոր՝ Օրու հաշվարկով 48 հազարի փոխարեն[6]:

Օրու կազմած վիճակագրությամբ ահա այսպիսին էր իրերի դրությունը Պետրոս Առաջինի Կասպիական արշավանքից առաջ. ժամանակի ընթացքում Պարսկահայաստանում՝ Շամախուց մինչև Երևան 192000 պոտենցիալ հայ զինվոր, 48000 մահմեդական պոտենցիալ զորքի դիմաց, ժամանակակից Ադրբեջանի համապատասխան տարածքի առումով՝ 116000 պոտենցիալ հայ զինվոր, 15000 պոտենցիալ մահմեդական զորքի դիմաց:

Պետրոս Առաջինի Կասպիական արշավանքը աղետալի հետևանքներ ունեցավ Անդրկովկասի և առանձնապես հայության համար: Թուրքիայի հետ պատերազմելուց խուսափելով՝ Պետրոսը պարսկական տիրապետությանը ենթակա Անդրկովկասը, բացի Կասպիականի իր նվաճած ափերից, ճանաչեց թուրքական սեփականություն: Թուրքիան օկուպացրեց Անդրկովկասը: Առաջին հերթին շարքից դուրս եկավ Արևելյան Վրաստանը, որի Վախթանգ թագավորը դարձավ աստանդական՝ ի վերջո ապաստանելով Աստրախանում: Պարսկական տիրապետությունը թոթափած Ղարաբաղն ու Զանգեզուրը մնացին միայնակ թուրքական ագրեսիայի դիմաց:

Խնդիրը միայն ռազմական բախումներին կամ սովորական նվաճումներին չի վերաբերում: Հայերի ազատագրական պայքարն ու Ռուսաստանի հարավային ծավալումը ոտքի հանեցին մահմեդական աշխարհը, և սկիզբ դրվեց մինչ այդ անծանոթ մի քաղաքականության՝ հարցերի լուծում հայերին ֆիզիկապես ոչնչացնելու ճանապարհով: Իրար թշնամի, փոխադարձաբար իրար ոչնչացնող սյունի և շիա մահմեդականները՝ խմբավորված իրար թշնամի երկու հզոր պետությունների՝ Թուրքիայի և Պարսկաստանի մեջ, որ մինչ այդ իրարից խլում էին հայերին որպես իրենց կերակրող և երկիրը շենացնող աշխատավոր մի զանգվածի, հայերին ոչնչացնելով հարցը լուծելու գործում ընդհանուր համաձայնության եկան և այն դարձրին պետական քաղաքականություն:

Ահա մի քանի վկայություններ այդ ժամանակների վավերագրերից:

6 Տես՝ Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Ե., 1972, էջ 253:

Արևելյան Անդրկովկաս ռուսների ներթափանցման առնչությամբ երգրումի փաշան սպառնագիր է ուղարկում հայոց կաթողիկոսին. «Դու էլ շատ մեղավոր ես, որ միացել ես ռուսներին, որոնց օգնելու համար ոտքի ես կանգնեցրել քո հայերին; Ասում են, թե 60000 կատարելապես զինված հայերը քո խոսքով վեր են կացել: Դու էլ շատ նեղություն կքաշես, որովհետև ուզում ես ռուսներին ձեր այդ երկրով բերես մեր երկիրը»: Սա թուրքական կողմը: Իսկ Երևանի Մուհամմեդ-Ղուլի խանը՝ Կախեթի ուրացող Կոստանդին թագավորը, ծերբակալում է կաթողիկոսին նույն մեղադրանքով և շուտով ազատում՝ գրպանելով մեծագումար կաշառք[7]:

Անդրկովկաս ներխուժած թուրքական զորքերի մի միավորում պարտություն է կրում Ղարաբաղում: Գերի ընկած թուրք փաշան խոստովանում է. «Մեր թագավորն հրաման է արարյալ, որ պիտի մեք այս երկրներիս հայն և ղզլբաշն փուչացնենք, չուն որ ըռուս թագավորի զորքն ծովի այս կողմս են անցել, մեք նոցա վերա պիտի գնամք. հայն այս մեջս չպիտի և այս երկրներս խարապ պիտի լինի, որ մեր ճանապարհն բացուի: Նաև ասաց փաշան, թե **դուք չէիք այս միջումս՝ մեք հիմա Դարպանդու և Պաքու վերա էինք գնացել,** որ դատիմի մերն է»[8]:

Ուղիղ երկու հարյուր տարի հետո, 1918 թ., թուրքական մի այլ զինվորական նույն Ղարաբաղում նույն խոսքերն է ասել Բաքվի կոմունայի դեմ արշավող թուրքական զորքերի մասին:

Անդրկովկասը նվաճած թուրքական զորքերն իրենց վասալ կովկասյան ժողովուրդների հետ մեկտեղ աղետալի ավերածության են ենթարկում Կովկասյան լեռների հարավային փեշերից մինչև Քուռ գետը: Դեպքերի ականատես Մարտիրոս վարդապետը այդ ամենի մասին գրում է Աստրախանում ապաստանած Վախթանգ թագավորին՝ նրա միջոցով ակնկալելով ռուսական օգնություն: «Առաջ Շամախին... չափմիշ արարին: ...Ղարասովի գեղերանք թուրքացրին: Շաքուա երկրի գեղերանք ևս թուրքացրին: ...Միայն Մսկուրու երկիր էր մնացել, զնա ևս քանդեցին, ավերեցին... Այս տաճկաց ֆիքրը այլ իմն է... գրում են, թե միավորվեցեք, եկեք դուրս գողմից, մեք մեջ գողմից, այս կեավուրներ վեր առնենք, փուչացնենք, տինը իալամ դառնայ... Իրյանք մեկն զմեկին ասում են, թե այս գեղիս կեավուրներ փուչացնենք, որ սարը կեավուր (ռուսները Ա.Հ.) գալիս այս կեավուրներ կու քանդեն մեր երկիր և գեղերանք»[9]:

7 Լեո, նշված աշխատությունը, էջ 137, 211:
8 Լեո, նշված աշխատությունը, էջ 166:
9 Լեո, նշված աշխատությունը, էջ 214:

Իսկ Պարսկաստանում իշխում էր այն մտայնությունը, թե «եթե չլինեին մեր մեջ հայերը, եթե ականատես չլինեին նրանք մեր գործողություններին ու չիմանային մեր լեզուն, մենք վաղուց ջարդած կլինեինք ռուսաց զորքերին»: Ահա թե ինչ է գրում Պետրոս դի Սարգիս Գիլանենցը պարսիկների տրամադրությունների մասին. «Ասում ան թե Հայքն թամամ ջարդրել պիտի, որ ես երկիրն վարքարաֆ արարին. էսպես որ Ըռուստն բերին կոխեցին ղզլբաշի երկիրն, Աղվանն տարան Ըսպահան»:

Եվ այսպես, 18-րդ դարի 20-ական թթ. սկիզբ է դրվում հայերի ցեղասպանությանը Արևելյան Անդրկովկասում, որը դանդաղ գործողությամբ շարունակվում է մինչև հիմա՝ հայության հայրենիքը հետևողականորեն դարձնելով «Ադրբեջան»:

Պատմական երկարատև այս ողբերգության մեջ մեղքի ու պատասխանատվության իր պատկառելի բաժինն ունի նաև ռուսական պետական քաղաքականությունը՝ սկսած Պետրոս Առաջինից մինչև Գորբաչով:

Տրամագծորեն այլ հարց է, որ հայ ժողովրդի օրհասական պահերին ռուսական դեմոկրատիայի լավագույն ներկայացուցիչները՝ սկսած դեկաբրիստներից մինչև Բրյուսով, մինչև մեր օրերի առաջավոր մտավորականները, միշտ էլ կանգնած են եղել մեր կողքին, միշտ էլ իրենց արդար ձայնն են բարձրացրել մեր նկատմամբ կատարվող վայրագությունների դեմ: Այլ հարց է նաև հայերի ռուսական կողմնորոշումը, այդ կողմնորոշման պատմականորեն հաստատված անդառնալիությունը այն աստիճանի, որ դեռևս 19-րդ դարի 50-ական թվականներին Ստեփանոս Նազարյանը բանաձևեց, թե հայերը քաղաքականապես ռուս ժողովուրդ են: Այլ հարց է, որ ռուսական կայսրության մեջ հազիվ թե ծարվի մի այլ ժողովուրդ, որ հայերի չափ անձնվիրաբար մասնակցած լինի առաջավոր Ռուսաստանի համար մղվող պայքարին՝ համոզված, որ ինչքան առաջավոր, զարգացած ու դեմոկրատական լինի Ռուսաստանը, այնքան դրանից կշահի նաև հայ ժողովուրդը: Այսօր էլ հայ ժողովուրդը ստեղծված քաղաքական բարդ իրավիճակում կանգնած է նույն դիրքերում և Ռուսաստանից է սպասում իր ազատության ու անվտանգության երաշխիքը:

Մի կողմ դնենք այն իրողությունը, որ հայերի ռուսական կողմնորոշումը, հայ և ռուս քաղաքական ու զինական մերձակցությունը օբյեկտիվորեն հարվածի տակ էր դնում պարսկական ու թուրքական տիրապետություններին ենթակա հայությանը՝ որպես թշնամական մի տարր այդ պետությունների համար: Դրան գումարվում է նաև կայսերապետական Ռուսաստանի որդեգրած երկդիմի քաղաքականությունը:

Պետրոս Առաջինը ապստամբության մղեց հայերին ու վրացիներին, Անդրկովկասը սեփական մասնակցությամբ ազատագրելու խոստումով հասավ Դերբենդ ու վերադարձավ՝ դուռ բացելով թուրքական ագրեսիայի առաջ՝ իր ծանրագույն հետևանքներով: Պետրոսին զինակցելու հայ-վրացական միացյալ ուժերին զուգահեռ բուն Պարսկաստանից Սարգիս Դը Գիլանենցը սեփական ծախսերով կազմակերպեց հայ երիտասարդների մի գորաջոկատ՝ «Հայկական էսկադրոնը», և միացավ ռուսական գործող բանակին: Արդյունքում Անդրկովկասը Ռուսաստանի կողմից ճանաչվեց թուրքական սեփականություն:

Ուղիղ 100 տարի ցարական արքունիքը բոլոր միջոցներով խրախուսում ու հուսադրում էր ազատագրական պայքարի դրոշ պարզած Ղարաբաղին, քաղաքական ազատության ու անկախության խոստումներով բարձրացնում նրա հերոսական տրամադրությունը: Բայց երբ 1805 թ. գրավեց Ղարաբաղը, «մոռացավ», որ դրանից վեց տարի առաջ ևս կայսերական հատուկ հրովարտակով մի վերջին անգամ Ղարաբաղը ճանաչել էր մելիքական սեփականություն, և այն հանձնեց մի եկվոր նվաճողի, որի դեմ դարաբաղցին անընդմեջ պայքարել էր, ու այդ պահին էլ հայ մելիքական զորաջոկատները ռուսական զորքերի հետ կռվում էին Ռուսաստանի շահերի համար: Իսկ ի՞նչ էր ստանում 100 տարի ռուսական շահերի համար արյուն թափած դարաբաղցին: Պատասխանը տալիս է ոչ անհայտ Ցիցիանովը Քյուրուքչայի դաշնագրի առիթով 1805 թ. մայիսի 14-ին Ալեքսանդր կայսեր գրած զեկուցագրում: «Այստեղ ես չեմ կարող... լռության տալ մի անցք, որ տեղի ունեցավ: ...Խանը... ուղարկեց ինձ հիշյալ Մելիք Ջումշուդի որդուն 11 տարեկան և 13 տարեկան թոռանը, որոնք 10 տարի բաժանված էին նրանից: Նրանց ես... հանձնեցի հորը և տեսա, թե ինչպես նա չէր կարողանում շնորհակալության արտասուքից մի բառ անգամ արտասանել, ինչպես և... այս տեսարանի վկաներից ոչ ոք չկարողացավ պահել իր արտասուքները»[10]:

Իրոք ողբերգական իրականություն: Կայսրության շահերի համար, կայսրության հրահրմամբ հարյուրամյա թափած արյան դիմաց երկու երեխայի ազատություն տասնամյա գերությունից, իսկ ազատության համար մարտնչող ժողովրդի վզին թուրք նվաճողի լուծ՝ իր բոլոր հետևանքներով:

Անդրկովկասը վերջնականորեն նվաճած Նիկոլայ Առաջինը Պարսկաստանից ներգաղթեցրած հայերին Պարտավից մինչև Երևան տեղավորելով՝ ընդունեց այդ տարածքների հայկականությունը: Սակայն այնպիսի վարչատարածքային բաժանումներ կատարեց Անդրկովկասում, որ ըստ էության Արևելյան Հայաստանը բաժանվեց մի քանի անհավասար մասերի և պաշտոնապես ուրացվեց միասնական Արևելահայաստանի իրողությունը: Ավելին: Արևելյան Անդրկովկասում մահմեդական տարրը մեծացնելու և ուժեղացնելու նպատակով ցարիզմը ոչ միայն Պարսկաստան փախած մահմեդական զանգվածներին վերադարձրեց նախկին տեղերը, այլև ամեն կերպ սիրաշահում էր նրանց, պայմաններ ստեղծում նոր ներթափանցումների համար: Դրա վկայություններից մեկն էլ Նիկոլայ Առաջինի 1846 թ. դեկտեմբերի 6-ի հայտնի հրովարտակն է, որով երկրատարածք մտցնելով ճորտատիրության ռուսական համակարգը՝ հիմքում դնում էր նաև այսպիսի պահանջ. «Մեր այս հրովարտակով հողատերերի վրա տոհմականորեն հաստատված հողերն իրենց բոլոր պատկանելիքներով ու հողատեսքերով հողատիրոջ լիակատար սեփականությունն են կազմում: ...Նրանք այդ հողերը կարող են ժառանգություն տալ, նվիրել, վաճառել և այլ կերպ օտարել՝ պայմանով սակայն, որ **այդ հիմքով կայք ձեռք բերող անձերը Անդրկովկասի մուսուլմանական բարձր դասին պատկանեն: ...Անդրկովկասի մուսուլմանական բարձր դասը՝ ապահովված ապրուստի միջոցներով... միշտ պատրաստ պիտի լինի մեր քաջարի ռազմիկների շարքերն անցնելու և նախանձախնդրությամբ ու եռանդագին կատարելու այդ դասի վրա դրվելիք պարտականությունները»**[11]:

Ինչպես տեսնում ենք, երեք հզոր տերությունների հակադիր շահերի խաչաձևումը հիմք դարձավ պատմական իրադարձությունների հետագա զարգացման համար: Մեզ մնում է հետևել իրադարձությունների ընթացքին՝ տեսանելի դարձնելու հայկական մարզերի ադրբեջանականացման պատկերը Արևելյան Անդրկովկասում՝ ըստ ժամանակի վարչատարածքային բաժանումների:

1724 թ. թուրքական արշավանքից ամենից շատ տուժեցին Նուխու (Շաքիի) խանությունն ու հարակից շրջանները: Թուրքերը Նուխու խանության և Ղարասովի շրջանի հայության հիմնական զանգվածներին բռնի մահմեդականացրին՝ հիմք դնելով էթնիկական հարաբերակցության փոփոխության: Իսկ նրանց կովկասյան վասալները ոչնչացրին

10 Լեո, Երկերի ժողովածու, հ. IV, 1984 թ., էջ 256:

11 Խ. Ավդալբեգյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում, Ե., 1959, էջ 66-67:

Մսկուրի շրջանի 12 հայկական գյուղեր՝ բնակչության մնացորդներին ենթարկելով բռնագաղթի:

Եթե Իսրայել Օրու հաշվումով Նուխու խանությունը հայերի ազատագրական պայքարին կարող էր տալ 10000 զինվոր և ուներ շատ քիչ մահմեդական ազգաբնակչություն, ապա 1916 թ. ցարական վիճակագրական տվյալներով այն ներկայացնում էր հետևյալ պատկերը՝ բաժանված երկու վարչական միավորների՝ Նուխու և Արեշի գավառների: 1916 թ. այդ գավառներում կային 44921 հայեր, 27530 շիա մահմեդականներ և 188523 սյունի մահմեդականներ:

Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցի հաշվումներով՝ 20-րդ դարի շեմին բռնի մահմեդականացված հայերը կազմում էին 15480 ծուխ: Այս սյունի մահմեդականները բռնի թուրքացված հայերի հետնորդներն են, որոնք 19-րդ դ. կեսերին փորձեցին վերադառնալ իրենց ազգային ակունքներին, բայց արդեն ուշ էր: Եվ եթե փորձենք ճշտել Օրու ժամանակի հայերի ու մահմեդականների էթնիկական հարաբերակցությունը, պետք է վերցնենք հայերի ու սյունի մահմեդականների թվաքանակը և համեմատության մեջ դնենք շիաների հետ, այսինքն՝ 232, 444 և 27530 հարաբերակցություն՝ տեղափոխված 200 տարի հետ: Ստացվում է, որ 18-րդ դարի սկզբին Նուխու խանության բնակչության 88 %-ը հայեր էին, 12%-ը՝ մահմեդականներ: Իսկ 200 տարի անց հայ-մահմեդական հարաբերակցությունը նույն տարածքում 79 և 21 % էր՝ հօգուտ մահմեդականության: Այսպիսով, Նուխու խանության մեջ հայերի ցեղասպանության առաջին էտապում հիմնովին փոխվեց էթնիկական հարաբերակցությունը, և հայերը դարձան ազգային փոքրամասնություն: Նույն տարածքում հայերի ցեղասպանության երկրորդ էտապն սկսվեց ցարիզմի հրահրած հայ-թուրքական ընդհարումներով (1905-1906 թթ.) և վերջացավ խորհրդային կարգերի հաստատումով: Այդ ընդհարումների ժամանակ մեծապես տուժեց Արեշի գավառի հայությունը՝ ոչ միայն զրկվելով ունեցվածքից, այլև տալով բավականին մեծաքանակ զոհեր: Իսկ 1918 թ. դեպի Բաքու թուրքական արշավանքի ժամանակ տեղի ունեցավ հայերի երկրորդ մեծ աղետը: Թուրքերը ոչ միայն անխնա ոչնչացնում էին հայերին, այլև խորհրդային կարգերի հաստատումից հետո էլ թուրքական յաթաղանից փախուստով փրկված հայերին արգելվեց վերադառնալ հայրենական օջախներ, և երկրատարածքում մնացին հայերի միայն այն բեկորները, որոնք պատսպարվել էին մոտակա անտառներում ու ձորերում: 1926 թ. մարդահամարով մի տասնամյակ առաջ եղած

շուրջ 45000 հայերից արձանագրվում է միայն 4004 մարդ: Այդ վիճակը ևս չբավարարեց Ադրբեջանի բոլշևիկյան կառավարությանը: Եվ նա հիդրոկայանի կառուցման համար ընտրեց հատկապես Մինգեչաուրը, ցրամբարի տակ դրեց հեղափոխությունից առաջ Արեշի գավառի 18 հայկական գյուղերից կանգուն մնացած 5 գյուղերը, որոնք Ղարաբաղի հետ կազմում էին մի միասնական էթնիկական տարածք՝ վերջնականապես լուծելով նախկին Արեշի գավառի ադրբեջանականացման հարցը: Ադրբեջանի ինտերնացիոնալ-շովինիստական քաղաքականության պայմաններում գոյատևող հայության վերջին բեկորներն էլ նախկին Նուխու գավառում վերջնականապես հայազրկվեցին գորբաչովյան վարչակարգի հրահրած հայ-ադրբեջանական հակամարտության հետևանքով:

Այսպիսով, հայոց երբեմնի Կամբեջան նահանգը, պարսկական տիրապետության ժամանակներից Նուխու (Շաքիի) խանության վերածված, 18-րդ դարի սկզբին դեռևս 88 %-ով հայկական էր, որը շուրջ 300-ամյա անհավասար մաքառումների արյունոտ ճանապարհին 1988 թ. վերջնականապես հայազրկեցին՝ դարձնելու համար ադրբեջանական հայրենիք: Շամախին, Քաշաթաղը, Զագամը և Արևելյան Անդրկովկասի մյուս հայկական տարածքները ևս տարբեր ժամանակներում ու տարբեր ձևերով ենթարկվեցին նույն ճակատագրին: Բավական է նշել, որ թուրքական ավերածություններից ընդամենը 10 տարի հետո Նադիր շահն է ռազմակալում Անդրկովկասը, «իսպառ կործանում Շամախի քաղաքը և 700000 գերի տանում Պարսկաստան Աղվանից երկրի հայերից ու վրացիներից»[12]:

Ինչպես ցույց է տալիս իրադարձությունների զարգացման շղթան, սա պատմություն չէ սովորական իմաստով, այլ տևականորեն շարունակվող մի իրողություն, մի երկարատև պատմական ողբերգություն, որի վերջը դեռևս չի երևում:

Հանրահայտ է, որ շնորհիվ առաջին հերթին իրենց աշխարհագրական դիրքի, ընդհանուր վայրիվերումների մեջ իրենց դիմադրողականությամբ առանձնացան Ղարաբաղն ու Գանձակը՝ դառնալով Արևելյան Անդրկովկասի հայության միջնաբերդը: Ճիշտ է, այդ մարգերի տափաստանային շրջանները դարձան անմարդաբնակ անապատներ, որոնց վերաբնակեցումը դեռևս չի ավարտվել, բայց լեռնային շրջաններում էլ ձևավորվեց խտաբնակ մի զանգված, որն ընդհուպ մինչև 1988 թ. ամուր

12 Տե՛ս Մակար եպս. Բարխուդարյան, Աղվանից երկիր և դրացիք, Արցախ, Ե., 1999, էջ 56 և 87:

կանգնած էր հայրենի հողին: Բավական է նշել, որ հետպետրոսյան հարյուրամյակում Պարսկաստանի կողմից կիրառվող էթնիկական նվաճման քաղաքականությունը չկարողացավ այդ հարցը լուծել հօգուտ մահմեդականության: Նույնիսկ խանական կենտրոնում՝ Գանձակում, հասան միայն այն բանին, որ հավասարվեց հայերի ու մահմեդականների թիվը: Երբ 1805 թ. ռուսները նվաճեցին Գանձակը, այնտեղ կար 2232 հայ և 2350 մահմեդական՝ պարսիկներ, քրդեր, թուրքեր և այլն:

Դրությունը խստագույնս ծանրացավ բոլշևիկների տիրապետության օրոք՝ Ադրբեջանի մարտնչող շովինիստական քաղաքականության հետևանքով: Լենին-Աթաթուրք գործարքով Ադրբեջանին նվիրված հայկական այս մարզերը դարձան տնտեսական, քաղաքական, բարոյահոգեբանական սանձարձակ հալածանքների թիրախ, որպեսզի հայությանը այստեղից ևս դուրս մղեն: Յոթանասունամյա անլուր հալածանքների շնորհիվ այդ մարզերի հայ բնակչության մի մեծ մասը հարկադրաբար ապաստան գտավ Միության այնպիսի տեղերում, ուր հնարավոր էր ունենալ կայուն աշխատանք և ապահով կյանք:

Պատկերացնելու համար, թե պատմության համար մի կարճ ժամանակահատվածում ինչ չափերի է հասել հայերի ցեղասպանությունը չդադարող հալածանքների պատճառով, հիշատակենք մի փաստ միայն: **1724 թ. Ղարաբաղը ուներ 100000 ծուխ հայ բնակչություն, իսկ 1926 թ. մարդահամարի ժամանակ նույն տարածքում մնացել էր ընդամենը 111000 հայ: Այսինքն՝ աճելու փոխարեն երկու հարյուր տարվա ընթացքում յուրաքանչյուր ծխից մնացել էր միայն մեկ մարդ,** իսկ մյուսներն իրենց բնական աճով հարկադրված են եղել ապաստան գտնել Ղարաբաղից դուրս: Այս դժբախտ անհրաժեշտության առաջին օրինակը՝ տվեց Ղարաբաղի՝ ազատագրական պայքարի առաջնորդներից մեկը՝ Ավան Յուզբաշին՝ 1729 թ. անցնելով ռուսական տիրապետության սահմանները:

Հայտնի է նաև, որ մինչև 1988 թ. իրադարձությունները միայն Ղարաբաղն ուներ տարբեր ժամանակներ արտագաղթած և ռուսական կայսրության բոլոր հորիզոններում ապաստանած մեկուկես միլիոն հայեր: Դրան գումարվեց 1988 թվականով սկսված շուրջ մեկ միլիոնանոց հայերի բռնագաղթը Ադրբեջանից: (Խորհրդային բոլոր մարդահամարների ժամանակ Հայկական Հանրապետությունից դուրս ապրող հայերի թվաքանակը հետևողականորեն կեղծվել է քաղաքական նկատառումներով: Ահա թե ինչու կրկնակի պետք է հաշվել հայերի այն թվաքանակը, որ ցույց է տրվում Ադրբեջանում՝ մարդահամարից մարդահամար):

Վերջապես հերթը հասնում է հեռավոր դարերի մշուշում իր պատմությունը թաղած Բաքվին, որը պարսկական տիրապետության տակ ընկնելով՝ վերածվել էր սահմանագլխային ամրոցի՝ հետագայում ռուսների ու հայերի տևական ջանքերով համաշխարհային հնչեղության քաղաք դառնալու համար: Հայտնի է, որ հզորացած Սեֆյան Պարսկաստանի կողմից նվաճվելու հետևանքով տեղի հայերի հիմնական զանգվածները ստիպված փոկություն են գտել Աստրախանում և այլ տեղեր: Այնուամենայնիվ, ռուսական ներթափանցումից առաջ Բաքվի ազգաբնակչության կեսը դեռևս հայերն էին: Ահա թե ինչ է գրում թուրք պատմիչ Ջևդեթը. «Սալյան և Բաքու քաղաքներում ապրում են 10 հազար տուն շիաներ և 10 հազար տուն հայեր»[13]: Երբ Ցիցիանովը փորձեց նվաճել Բաքուն, իր գլուխը թողեց բերդի պարիսպների տակ: Եվ տեղի հայերն էին, որ նրա անարգված դիակը աղբանոցից հանեցին և պահեցին իրենց Աստվածածին եկեղեցում: Իսկ երբ 1807 թ. ռուսները վերագրավեցին Բաքուն, այնտեղ կար ընդամենը 500 ծուխ ազգաբնակչություն, որից 70-ը հայեր: Այնպես որ, անհիշելի ժամանակներից մինչև ռուսական տիրապետության հաստատումը Անդրկովկասում Բաքուն հավասարապես եղել է հայ ազգաբնակչության հայրենիք, թեկուզ և եկվոր նվաճողները վերջին դարերում հայերին հասցրել էին ազգային փոքրամասնության վիճակին:

Ռուսական տիրապետության ընձեռած կյանքի և գույքի ապահովության բարենպաստ պայմանները, ինչպես նաև Բաքվի տնտեսական նշանակության աննախընթաց բարձրացումը հայերին նորից վերադարձնում են Բաքու և ռուսների հետ միասին քաղաքը դարձնում են այն, ինչ այսօր կա: Թե ինչ դեր են խաղացել ադրբեջանցիները Բաքվի տնտեսական ու կուլտուրական զարգացման գործում, խոսելն անգամ ավելորդ է: Նրանք չեն կարող մատնացույց անել իրար վրա դրված երկու քար, կամ գոնե մի արհեստանոց, էլ չենք խոսում արդյունաբերական ձեռնարկումների մասին, որ իրենց ձեռքի գործը լինի: **Բաքուն հայերի և ռուսների քաղաքն է՝ ինչ-ինչ ուժերի ձեռքով նվիրված ադրբեջանցիներին:**

Հայերի ցեղասպանության հետևանքով Բաքուն ադրբեջանականացավ երեք փուլով. 1905 թ. ցարիզմի հրահրած հայ- թուրքական ընդհարումով, 1918 թ. Բաքվի թուրքական օկուպացիայով, որի զոհը դարձավ 30000 հայ, 1988 թ. սկսված վերջնական հայաթափումով՝ բառիս բառարանային իմաստով մարդակերությամբ ուղեկցվող մեթոդներով ու գորբաչովյան վարչակարգի գործուն հրահրմամբ: Եվ եթե այսօր փոխադարձ գիջման հարց կա երկու ժողովուրդների միջև, այն պետք է սկսել Բաքվից և ոչ թե Արցախական աշխարհի բեկորներից:

Գորբաչովյան վարչակարգի հրահրած հայ-ադրբեջանական հակամարտությունը եկավ հարցը վերջնականապես լուծելու: Այն սկսվեց ոչ թե Ղարաբաղյան շարժումով, Աղդամով կամ Սումգայիթով, այլ Չարդախլուով, մարզի սահմաններից դուրս թողնված այն հռչակավոր գյու-

13 Տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին. հ. Ա, 1961, էջ 248:

ղով, որը պատերազմի ժամանակ տվել էր երեք մարշալ և մի քանի տասնյակ գեներալներ: 1987 թ. Չարդախլուին հարկադրեցին հարևան ադրբեջանական գյուղին զիջել 500 հեկտար հող: Մերժմանը հետևեց գյուղի դիմադրող կանանց ծեծը միլիցիայի ջոկատների կողմից՝ մի վերջին անգամ հաստատելով թուրքական սկզբունքը՝ հողը արյունով է նվաճվում:

Պատահական չէ, որ հայկական շրջանների հայաթափումն էլ սկսեցին մարզի կազմից դուրս թողնված հայկական շրջաններից, որոնց մեջ առաջիններից մեկն էր Չարդախլուն, լուծեցին պետական զորքերի ակտիվ մասնակցությամբ՝ հարկ եղած դեպքում գործողության մեջ դնելով զենքի բոլոր տեսակները: Ղարաբաղին փրկեց Գորբաչովյան վարչակարգի փլուզումը, որովհետև պետական զորքերն ու ծանր տեխնիկան ռուսական զենքի պատմության մեջ աննախադեպ քստմնելի մեթոդներով, ընդհուպ մինչև անմեղ քաղաքացիներին որսալով ու թուրքերին վաճառելով, սկսել էին նաև Ղարաբաղի հայաթափումը: Չգիտենք քանի դար պետք է անցնի, որ ռուսական զենքին Գորբաչովի ձեռքով քսված այդ ամոթալի սև բիծը մոռացվի:

Այսքանից հետո միայն ղարաբաղցին զենք բարձրացրեց՝ ապացուցելու, թե «այնտեղ է լոկ սխրանքն սկսվում, ուր վերջանում է ամեն մի հնար»: Ղարբաղցին զենք բարձրացրեց իր գոյության իրավունքը հաստատելու համար և հերոսաբար հաստատեց այն ու հաստատում է:

1988 թ. սկսված հերթական ցեղասպանության հետևանքով հայոց հինգհազարամյա հայրենիք, այսօր Ադրբեջան կոչվող երկրատարածքը, բացառությամբ Ղարաբաղի մի հատվածի, վերջնականապես զրկվեց հայությունից, զրկվեց հայերի նկատմամբ ամենավայրենի, ամենաբարբարոսական մեթոդների գործադրմամբ: Այսօր ո՞ւմ բաժին է դարձել հայոց երեքհազարամյա Բաքուն, ո՞ւմ բաժին է դարձել հռչակավոր Շամախին՝ իր շրջակա 60 հայկական գյուղերով, Նուխին՝ իր ոչ վաղ անցյալի 88% հայ բնակչությամբ, Գանձակը՝ իր 75% հայ բնակչությամբ, Զագամը՝ իր միատարր հայությամբ: Եվ այս ամենը կատարվել է նախ՝ պարսկաթուրքական, ապա՝ ցարաբոլշևիկյան կայսերապետական քաղաքականության շնորհիվ, որոնք հետևողականորեն ադրբեջանականացրին Արևելյան Անդրկովկասը՝ հայերի ու վրացիների ազատագրական ձգտումները ճնշելու համար քոչվորական վայրենի ուժը ծառայեցնելով իրենց շահերին:

Այս պատմական ողբերգության վերջին արարը կատարվեց մեր աչքի առաջ, կատարվեց Գորբաչովյան վարչակարգի պլանավորված դերակատարմամբ: Աշխարհի հզորներն ու նրանց նվագի տակ պարող միջազգային կազմակերպություններն էլ սովորական հանդիսատեսի կեցվածք էին ընդունել այնքան ժամանակ, ինչքան անարգել շարունակվում էր հայերի ոչնչացումը Բաքվից մինչև Ղազախ, Ժդանովից մինչև Նուխի: Իսկ երբ ղարաբաղցին ինքնապաշտպանության զենք բարձրացրեց և սկսեց որոշակի հաջողությունների հասնել, բոլորը կանգնեցին պոչների վրա՝ դատափետելով իր ֆիզիկական գոյության պաշտպանության համար ոտքի ելած ղարաբաղցու ամեն մի հաջողություն: Երկրատարածքում սեփական շահերը հետապնդող հզոր տերությունները ՄԱԿ-ի միջոցով ամեն անգամ մի նոր որոշում են հրապարակ նետում՝ պարտադրելով, որ ղարաբաղցին իր ազատագրած հայրենական տարածքները վերադարձնի ադրբեջանցիներին, պարտադրում են՝ անգիտանալով, որ ազատագրված այդ տարածքների դիմաց կան Բաքու, Սումգայիթ և մյուս տարածքներ, որոնք հավասարապես պատկանում են նաև հայերին: Անգիտանում են, որ իրականացնեն «Դարի պայմանագիրը»:

Խրախուսված Բաքվի նավթին հետամուտ մեծ տերությունների բռնած դիրքով ու ՄԱԿ-ի որոշումներով՝ ադրբեջանական կառավարությունը դեռևս փայփայում է հարցն իր նվաճողական նկրտումների օգտին լուծելու հեռանկարը՝ եթե ոչ անպայման զենքի, որից երբեք չի հրաժարվում, ապա դիվանագիտական լարախաղացության ճանապարհով: Մնում է Ղարաբաղը այդ կառավարությանը ստիպի, որ լրջորեն հաշվի առնեն երկու ժողովուրդներին պարտադրված «հաղթողներ ու պարտվողներ չպետք է լինեն» պահանջը և համակերպվեն ընդհանուր տան բաժանման գաղափարին: Վերջապես ադրբեջանցիները պետք է հասկանան, որ սկսած Բաքվից մինչև Ղազախ, Արաքսից մինչև Կովկասյան լեռնաշղթա այդ տունը առանձնապես ընդհանուր էր դարձել հայերի և ադրբեջանցիների համար, ըստ որում հայերի նկատմամբ տևականորեն կրկնվող ցեղասպանություններով և ադրբեջանցիներին սիրաշահելով, որպես իրենց կայսերապետական շահերին ծառայող բարբարոս ուժի, որի հետևանքում միշտ էլ կշեռքի նժարը թվաքանակի առումով թեքվել է ադրբեջանցիների կողմը: Եվ քանի որ դա տևականորեն շարունակվող գործողություն է եղել, այն չպետք է դառնա սոսկ պատմության սեփականություն, այն դեռևս շարունակվող մի պատմական ողբերգություն է, որի նկատմամբ պետք է հանդես բերել ժամանակակից մոտեցումներ:

Իսկ երբ մեջտեղ է գալիս ընդհանուր տան բաժանման հարցը, կշեռքի նժարների վրա պետք է դրվի ամեն ինչ: Երբ ադրբեջանցիները Ղարաբաղի պահանջատիրության հարց են դնում, որի համար որևէ հիմք չունեն, մենք ամենայն իրավունքով պետք է առաջ մղենք պահանջ, թե Բաքուն ու Շամախին, Նուխին ու Արեշը մեր հազարամյակների հայրե-

նիքն է՝ բռնազավթված ադրբեջանցիների համար (ադրբեջանցիների համար, որովհետև նրանց Անդրկովկաս են մտցրել. անընդհատ հովանավորել ու սիրաշահել՝ քոչվորական վայրենի ուժով հայերի ու վրացիների ազատագրական շարժումները ճգնված պահելու քաղաքական հեռանկարով):

Սակայն, հաշվի առնելով դարավոր հակամարտության արդյունքով ստեղծված ներկա իրավիճակը, պետք է դնել փոխադարձ զիջումների պահանջն այն հաշվով, որ տերիտորիալ հատուցում ստանանք մեր բռնազավթված հայրենիքից: Դրա համար նորից ու կրկին պետք է պատմական ճշմարտությունն իր ամբողջ մերկությամբ ջրի երես հանել, որպեսզի ադրբեջանցիների համար էլ հասկանալի լինի, որ նախկին ԼՂԻՄ-ի դիմաց մենք զիջում ենք, ասենք, Բաքուն, իսկ, ասենք, Շամախու կամ Նուխու դիմաց էլ իրենք են զիջում այս ու այն: Արդյունքում այդ ընդհանուր տնից պետք է առանձնացվի մի տարածք, ուր հնարավոր լինի տարբեր ժամանակներում բռնագաղթեցված ավելի քան երկու միլիոն հայության վերադարձը հայրենիք: Իսկ դա ենթադրում է ոչ թե ազատագրված տարածքների վերադարձ, այլ առնվազն Ղարաբաղ՝ իր 1813 թ. տարածքի չափով: Այսպես, միայն այսպես է իրականացվում ընդհանուր տան բաժանումը: Դրանից հետո միայն երկու ժողովուրդները կարող են դառնալ բարիդրացիներ և համատեղ ջանքերով դիմագրավել մեծ տերությունների լարած թակարդներին:

ԼԱՉԻՆ-ԳԵՏԱԲԵԿԻ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ*

Ցեղասպանությունը և օտարների կողմից հայրենի տարածքների բռնազավթումը մարդկության դեմ կատարվող այն ծայրագույն հանցագործություններից է, որոնց հատուցման պահանջի համար վաղեմության հասկացություն չկա, եթե դրանից հետո նույնիսկ հազարամյակներ են անցել: Վկան՝ հրեաների հայրենիքի վերականգնումը: Այսօր հրամայական անհրաժեշտություն է, որ պետական մակարդակով և փաստացի համակողմանիությամբ ներկայացնենք նաև Հայոց ցեղասպանությունը Արևելյան Անդրկովկասում, ուր միայն քսաներորդ դարում իրականացվեց երեք փուլերով՝ 1905-1906, 1918-1921, 1988-ից

* Առաջին անգամ տպագրվել է «Ազատամարտ» շաբաթաթերթում, № 20, V, 1993:

սկսած: Ուրիշ էլ ո՞վ, եթե ոչ մեր սերունդն է պարտավոր վեր հանելու պատմական ճշմարտությունը, ցույց տալու, թե ինչպես է հայոց Նակորզանը դարձել Զանգեզան, Քաշաթաղը՝ Լաչին, Քարվաճառը՝ Քյալբաջար, Քարհատը՝ Դաշքյասան, Գանձակը՝ Ալիզավետապոլ-Կիրովաբադ-Գյանջա, Քանդակը՝ Մինգեչաուր, Պարտավը՝ Բարդա, Արաժանքը՝ Կարյագինո-Ֆիզուլի և այլն: Ուրիշ էլ ինչպե՞ս, եթե ոչ պետականորեն պետք է կոտրել հակահայկական պատմագիտության, հակահայկական քարոզչության սառույցը՝ տեղը դնելով պատմական-իրական ճշմարտությունը:

Հանրահայտ է, որ ռուսների Անդրկովկաս մտնելուց առաջ ցարական հետախուզությունը մանրամասնորեն ուսումնասիրել է պարսկական տիրապետության կազմում գտնվող երկրներն ու ժողովուրդներին, պարզել նրանց քաղաքական ակնկալիքների հնարավոր ուղղությունները: Հայերին բնութագրելու հետ միաժամանակ ընդգծվել է, որ նրանք մուսուլմանական օվկիանոսում փոքրիկ կղզիներ են, որոնք ուրիշ ելք չունեն, բացի ռուսներին ապավինելուց, և իրենց այդ վիճակով Ռուսաստանի բնական դաշնակիցներն են: Որպես քաղաքական հանձնարարական ձևակերպվել է՝ Ռուսաստանը հարավային ծավալման համար պետք է հենվի հայերի վրա, սիրաշահի մուսուլմանական աշխարհին, ինչն անշեղորեն կենսագործել է Ռուսաստանը 300 տարի շարունակ:

Վերջին 300 տարում չի եղել ռուս-պարսկական, ռուս-թուրքական որևէ պատերազմ, որի ժամանակ չշահագործվեին հայերի ազատագրական ձգտումները, հայերին չդարձնեին պատերազմող կողմ, բայց ձեռք բերված արդյունքներից չզրկեին նրան:

Հայերի հաշվին մահմեդականներին սիրաշահելու քաղաքականությունը ամեն անգամ պետական մակարդակով վերածել է հայերի ցեղասպանության, երբ կայսրությունը կանգնել է համընդհանուր ճգնաժամի առաջ: Դրա հետևանքով իրենց բնակավայրերից դուրս են մղվել հայերը և այլազգիներ (ռուսներ, գերմանացիներ)՝ հող նախապատրաստելով ադրբեջանցիների միատարրության համար: Եվ քանի որ հայերի ցեղասպանության հերթական ալիքն սկիզբ առավ կայսրության առաջին համընդհանուր ճգնաժամի տարիներից՝ 1905-1906 թվականներից, և ոչնչացման մեթոդների մասնակի լրացումներով շարունակվում է մինչև այսօր, ընթերցողին ենք ներկայացնում այդ օրերի՝ պետականորեն հրահրված վայրագությունների ընդամենը երկու միջադեպ, որոնք պատասխան են տալիս այն հարցին, թե ինչպես Արցախի, Սյունիքի ո-

որոշ տարածքներ ու Գարդմանը հայաթափվեցին և այսօր կոչվում են Ադրբեջանի «անկապտելի մաս»:

Բերում ենք ժամանակի բազմաբնույթ վավերագրերից միայն մեկը, որտեղ ներկայացված իրականությունը այնքան նման է մեր օրերին, որ մեկնաբանությունն ավելորդ է դառնում[14]:

«Կոտորածը Մինքենդում, 19-22 օգոստոսի, 1905 թ.: Մինքենդի հայերի դրությունը միանգամայն վտանգավոր դարձավ օգոստոսի սկզբներում, երբ Սուղանլու, Խալաճ, Օվշառ կոչվող թարաքյամա քրդերը եկան, իրենց վրանները խփեցին Մինքենդի դաշտում... Օգոստոսի 19-ի երեկոյան գյուղի այն կողմում, ուր սովորաբար գիշերում էին հայերի ոչխարները, հրացաններ պայթեցին, և երեք սուրու ոչխար թուրքերը փախցրին: Հայերը դուրս եկան հավարի, բայց կարողացան ետ բերել միայն երկու սուրու... Օգոստոսի 20-ի երեկոյան գյուղը պաշարվեց թարաքամաներով՝ հրացանների որոտների հետ միաժամանակ:

Առաջին անգամ գյուղը պաշտպանելու համար հայերի հետ միասին փողոց դուրս եկան թե՛ կոզակները և թե՛ ստրաժնիկները, բոլորը միասին 32 հոգի, սակայն այդ մի ստոր խաղ էր պրիստավի կողմից (Սաղոգ բեկ): Մի փոքր այս ու այն կողմը վազվզելով՝ ներս քաշվեցին թե՛ պրիստավը, թե՛ կոզակները և թե՛ ստրաժնիկները: Դավադրությունը կատարյալ էր: Թեև հայերը մի կարճ ժամանակ դիմադրեցին, բայց ապարդյուն: ...Օգոստոսի 21-ի առավոտյան Մինքենդի փողոցներում ընկած էին արդեն 22 դիակ:

Սակայն այդ դրպեին էլ հանգիստ չառավ ոճրագործ պրիստավը: Նա, պատճառ բռնելով Խոզնավարում սկսված ընդհարումը, օֆիցերին կոզակների հետ միասին հաջորդ օրն ուղարկեց Խոզնավար: Երբ հայերն այդ իմացան, մի մասը գյուղից փախան, իսկ մնացյալ մասը պատսպարվեց այսպես կոչված «Զայեժնիյ» տանը: Ահա այդ տան վրա էլ հարձակվեց խուժանը... այս անգամ գրագիր Շամիրի առաջնորդությամբ:

«Զայեժնիյ» տան բակում տեղի ունեցավ մի չտեսնված, չլսված բարբարոս գործողություն: ...Գազանացած խուժանը այդտեղ կատարեց այն բոլոր քստմնելի գործողությունները, որպիսին ընդունակ է երևան հանելու...

14 Տե՛ս Ա-ԴՕ. Հայ-թուրքական ընդհարումները 1905-1906 թթ., Երևան, 1907 թ., էջ 256:

Այսպիսով, Մինքենդի 696 բնակիչներից 456-ը միայն կարողացան, որոշ վիրավոր և որն էլ սարսափից մաշված, կմախք դարձած ազատվել, մնացյալ 240-ը չկային:

Մինքենդի նյութական կորստին չափ չկար: Նրանք կորցրել էին ամենը, ամենը... բոլորը ծգեց մինքենդցին և գնաց՝ այլևս չվերադառնալու համար, այլևս չտեսնելու այն տեղը, որը եղել էր նրա հարազատների ապանդանոցը: Նա գնաց տնավեր, քաղցած, բազմաթիվ զոհերով և վշտաբեկ սրտով, բայց նրան տանջում էր ավելի շատ այն հանգամանքը, որ ոճրագործները չեն պատժվում, որ նրանք, ընդհակառակը, խրախուսանքներ էին գտնում պաշտոնյաների կողմից»:

«Բադաքենդ-Գետաբեկի կամ բարբարոսությունների շրջան, 19-25 նոյեմբերի, 1905.: Գանձակի առաջին օրվա կոտորածի հետ միաժամանակ, այն է նոյեմբերի 18-ին, թուրքական մի խուժան հարձակվեց Զարդախլուի վրա՝ ավերելու և այդ խոչընդոտը մեջտեղից վերացնելու նպատակով: Վաղուցվա մտադրությունն այս անգամ էլ չիրագործվեց: Զարդախլուն դիմադրեց որպես վահան և մնաց կանգուն ու հպարտ: Հարձակումը կրկնվեց նաև 19-ին, բայց դարձյալ անհաջող, որից հետո խուժանը դարձավ դեպի Բադաքենդ, պղնձահանքերը և Ղազախ (գյուղ Գետաբեկի մոտ - Ա. Հ.):

Նոյեմբերի 19-ին, առավոտյան ժամը 7-ին, թուրքերը եկան բռնեցին գյուղի (Բադաքենդ) շրջակա բլուրները, իսկ գյուղից 5 վերստ հեռու գտնվող Զառչի-բինան կողոպտեցին և եղած-չեղածը տարան: Նոյեմբերի 21-ին խուժանը նորից երևաց, բայց այս անգամ ավելի մեծ չափով... Սկսվեց անհավասար օրհասական կռիվ, որպիսին լինում է հուսահատական բոպեներին: Բադայի փոքրաթիվ կռվողները, մինչև 22-ի երեկոյան քաջաբար դիմադրելով, դիրքերը ծեռքից թողին միայն հերոսաբար ընկնելուց հետո:

Սակայն Բադայի ժողովուրդը հերոսության նոր ապացույցներ տվեց. թուրքերի ներս խուժումից հետո մի համառ կռիվ էլ տեղի ունեցավ գյուղի փողոցներում՝ փայտերով, կացիններով և այլ գործիքներով, մինչև վերջին ծիգը, վերջին շունչը, ինչպես գոտեմարտը, որից հետո խուժանը կատարեց իրեն հատուկ բարբարոսությունը մեծի ու փոքրի, կանանց ու երեխաների նկատմամբ: Բադայում ընկել էին մարդ, կին, երեխա՝ 118 հոգի...

Այն ժամանակ, երբ կատարվում էին Բադաքենդի սարսափները, ավելի վատթարագույն սարսափներ տեղի ունեցան պղնձահանքերում,

Ղազախում՝ պրիստավի և շրջակա գյուղերի քյոխվաների մասնակցությամբ:

... Բաղայի, Գետաբեկի և Ղազախի հետ ամեն բան վերջացնելուց հետո թուրք խուժանը դարձավ դեպի Չարդախլու: Նոյեմբերի 25-ից սկսած մինչև 30-ը պարբերաբար հետ մղվելով և նորանոր թարմացած ուժերով նոր հարձակումներ գործելով՝ նա չհոգնեց: ...Նոյեմբերի 30-ին տեղի ունեցավ վճռական հարձակումը, և այս անգամ խուժանը հետ փախավ մեծ կորուստներով...»[15]:

Եվ այսպես, թուրքական ցեղերի վայրենի բնազդները գրգռելով հայերի ունեցվածքին ու նրանց դարավոր հայրենիքին տեր դառնալու հրապուրիչ հեռանկարով՝ ցարիզմը նոր հիմքերի վրա դրեց Արևելյան Անդրկովկասի թուրքացման գործընթացը, որը հետագայում որդեգրեցին բոլշևիկները: Որդեգրեցին ոչ միայն 11-րդ Կարմիր բանակի հրանոթները գործի դնելով, այլև Նախիջևանը, Ղարաբաղը, Գանձակը Ադրբեջանին նվիրելուց հետո անգամ, 1928 թվին Նախիջևանի չափ մի տարածք ևս, սկսած Զանգեզանից մինչև Կարմիրի շրջան, խլեցին Հայաստանից ու տվեցին Ադրբեջանին՝ Հայաստանի ու Արցախի միջև ստեղծելով Լաչինի, Քյալբաջարի ու Գետաբեկի արհեստական միջանցքը: Չնայած ցարական-բոլշևիկյան այս քաղաքականությանը՝ հայկական պատկառելի զանգվածները Հյուսիսային Արցախում ու Գարդմանում կարողացան ամուր կառչած մնալ իրենց հայրենի հողին, դիմակայել Ադրբեջանի 70-ամյա անօրինակ գաղութային քաղաքականության ճնշումներին, մինչև որ գորբաչովյան վարչակարգը խորհրդային զորքերով հիմնովին հայաթափեց այդ տարածքները՝ ներկայիս Շամխորի, Գետաբեկի, Դաշքեսանի, Խանլարի, Շահումյանի շրջանները և Գանձակը:

Այսօր Ադրբեջանը աշխարհով մեկ աղմուկ է բարձրացրել՝ այդ տարածքները իր «սրբազան հայրենիք» ներկայացնելով, և ձգտում է Զանգեզուրն էլ բռնազավթել...

Մինչդեռ անխուսափելի է պատմական արդարության վերականգնումը. եկել է հատուցման ժամը: Հայ ժողովուրդը ի զորո՞ւ կլինի իր բռնազավթված հայրենիքի մի հատվածը՝ Արցախական աշխարհն իր բնական ու պատմական սահմաններով ազատագրելու: Դա պայմանավորված է ամենից առաջ նրա ղեկավար շրջանների քաղաքական դիրքորոշումով ու սթափ շրջահայեցությամբ:

15 Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումները 1905-1906 թթ., Երևան, 1907 թ:

ԺԴԱՆՈՎԻ ԱՆՎԱՆ ՇՐՋԱՆԻ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ*

Արևելյան վայրենի ցեղերի հազարամյա ասպատակությունները Միջին Ասիայից մինչև արաբական թերակղզի, Եվրոպա և Հյուսիսային Աֆրիկա, որոնք հսկայական աշխարհատարածքներ կոտորածների ու ավերածությունների հովիտ դարձրին, այնպես էլ չկարողացան փոխել Արցախի էթնիկական կազմն ու տարածքային ամբողջականությունը: Ճիշտ է, նրանք հայաթափեցին Արցախի և Ուտիքի դաշտավայրային շրջանները, ոչնչացրին հազարամյակների ընթացքում ստեղծված բարձր քաղաքակրթությունը, բայց յուրացնել այդ տարածքները այդպես էլ չկարողացան ընդհուպ մինչև վերջին պատերազմը:

Առանձնապես անմարդաբնակ անապատի էր վերածվել Արաքսի ձախափնյա մասը, որտեղից մնացել են պատմական հուշի որոշ բեկորներ միայն: Այսպես՝ հայոց երբեմնի Բայլականից հուշի ձևով մնացել է միայն ավերակը՝ Օրան դալա (Քանդված բերդ) անվանումով, անհիշելի ժամանակներից Արաքսից հանված ոռոգման ջրանցքից մնացել է Գյավուր արխ (Անհավատի առու) անվանումը, ջրանցքի ձախափնյա անջրդի տարածքներից մեզ է հասել Հարամի (Արամի՞) տեղանունը և այլն:

Երեք աշխարհամասեր ոտնատակ տված թուրքալեզու վայրենի ցեղերի կատարած ավերածությունները մերձարաքսյան հարթավայրում կարող է համեմատվել միայն Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակներից հայտնի միջինասիական քաղաքակրթության ոչնչացման հետ: Եվ եթե Միջին Ասիան հետագայում կարողացան շատ թե քիչ յուրացնել և դարձնել հայրենիք, այստեղ նրանք այնպես հիմնովին էին ավերել, որ անգամ իրենց ոչխարների համար պիտանի չէին որպես արոտավայրեր: Նույնիսկ ցարիզմը ի զորու չեղավ մարդաբնակ դարձնելու այդ տարածքները: Ցարիզմը Արցախի նախալեռնային գոտին աղեղնաձև դարձրեց ռուսական գաղթօջախներ՝ Շամխորի կողմերից մինչև Կարյագինո-Ֆիզուլի, իսկ Արցախի մերձարաքսյան գոտին փոխանցեց բոլշևիկներին՝ որպես անցյալի տխուր ժառանգություն:

Որ մինչև բոլշևիկների իշխանության գլուխ անցնելը Արցախն ու Ուտիքը ընկալվում էին որպես հայության հայրենիքի մաս, երևում է ոչ միայն Անդրկովկասի ռուսական նվաճումից առաջ ստեղծված բազմաթիվ փաստաթղթերից, այլև Թուրքմենչայի հայտնի պայմանագրից, որի հետևանքով կազմակերպված հայոց ներգաղթի արևելյան սահմանակետը հայոց երբեմնի մայրաքաղաք Պարտավն էր, ուր բնիկ հայերը, թեկուզ զգալի փոքրամասնությամբ, գոյատևեցին մինչև 1988 թվականը,

* Առաջին անգամ տպագրվել է «Երկիր» օրաթերթում, 1992 թ., 19 մարտի:

մինչև Գորբաչովի վարչակարգի սանձազերծած հայ-ադրբեջանական առճակատումը:

Բոլշևիկները Լենինի գլխավորությամբ շինեցին մի նոր հանրապետություն՝ Ադրբեջանական ՍՍՀ անվանումով, ոտնատակ տալով Արևելյան Անդրկովկասի հազարամյակներով տեղաբնիկ հինգ հիմնական ժողովուրդների՝ հայերի, լեզգիների, թալիշների, ուդիների ու թաթերի ազգային ու մարդկային իրավունքները, շրջանառությունից հանելով նրանց բնական հայրենիքների պատմական անվանումները: Բոլշևիկները Ադրբեջան անվանման մեջ ստատեգիական հեռահարությամբ ամփոփեցին Պարսկաստանի նահանգ բուն Ադրբեջանի (Ատրպատականի) բռնազավթման քաղաքական ծրագիրը, որն իրականացնելու համար բազմաթիվ փորձեր կատարեցին տարբեր առիթներով, վերջինը՝ 800 կիլոմետրանոց պետական սահմանի բացումը՝ իր ձախողված ակնկալիքներով: Ըստ իս, Գորբաչովը հույս ուներ, թե Ադրբեջանում բորբոքած խժդժությունները կփոխանցվեն պարսկական Ադրբեջան, իսկ ինքն էլ հանդես կգա միևնույն ժողովրդի երկու հատվածների վերամիավորման «բնական» պահանջի պաշտպանությամբ:

Բոլշևիկյան վարչակարգի 70 տարիների ընթացքում Ադրբեջանական ՍՍՀ կոչված հանրապետության քաղաքական ղեկավարության հիմնական խնդիրն այդ երկրատարածքների տնտեսական ու էթնիկական յուրացման մեջ է ամփոփված:

Աշխարհատարածքի Ինչպես տեղաբնիկ ժողովուրդների գոյությունը ուրանալու մեջ մեծ դժվարության չէին հանդիպում առաջին հերթին հավատի նույնության, այդ հիմքի վրա նրանց ու պարսկական դարավոր քաղաքակրթության անարգել սեփականացման, ինչպես նաև ադրբեջանցի ինքնանվանում ունեցող ժողովուրդ չլինելու հանգամանքներով: (Ադրբեջանի թուրքերը այսօր էլ որպես ազգային ինքնանվանում իրենց կոչում են մուսուլման): Բայց հայերի հարցում այն ժամանակվանից ոսկորը կոկորդներին էր դեմ առնում, և դեմ է առնում այսօր էլ:

Ահա թե ինչու հայերին ֆիզիկապես ոչնչացնելու և հազարամյակների հայրենիքից դուրս մղելու թուրք-մուսավաթական քաղաքականությունը գործողության մեջ մնաց 1918 թվականից մինչև այսօր: Հիշենք 30 հազար հայերի կոտորածը Բաքվում օսմանյան ներխուժման ժամանակ, նույն օրերին Քուռի ձախափնյակը գրաղեցնող Արեշի և Նուխու գավառների 45 հազար հայության կոտորածն ու բռնագաղթը, որի հետևանքով հիմնականում հայաթափվեցին այդ գավառները, նույն ժամանակից սկսված Նախիջևանի հայաթափման ընթացքը, Շուշու հայկական թաղամասի ոչնչացումը և այլն: Քաղաքականություն, որը տարբեր ձևերով ժառանգեց բոլշևիկյան վարչակարգը: Բնութագրական

է, որ բոլշևիկյան վարչակարգ հաստատվելուց հետո Նախիջևանից ու Քուռի ձախափնյակից բռնագաղթված հայերին այնպես էլ իշխանությունները թույլ չտվեցին վերադառնալ իրենց բնակավայրերը, և դրանք դարձան թուրք քոչվորների սեփականություն: Իսկ Ղարաբաղում բոլշևիկյան վարչակարգ ստեղծվելուց հետո բռնագաղթած շուշեցի հայի խնդրանքին, որ թույլ տան իր ավերված տան թիթեղը տանի գյուղում ծածկ ստեղծելու համար, բոլշևիկ իշխանավորը պատասխանել է. «Դա ռազմական ավար է և վերադարձման ենթակա չէ»:

Ադրբեջանական իշխանությունների հեռահար քաղաքականության դրսևորումներից մեկն էլ Արցախի մերձարաբսյան տարածքների թուրքավարի յուրացումն էր:

Աչքի առաջ ունենալով այն հավանականությունը, որ արցախահայությունը օրերից մի օր կդնի մարզի շարունակությունը կազմող մերձարաբսյան անմարդաբնակ տարածքների յուրացման հարցը, մի գիշերվա մեջ բոլշևիկ դարձած Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը 20-ական թվականներին ծրագրեց այդ տարածքների էթնիկական յուրացման խնդիրը: Եվ քանի որ նրանք չէին կարող ցեղակից քոչվորների միջոցով նման միջոցառում իրագործել, 1928 թ. պարտադրեցին մարզի ղեկավարությանը, որ Ղարաբաղի աշխատավորության ուժերով իրականացնեն այդ գործը: Աշխատանքների գործնական կազմակերպումն ու իրականացումը հանձնարարված էր Մարտունու շրջանի ղեկավարությանը, քանի որ այդ շրջանի տարածքային շարունակությունն էր այն: Մարզի բոլոր շրջաններից անհրաժեշտ քանակությամբ աշխատուժ տեղափոխեցին Արաքսի ափամերձ տարածքները, որոնք վերաբացեցին հազարամյակներ առաջ հայերի կողմից Արաքսից հանված, բայց ժամանակին արևելյան հորդաների ձեռքով հիմնովին ավերված ջրանցքը՝ Գյավուր արխը, ստեղծեցին առաջին կոմունաները, որոնց հիմքի վրա էլ հիմնադրեցին 13 սովխոզ:

Տասը տարվա ընթացքում այդ սովխոզները տնտեսական այնպիսի վերելք ապրեցին բամբակագործության, հացահատիկային կուլտուրաների ու անասնապահության բնագավառներում, որ առաջացավ ինքնուրույն շրջան ստեղծելու հնարավորություն: 1938 թ. այդ սովխոզները հանեցին Մարտունու շրջանի, հետևապես նաև մարզի վարչատարածքային ենթակայությունից, դարձրին հանրապետական ենթակայության շրջան և այն կնքեցին Ժդանովի անունով: Դրանով նրանք լուծեցին ռազմավարական կարևորության մի հարց, մարզը կտրեցին արտաքին աշխարհից, այն այլևս հարևան պետության հետ սահման չուներ: Եվ որպեսզի դա առավել հիմնովին լինի, ջրանցքից վերև գտնվող անջրդի տարածքներն էլ, որպես «չեզոք գոտի», հայտարարվեցին պետական

հողեր, որոնք ժամանակավորապես տրամադրվում են մարզին, և մարզի կոլտնտեսությունները իրավունք ունեին միայն այն օգտագործելու որպես ոչխարների ձմեռանոց: 60-ական թվականներին ծրագրվեց այդ տարածքները ևս ոռոգելի դարձնել Քուռ գետից բերվելիք ջրանցքով՝ նոր ժողովներ ստեղծելու հեռանկարով, սակայն Միության տնտեսական կյանքի շեշտակի անկումը հնարավորություն չտվեց հերթական հնգամյա պլան մտցված այդ ծրագիրն իրականացնել:

Քանի որ նորաստեղծ շրջանը հայկական էթնիկական կազմով էր, շրջանի ղեկավարությունն էլ հանձնեցին հայերին: Շրջանի կուսշրջկոմի առաջին երկու առաջին քարտուղարն էին հայեր Ջավադովը, ապա՝ Վանունցը: 40-ական թվականների վերջերից մեթոդիկ հետևողականությամբ շրջան են ներմուծում ադրբեջանական տարր՝ Սուղանի դաշտավայրում քոչվորական կենցաղով ապրող ազգակիցներին ընտելացնելով նստակեցության առավելություններին: Դրան ուղեկցում է շրջանի ղեկավարության էթնիկական պատկանելության փոփոխությունը: Երրորդ առաջին քարտուղարն արդեն թուրք Օրուջովն էր, երկրորդ քարտուղարը՝ հայ Հարությունովը, իսկ վերջերում հայերին բաժին էր մնացել շրջկոմի ընդամենը երկու երկրորդական հրահանգչի հաստիք: Ավելորդ է ասել, որ շրջանի աշխատանքների պատկառելի մասը, առանձնապես բերքահավաքը, կոռի ձևով դրված էր Ղարաբաղի աշխատավորության, ինչպես նաև ուսանողության ու աշակերտության ուսերին:

Ինչքան բազմամարդ էին դարձնում ադրբեջանական տարրը շրջանում, այնքան էլ ադրբեջանական իշխանություններն ուժեղացնում էին ճնշումները հայերի նկատմամբ: Արդյունքը... Դանդաղ, բայց աննահանջ հետևողականությամբ ադրբեջանցիները ներթափանցում են բոլոր տեղերը, դառնում դրության տերեր: Սովխոզներից մեկը՝ Նորագյուղը, որի միջնակարգ դպրոցն ուներ 700 և ավելի հայ աշակերտներ, որը պատերազմի ժամանակ տվել էր 146 զոհ, 80-ական թվականների կեսերին դարձել էր խառը բնակավայր՝ թուրքերի մեծամասնությամբ: Նույն ճակատագիրն են բաժանել նաև մյուս սովխոզները:

Թուրքերի ներթափանցումը ժդանովի անվան շրջան այն աստիճան թուրքավարի է եղել, որ երբ ծերբակալեցին Բաղիրովին, որպես Ստալինի ու Բերիայի հանցակցի, նրա հետ ծերբակալեցին նաև Մուղանի տափաստաններում թափառող քոչվորների առաջնորդ Թելլի Հասանին: Ինչպես ամենուր, այստեղ ևս թուրքական ներթափանցմանը հաջորդեց յուրացումն այն ամենի, ինչ ստեղծել էին ուրիշները: Բանը հասավ այնտեղ, որ պատերազմի զոհերի հիշատակին կանգնեցված հուշարձանի վրայից ջնջեցին հայերի ազգանունները՝ տեղը գրելով թուրքերի չեղյալ ազգանուններ:

Երբ գորբաչովյան վարչակարգն իրականացրեց սումգայիթյան ոճրագործությունը, Սումգայիթի հայությանը դեռևս չբռնագաղթեցրած, ադրբեջանական իշխանությունները այդ ակտը իրականացրին ժդանովի շրջանում: Այն օրերի գործելակերպի ոճով թուրքական խառնամբոխը մտցրեցին բնակավայրերը՝ հայերին կոտորելու սպառնալիքով, իսկ իշխանության ներկայացուցիչները հանդես եկան փրկարարի դերով և հարկադրեցին հայերին գլուխներն ազատել ու փախչել սեփական բնակավայրերից: Վերջին ընտանիքը 90 տարեկան մի պառավ էր՝ իր երեք աղջիկներով, որոնցից երկուսը՝ հաշմանդամ և ի վիճակի չէին փախչելու: Թուրք խուժանը ծաղրուծանակով նրանց «լցրեց» ինքնաթափ մեքենա, բերեց Հայաստանի սահմանագլխին «թափեց»:

Ահա այս ակտից է սկսվել Արցախական աշխարհի հայության վերջին բռնագաղթը, որը հետագայում տարածվեց Չարդախլուից մինչև Գետաշեն, Բերդաձորից մինչև Հադրութի շրջան, և կատաղի մոլուցքով փորձում են տարածել ողջ Արցախի վրա:

Ահա այսպես են 70 տարում քայլ առ քայլ ստեղծել Ադրբեջան՝ բռնագավթելով երկրամասի հինգ հիմնական ժողովուրդների հայրենիքը, նյութական և հոգևոր ժառանգությունը: **ժդանովի շրջանի պատմությունը ցուցադրում է երեկ թուրքմեն, թուրք, թաթար, նորից թուրք, այսօր յոթ միլիոնանոց ադրբեջանցի կոչվող ժողովրդի «սրբազան հայրենիքի» ձևավորման մեխանիզմը:**

Այս վայրենի քաղաքականության դեմ է 70 տարի տարբեր ձևերով պայքարել արցախահայությունը և այսօր էլ ոտքի է ելել կենաց ու մահու պայքարի:

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԽԱՂԱՂ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

1921 թ. Մոսկվայի, ապա Կարսի պայմանագրով գործարքի մեջ մտնելով Աթաթուրքի հետ՝ Լենինը ոչ միայն Կարսը զիջեց Թուրքիային, այլև Նախիջևանի երկրամասը «և այլ շրջաններ» հանձնեց նորաթուխ Ադրբեջանական հանրապետությանը: Այդ «և այլ շրջաններ» արտահայտությամբ նկատի էր առնվում Արևելյան Անդրկովկասի մի շարք հայկական շրջաններ, որոնցից փրկվեց միայն Զանգեզուրը՝ շնորհիվ Նժդեհի հերոսական ջանքերի: Փաստորեն ԽՍՀՄ կազմավորելուց առաջ Լենինը, հանձին Ադրբեջանի, ստեղծեց մի փոքր կայսրություն և ադրբեջան-

* Առաջին անգամ տպագրվել է «Ազատամարտ» շաբաթաթերթում, 1993 թ., թիվ 43:

ցիների տրամադրության տակ դրեց ոչ միայն տեղաբնիկ ժողովուրդների՝ հայերի, լեզգիների, թալիշների, թաթերի և այլ փոքրաքանակ ժողովուրդների հայրենիքները, այլև նրանց ստեղծած հազարամյակների մշակույթը, քաղաքակրթությունն ու պատմությունը:

«Արժանին» պետք է մատուցել այդ նորաստեղծ հանրապետության քաղաքական գործիչներին՝ նրանց ճկուն ու մարտնչող ազգային քաղաքականության համար: Տեղաբնիկ ժողովուրդների ձեռքով նրանք ոչ միայն ստեղծեցին ժամանակակից արդյունաբերություն և գյուղատնտեսություն, այլև պատմական մի կարճ ժամանակահատվածում իրենց ժողովրդին վրաններից փոխադրեցին բնակարաններ՝ յուրացնելով ուրիշների վաստակը, յուրացնելով թուրքամեթոդ, տեղն ընկած ժամանակ վայրենի բարբարոսությամբ, ինչպես տեսանք Սումգայիթում և այլուր: Այդպես է թուրքը նստակեցության անցել Ադրբեջանում: Ռուսական գաղթօջախ Կարյագինոյից ռուսները գնացին հայրենիք, թափառական թուրքը տեր դարձավ նրան՝ այն դարձնելով Ֆիզուլի: Գերմանացիներին Էլենդորֆից աքսորեցին Սիբիր, թուրքը տեր դարձավ նրան և դարձրեց Խանլար, և այսպես շարունակ՝ Ժդանով, Մինգեչաուր, Սումգայիթ...

Սակայն նորաթուխ հանրապետության ադրբեջանականացման գործն այնքան էլ հեշտ ու հարթ չէր, չնայած նրանք նախանձելի քաղաքական ճկունությամբ ու հետևողականորեն իրականացնում էին այն: Բարդության հիմքն առաջին հերթին այն էր, որ ամբողջ մշակովի հողերը տեղաբնիկ ժողովուրդների սեփականությունն էին՝ ժառանգված հնագույն ժամանակներից, և երկիրը կերակրում էին նրանք: Չնայած ցարիզմը 19-րդ դարի 40-ական թվականներից շատ անգամ փորձել էր խաներին ու բեկերին օժտել հողային սեփականատիրության լայն իրավունքներով, նրանց վարժեցնել նստակեցության, բայց այդ ժողովուրդն իր վերնախավով գերադասել էր անմշակ տափաստաններում ոչխար պահելը և սոցիալիզմին հասել էր որպես քոչվոր՝ անհաղորդ արորի և գութանի արվեստին:

Ինչ մնում է արդյունաբերական Բաքվին, ապա այն ամեն ինչ էր՝ և՛ ռուսական, և՛ հայկական, և՛ հրեական, և՛ պարսկական և այլն, բայց ոչ երբեք ադրբեջանական, իսկ եթե նաև ադրբեջանական, ապա միայն հասարակական պարզագույն ծառայությունների ոլորտում: Դրան հակակշռում էր թուրքերի թվական գերակշռությունը տեղաբնիկ ժողովուրդների նկատմամբ և քաղաքական իշխանության լծակների զորությունը նրանց ձեռքին: Իրերի նման դասավորության պայմաններում ադրբեջանական ղեկավարությունը մշակեց իր ազգային քաղաքականության ռազմավարությունը և հասավ աննախադեպ արդյունքների:

Մեզ հետաքրքրողը հայկական երկրամասերի նկատմամբ Ադրբեջանի կառավարության կիրառած զավթողական քաղաքականությունն է:

Քուռի աջափնյակը գբաղեցնող հայկական մարզերը, հիմնականում իր հայ բնակչությամբ, Լենինից նվեր ստանալու դիմաց ադրբեջանական ղեկավարությունը դիմեց քաղաքական զիջման՝ հանդուժելով հայկական ինքնավար մարզի ստեղծումը, որը նրանց կողմից միշտ էլ դիտվել է որպես ժամանակավոր զիջում:

Որևէ մեկնաբանության տեղ չի թողնում Կավբյուրոյի հայտնի որոշման 2-րդ կետը, որով Ադրբեջանի կառավարությանն է թողնվում հայկական շրջաններից Ինքնավար մարզի ստեղծումը և նրա սահմանների որոշումը: Հայտնի առակի տրամաբանությամբ դա նշանակում էր ոչխարներին հանձնել գայլերի պահպանությանը: Ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, բայց ինչպե՞ս...

Նախ՝ մարզի կազմից դուրս մնացին չորս հայկական, ժամանակակից անվանումներով՝ Շահումյանի, Խանլարի, Դաշքյասանի ու Շամխորի շրջանները: Ապա՝ այդ շրջանների վարչատերիտորիալ սահմանները այնպես գծեցին, որ ավանդաբար իրենց պատկանող հողատարածքների մի պատկառելի մասը մնաց նրանց սահմաններից դուրս: Այսպես, Գետաշենի և նրա շրջակա հայկական գյուղերի, ինչպես նաև Շահումյանի շրջանի՝ վարելահողերը հասնում էին մինչև Գանձակի ու Պարտավի փեշերը՝ նախկին Գյուլիստանի մելիքության սահմաններով: Սակայն նրանց վարչատարածքային սահմանները գծեցին գյուղամերձ տարածքներով, չնայած այս սահմաններից դուրս գտնվող հողերը շարունակում էին մշակել հայերը: Օրինակ, Պարտավի մոտ գտնվող Ղարբանդում էին գտնվում Կարաչինար գյուղի՝ վարելահողերը, իսկ Գերանում՝ Գետաշենինը: Իրերի այս դրությունը պահպանվեց մինչև թուրքերի նստակեցության ու հողամշակման անցնելը, որպես ժամանակավոր ու հարկադրական իրողություն, որը հանգիստ չէր տալիս Ադրբեջանի կառավարությանը: Պատերազմից հետո, գործարկելով Վերին Ղարաբաղյան ջրանցքը, Ադրբեջանի կառավարությունը Պարտավի և Քուռի մերձակայքի հայապատկան վարելահողերը խլեց այդ շրջաններից և դարձրեց թուրքական սեփականություն: Դա տեղի ունեցավ 1949 թվականին: Եվ երբ հայկական Գերանը դարձրեցին թուրքական, սկսեցին տարփողել, թե դա հին թուրքական բնակավայր է եղել: Իսկ երբ սկսվեց կոլտնտեսությունների ու շրջանների խոշորացումը, այդ միջոցառումը այնպես կազմակերպեցին, որ ստեղծվեց խառն էթնիկական միջավայր, ուր հայերին, տևականորեն ճնշելով, հարկադրում էին լքել պապենական օջախները, մինչև որ հարցը հիմնովին լուծեցին գորբաչովյան հրանոթների զորությամբ:

Վարչատարածքային սահմանագծման նույն սկզբունքով կազմավորվեց նաև Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը: Նրա սահմաններից դուրս թողեցին վարելահողերն ու անասունների ձմեռանոցները, որ ձգվում էին մինչև Արաքսամերձ տափաստանները: Եվ որպեսզի հետագայում հեշտ լինի այդ տարածքները մարզից պոկելը, սկզբից ևեթ դրանք հայտարարեցին պետական ֆոնդի հողեր՝ ժամանակավորապես տրամադրված մարզին: (Հետաքրքիր է, իսկայածավալ պետության ուրիշ ո՞ր մասում է պետական ֆոնդի հողերի հարց եղել):

* * *

20-ական թթ. Ադրբեջանի տնտեսական կյանքի զարգացման համար ամենապատրաստ միջավայրերից մեկը, Բաքվի և Գանձակի հետ միասին, Լեռնային Ղարաբաղն էր՝ ժամանակի պահանջները բավարարող իր կադրերով ու աշխատուժով, իր բնական ռեսուրսներով: Հավանաբար այդ հանգամանքի հաշվառումով կենտրոնական կառավարությունը 1925 թ. առաջադրեց Թարթառ գետի վրա ջրակայանի կառուցման հարցը, որի իրականացումը մի հարված կլիներ ադրբեջանական ազգային կլանողական քաղաքականությանը: Ադրբեջանի ղեկավարությունը դրա դեմ գործի դրեց նման դեպքերի համար իր փորձված զենքը՝ հարցի լուծման ձգձգումը: Նա կարողացավ մինչև 1931 թվականը համարյա ոչինչ չձեռնարկել, կենտրոնի ճնշմամբ 1931 թ. հարկադրված եղավ ձեռնարկել տեղանքի հետազոտության ու շինարարության նախագծման աշխատանքները, 1934 թ.՝ շինարարությունը: Սակայն 1941 թ. հաջողացրեց կանգնեցնել «Թարթառգէսի» շինարարությունը և աշխատուժն ու շինարարական սարքավորումները տեղափոխել Մինգեչաուր:

Իսկ թե ինչու Ադրբեջանի կառավարությունը հատկապես Մինգեչաուրը ընտրեց հիդրոկայանի վայր և ոչ մի ուրիշ տեղ, դարձյալ պայմանավորված էր նրա ազգային հեռահար քաղաքականությամբ: Բանն այն է, որ Քուռի ձախափնյակը զբաղեցնող նախկին Արեշի գավառը դեռևս լրիվ ադրբեջանականացված չէր, իսկ նրա ու Հյուսիսային Արցախի հողատարածքները սահմանակից էին իրար և կազմում էին մի միասնական էթնիկական տարածք:

Եվ որպեսզի ընթերցողի համար պարզ դառնա հարցի էությունը, մի հարկադրական հայացք ձգենք դեպի անցյալը:

Դեռևս մ.թ.ա. 2-րդ դարում հայոց միավորված պետության կազմի մեջ մտած Կամբեջան երկրամասը, որը Քուռի ձախափնյակից ձգվում էր մինչև Կովկասյան լեռները, կարողացավ իր հայկականությունը պահպանել նաև պետականության կորստից հետո, և մինչև 18-րդ դարի

սկիզբը հայերը երկրամասի գերիշխող էթնիկական տարրն էին՝ կազմելով բնակչության 88 տոկոսը: Իրավիճակը կտրուկ փոխվեց, երբ պարսկական տիրապետության դեմ ոտքի ելած հայ-վրացական միացյալ ուժերին օգնելու խուստումով Դերբենդ հասած Պետրոս Առաջինը ոչ միայն հանկարծակի ետ վերադարձավ, այլև Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Անդրկովկասը ճանաչեց թուրքական սեփականություն, և թուրքական զորքերը բռնազավթեցին Անդրկովկասը:

Թուրքական այդ նվաճումը առանձնապես ծանրագույն հետևանք ունեցավ արդեն Շաքիի խանության վերածված Կամբեջանում, ուր հրի ու սրի զորությամբ տեղի հայերի մեծ մասին բռնի մահմեդականացնում են՝ արհեստականորեն փոխելով երկրամասի էթնիկական կազմի հարաբերակցությունը: 19-րդ դարի կեսերին բռնի թուրքացված հայերի մեջ մի շարժում է սկսվում ազգային արմատներին վերադառնալու համար, բայց արդեն ուշ էր: Այնուամենայինվ, արդեն որպես թոքրամասնություն, հայությունը գոյատևում է այդ երկրամասում մինչև 1988 թ.: Նվաճելով Անդրկովկասը՝ ցարիզմը նախկին խանությունը բաժանեց երկու գավառի՝ Նուխու և Արեշի: Դարասկզբին Արեշի գավառում, որը զբաղեցնում է Քուռի մերձակայքը, դեռևս կանգուն էր 18 հայկական գյուղ՝ 14 հազար բնակչությամբ՝ շրջապատված 53 հազար մահմեդականներով, որոնց մեծ մասը երբեմնի հայեր էին: 1905 թ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ Արեշի գավառի հինգ հայկական գյուղեր, որոնք գտնվում էին անմիջապես Քուռի ափին, դառնում են թուրքական վայրագությունների թիրախ: Դրանք են՝ Մազրդուն, Քանդակը, Հավարիկը, Էրմանի-բազարը և Նեմեթաբադը:

Ահա թե ինչ է ասում այդ մասին ժամանակի վավերագրերից մեկը.

«Մի շարք մանր դեպքերից հետո նոյեմբերի 28-ին Ղարաբաղի թուրքերը, Քուռ գետը անցնելով, եկան պաշարեցին Մազրդուն: ...Հավարիկ և Քանդակ գյուղերից օգնություն ստանալով՝ Մազրդուի երիտասարդները կարողացան գյուղի սահմաններից թուրքերին հալածել: Սակայն տեղի թուրքերը, նրանց հետ միասին նաև պրիստավ Մամեդ բեկ Ղալաբեկովը, տեսնելով հայ երիդասարդների հաջողությունը, ետևից հասան և նրանց կրակի մեջ առան: Հայերը, մի փոքր ժամանակ պատասխանելով երկու կողմից թափվող գնդակներին, այդ անհավասար կռվից դուրս եկան ծանր զոհեր տալով. նրանցից ընկել էին 37 հոգի:

Դաշտում տեղի ունեցած կոտորածի լուրը սարսափ ու իրարանցում առաջ բերեց գյուղի մեջ, կանայք ու երեխաները սուգ ու շիվանով դուրս փախան գյուղից, թուրք խուժանը ներս թափվեց գյուղ և սկսեց մի սոսկալի կողոպուտ, ավեր, հրդեհ: Թուրքերի մի այդպիսի բարբարոսությունը սարսափ տարածեց Հավարիկ, Քանդակ, Էրմանի-բազար գյուղերի

ժողովրդի վրա, որոնք, նախատեսելով նույն վրեժակը նաև իրենց հասնելու, քոչեցին Ղարաբաղի, որից անմիջապես հետո թուրքերը մտան դատարկված գյուղերը... և հանեցին այն ամենը, ինչ թաքցրել էին հայերը»[16]:

Վերջին ծանրագույն հարվածը Նուխու և Արեշի հայության գլխին իջնում է 1918-20 թվականներին, երբ թուրքական զորքերը նորից են անցնում այդ տարածքով: Երկրամասի հայության այն մասը, որ կարողանում է փրկվել թուրքական յաթաղանից, փրկվում է միայն փախուստի միջոցով: Իսկ երբ Ադրբեջանը դառնում է խորհրդային, փախստականների մեծ մասը, որ մինչ այդ չէր վերադարձել հայրենի օջախներ, այդպես էլ մնում է փախստական, որովհետև Ադրբեջանի բոլշևիկյան կառավարությունը այստեղ ևս, ինչպես նաև Նախիջևանում, արգելեց նրանց վերադարձը: Փախստականների մի մասը ապաստան է գտնում Հյուսիսային Կովկասում և Ռուսաստանում, մի մասն էլ Երևանին կից հիմնում է Նոր Արեշ քաղաքը:

Չնայած այս ամենին՝ երկրամասը իսպառ չի դատարկվում հայերից: Բնակչության մի մասը հեռուն չէր փախել և թուրքական զորքերի ետ քաշվելուց հետո վերադարձել էր հայրենի բնակավայրերը: Վերադարձել էին նաև Քուռի ձախափնյակը գբաղեցնող հայկական գյուղերի բնակիչները, գյուղեր, որոնք, ըստ էության, Հյուսիսային Արցախի հետ կազմում էին մի միասնական էթնիկական տարածք, որովհետև նրանց արանքում թուրքական բնակավայրեր չկային և այսօր էլ չկան:

Եվ այսպես, «Թարթառհէկի» շինարարությունը խափանելով և հատկապես Մինգեչաուրը հիդրոկայանի տեղ ընտրելով՝ Ադրբեջանի կառավարությունն առաջ էր տանում իր ազգային կլանողական քաղաքականությունը: «Թարթառհէկի» խափանումով Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղին զրկեց տնտեսական զարգացման հեռանկարից (հիշենք, որ փակեցին նաև Ստեփանակերտի գործող ջրակայանը): Հատկապես Մինգեչաուրը ընտրելով հիդրոկայանի վայր՝ ջրի տակ գցեցին Քուռի ձախափնյա հայկական գյուղախումբն իր տարածքներով՝ մեկընդմիշտ լուծելով Արեշի գավառի վերջնական ադրբեջանականացման հարցը: Իսկ այդ մարսելուց հետո, ինչպես արդեն ասվել է, սեփականացրին նաև Քուռի ու Պարտավի մերձակայքում գտնվող Հյուսիսային Արցախի հողատարածքները՝ օղակը սեղմելով Արցախական աշխարհի միջնաբերդի՝ ԼՂԻՄ-ի վզին:

Ադրբեջանի կառավարությունը «Թարթառհէկի» շինարարությունը «Սարսանգ»-ով վերանվանումով վերսկսեց միայն 60-ական թթ. վերջերին, այս անգամ արդեն որպես Մարգի ադրբեջանականացման լծակներից մեկը, որպես տասնամյակի կեսերին ղարաբաղյան ըմբոստացման քաղաքական պատասխան: Ասենք, որ շինարարությունը կատարվեց առանց մարզային իշխանությունների ու շինարարական հիմնարկների մասնակցության, անմիջապես Բաքվի հսկողությամբ: Ստեփանակերտի արխիվում այդ շինարարության մասին որևէ փաստաթուղթ չգտնվեց:

Եթե մինչև 1965 թ. ըմբոստացումը Մարզի թուրքացման հիմնական միջոցը կոլտնտեսությունների ոչխարաբուծական ֆերմաներն էին, որտեղ կուտակված հովիվներին անհրաժեշտության դեպքում կարող էին հեշտությամբ քշել և քշեցին, ըմբոստացումից հետո Ալիևը գործողության մեջ դրեց առավել հիմնարար ծրագիր: Նա սկսեց զարկ տալ Մարզի ընկերային-տնտեսական կյանքի այնպիսի ոլորտների, որոնք հեշտությամբ կարող էին ապահովել թուրքերի անարգել մուտքը Մարզ: Վերականգնվեց 1953 թ. փակված ինստիտուտը, որտեղ թուրքական բաժինը ուսանողների թվով գերակշռում էր հայկական և ռուսական բաժիններին միասին վերցված: Նախկինում փակված երկաթգծի փոխարեն կառուցվեց նորը, որի աշխատակազմը թուրքեր էին: «Սարսանգ»-ամբողջովին ծառայեցվեց մոտակա թուրքական շրջաններին: Մարզը ամբողջովին կախման մեջ դրվեց Ադդամի շրջկենտրոնից, այնտեղ էր հոսում Մարզի գյուղատնտեսական ողջ արտադրանքը: Ավարտին էր հասնում անդրկովկասյան մասշտաբի գյուղատնտեսական մեքենաների գործարանի կառուցումը, որտեղ պետք է աշխատեին տասնյակ հազարավոր բանվորներ, հասկանալի է, մեծամասամբ թուրքեր: Արդեն մշակվել էր Մարզի լուծարման պլանը: Սակայն, բարեբախտաբար, ուրբաթը շաբաթից շուտ եկավ, ոտքի կանգնեց Արցախը...

Հանձին Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության՝ բոլշևիկները համառուսական կայսրության կազմում պահում էին մի փոքրամասշտաբ ապօրինի կայսրություն, որն իր միջնադարյան ռազմատենչությամբ հանդերձ պատմականորեն դատապարտված է կիսելու իր մեծ տարբերակի ճակատագիրը: Բայց եթե ԽՍՀՄ-ը փլուզվեց առանց քաղաքացիական պատերազմի ու արյունահեղության, Ադրբեջանի պանթուրքական շրջանակները դեռևս հույսերը չեն կտրել զենքի ուժով իրենց կայսրությունը փրկելու մտքից: Սակայն դա մեռնողի վերջին ծիգերն է հիշեցնում: Ազատագրված Արցախը հերոսաբար դիմակայում է ադրբեջանական ագրեսիային և կառուցում իր նոր ու անկախ պետականությունը: Թալիշներն ու լեզգիները առաջին քայլերն են անում ազատագրական պայքարի ճանապարհին: Փլուզվում է այդ ապօրինի կայսրությունը, և նրա փլատակների վրա ստեղծվելու է ազատագրված ժողովուրդների, թող որ փոքր ժողովուրդների, համադաշնություն:

16 Ա-ՂՕ, Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում, 1905-1906 թթ., Երևան, 1907, էջ 382-383:

ԵՐԲ «ԿԱՑՆԻ ԿՈԹԸ» ՄԵՋԱՆԻՑ Է

ՋԱՐԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԲՈՆԿՈՒՄԸ

Խոր վրդովմունքով կարդացինք կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեի 1975 թ. մարտի 21-ին գումարված պլենումում մարզկոմի առաջին քարտուղար Բ. Ս. Կևորկովի «Աշխատավորների ինտերնացիոնալիստական դաստիարակության հետագա բարելավման ուղղությամբ մարզային կուսակցական կազմակերպության խնդիրները» պրովակացիոն վերնագրով զեկուցումը:

Նախևառաջ կցանկանայինք պարզվեր՝ այդ զեկուցումը Անկարայո՞ւմ է թխվել, թե՞ Բաքվում, որովհետև այնտեղ առավել հաջողությամբ պաշտպանվում են Թուրքիայի պանթուրանական նկրտումները, թուրք ցեղասպաններին: Պատահակա՞ն է, որ Կևորկովին առաջինը արձագանքում է Անկարայի ռադիոն՝ հաղորդելով, թե «վերջապես ճարվեց մի կոմունիստ, որը լիաբերան խոսեց պատմական ճշմարտության մասին և հայտարարեց, որ Ղարաբաղը միշտ էլ եղել է թուրքական, չնայած Շահումյանը ձայնը գլուխը գցած գոռգոռում էր, թե Ղարաբաղը պետք է տալ Հայաստանին»: Կևորկովի կարդացած զեկուցման բազմաթիվ դրույթներ գալիս են ասելու, որ Անկարայի մատը խառն է նման տրամադրություններն Ադրբեջանում անշեջ պահելու գործում:

Շտապենք ասելու, որ կուսակցության մարզային պլենումում նման հարց նման ագրեսիվությամբ քննարկելու համար հայ ժողովուրդը ընդհանրապես, Ղարաբաղի բնակչությունը մասնավորապես, ոչ մի, անգամ ամենափոքր առիթ չի տվել: Ղարաբաղում ո՛չ ազգամիջյան ընդհարումներ են եղել, ո՛չ հակասովետական, հակապետական ելույթներ, ո՛չ էլ ղարաբաղցին դարձել էր միջազգային իմպերիալիզմի հենակետը: Ղարաբաղը ընդամենը 1974 թ. սոցիալիստական մրցության հաղթողն է եղել և ուրիշ ոչինչ: Բայց Ադրբեջանի պանթուրքական ղեկավարությունը թույլ չտվեց, որ ղարաբաղցին գոնե մի շաբաթ վայելի այդ ազնիվ ու պատվաբեր հաղթանակի բերկրանքը՝ փոխանցիկ կարմիր դրոշը հանձնելուց երեք օր հետո սարքելով այդ զրպարտչական ներկայացումը:

Ո՞ւմ է ուզում զարմացնել պանթուրքական գաղափարախոսության ուշացած կամակատար Կևորկովը, երբ փրփուրը բերանին հայտարարում է.

«Մեր կուսակցությունը վաղուց է պատասխանել այդ հարցին՝ Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմում ստեղծելով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը: Դա էլ հենց կոմունիստական կուսակցության դիրքն է Լեռնային Ղարաբաղի հարցում, **որը լիովին ու ամբողջովին հենվում է ազգերի ու ազգային հարաբերությունների մասին լենինյան ուսմունքի վրա և համապատասխանում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի ու սովետական հայրենասիրության գաղափարախոսությանը** (ընդգծումը մերն է - Ա. Հ.)»:

Որ Կևորկովը մի սովորական դրածո է և սոսկ կատարում է զավթողական նկրտումներով տառապող Ադրբեջանի կառավարության կամքը, դա երևում է զեկուցման յուրաքանչյուր արտահայտությունից: Որ զեկուցման բուն հեղինակները ամենաանձնարձակ կերպով աղավաղում են պատմությունն ու ժամանակակից իրականությունը՝ աննախանձ հետևողականությամբ թշնամական տրամադրություններ սերմանելով երկու հարևանների միջև, դա ապացուցվում է ոչ միայն հիշյալ զեկուցմամբ, այլև Լեռնային Ղարաբաղի վերջին հինգամյակի ողջ պատմությամբ: Կարծում ենք դժվար չի լինի ԿԿ-ի արխիվից հանել տարբեր ժամանակներում ղարաբաղցիների ուղարկած ահազանգերն ու բողոքագրերը՝ պատկերացում կազմելու համար այն մղձավանջային կացության մասին, որի մեջ գտնվում է մի ամբողջ երկրամասի ազգաբնակչությունը:

Մեզ համար միանգամայն անհասկանալի ու տարօրինակ է այն հանգամանքը, որ մեր կուսակցության ու կառավարության ղեկավարությունը, որը պայքարում է լենինյան գաղափարների համաշխարհային հաղթանակի, մարդկության լուսավոր ապագայի համար, այդպիսի հետևողական անտարբերություն է ցուցաբերում Ղարաբաղի հայության այդքան հարկադրական, այդքան արդարացի բողոքների ու խնդրանքների նկատմամբ: Այդ լռության ու անտարբերության արդյունքը չէ՞ արդյոք, որ որոշ վայ մարքսիստներ ու ժողովուրդների միջև թշնամանք հրահրողներ հասել են այնպիսի հանդգնության, որ հայտարարում են, թե Ղարաբաղի հարցի ներկա, հակալենինյան լուծումը մեր կուսակցության վերջին խոսքն է: Մի՞թե այդ քաղաքական դահիճները չեն ուզում հասկանալ, որ քանի դեռ մեր երկրում իշխող գաղափարախոսությունը լենինյան ուսմունքն է, Ղարարաղի հարցի այդպիսի լուծումը չի կարող լինել կուսակցության վերջին խոսքը, եթե նույնիսկ Ադրբեջանի շովինիստական կառավարության քաղաքականության հետևանքով Ղարաբաղում չմնա որևէ հայ: Ղարաբաղի հայությունը հավատով սպասում է, որ հարազատ կուսակցությունն ու կառավարությունը արդարացի, լենինյան լուծում կտան իր ճակատագրին՝ թույլ տալով, որ ղարաբաղցին միանա իր մայր ժողովրդի հետ:

Իրականում մեր երկրի կեսդարյա պատմությունը ցույց է տալիս, որ

դարաբաղյան հարցի նման լուծման մեջ ամեն ինչ կա, բացի «ազգերի ու ազգությունների հարաբերությունների մասին» լենինյան ուսմունքից, որի դիրքերից իբր թե հանդես է գալիս Կնորկովը: Եվ եթե յուրաքանչյուր հինգ տարին մեկ Ղարաբաղն իր լավագույն զավակներին դնում է հարվածի տակ, հաճախ գոհ տալիս, պատճառն այն է, որ մարդիկ հրապուրվում են ազգային քաղաքականության լենինյան թեորիայով, փորձում են օրենքի ուժ ստացած այդ ուսմունքը կիրառել նաև Ղարաբաղի նկատմամբ, բայց միշտ էլ ճակատները գարկվում է Ադրբեջանի ղեկավարության լենինյան ֆրազաբանությամբ քողարկված գաղութատիրական քաղաքականության պատին:

Կնորկովի գեկուցումը գրող պատմության կեղծարարները դեմագոգիկ կերպով դարաբաղյան հարցը կապում են մուսավաթական ու դաշնակցական ազգայնական կուսակցությունների անվան հետ՝ քաղաքական ահաբեկչությամբ մարդկանց լռեցնելու համար: Իրականում դա կուսակցական շահախնդրություններից անհամեմատ բարձր ազգային հարց է և ունի երեքհարյուրամյա նախապատմություն:

Ցարիզմը, նվաճելով Անդրկովկասը, օրինականացրեց մի այլ նվաճողի իրավունքները Ղարաբաղում՝ ելնելով իր գաղութային քաղաքականության շահերից: «Բաժանիր, որ տիրես» սկզբունքով նա ոչ միայն ժողովուրդներին լարել է իրար դեմ, այլև կազմակերպել է ազգամիջյան կոտորածներ: Հիշենք 1905-1906 թվականների հայ-թուրքական կոտորածները: Ցարիզմը, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նաև իմպերիալիստական մյուս գիշատիչները, Անդրկովկասում ստեղծեցին փոխադարձ անվստահության ու թշնամանքի մի սոսկալի մթնոլորտ՝ հարևան ժողովուրդներին կանգնեցնելով իրար դեմ: Հոկտեմբերյան հեղափոխությունը կոչված էր Կովկասում վերջ տալու ամեն կարգի ներհակություններին՝ այդ տառապած ժողովուրդներին բերելով սոցիալ-քաղաքական ու ազգային ազատագրություն:

Լեռնային Ղարաբաղը հայ-ադրբեջանական հարաբերությունների ամենաշիկացած հարցերից մեկն էր: Իմպերիալիստներն այնպես էին խառնել այդ ժողովուրդների հարաբերությունները, այնպես էին շիկացրել հակամարտությունը, որ դարաբաղցիները 1918-20 թվականներին ստիպված են եղել տասը անգամ հավաքվելու գյուղացիական համագումարի՝ պատասխանելու Ադրբեջանի մուսավաթական կառավարության վերջնագրերին: Եվ միշտ էլ Ղարաբաղի բնակչությունը մերժել է Ադրբեջանին ենթարկվելու մուսավաթականների պահանջը, մինչև որ անգլիական օկուպացիոն զորքերի հրամանատար Թոմսոնի հարկադրանքով ժամանակավորապես համաձայնել են մուսավաթականների պահանջին՝ հարցի վերջնական լուծումը թողնելով հաշտության կոնֆերանսին:

Բոլշևիկները ուշի ուշով հետևում էին իմպերիալիստների սարքած այդ մնքենայություններին՝ իրենց ուշադրության կենտրոնում պահելով դարաբաղյան հակամարտությունը: Լենինյան գվարդիայի կենտրոնական դեմքերն Անդրկովկասում այդ հարցի նկատմամբ ունեին բավականին հստակ և իրոք լենինյան կողմնորոշում: Բավական էր, որ 11-րդ Կարմիր բանակում գտնվող մի խումբ հայ բոլշևիկներ ժամանակակից ՀՍՍՀ տարածքի ծայրամասում Հայաստանը հռչակեին սոցիալիստական և դեռ չհասած մայրաքաղաք Երևանին, Բաքվի սովետն արդեն, Կիրովի և Օրջոնիկիձեի նախաձեռնությամբ, կայացրել էր իր պատմական ու միակ արդարացի որոշումը Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի նկատմամբ՝ այդ երկրամասերը հռչակելով խորհրդային Հայաստանի անբաժանելի մաս:

Ադրբեջանի կառավարության 1920 թ. դեկտեմբերի 1-ի դեկլարացիան, սակայն, հեղափոխական բուռն խանդավառության ազդեցությամբ կատարված անկեղծ ու շիտակ մի քայլ էր միայն՝ չանցած դիվանագիտական խարդախումների ճանապարհով, և այնպես էլ իրականություն չդարձավ: Շուտով ադրբեջանական նացիոնալիստներին հաջողվում է դիվանագիտական ամենազոր գենքի շնորհիվ Նախիջևանը Ադրբեջանին միացնել Օսմանյան Թուրքիայի օգնությամբ, Ղարաբաղը պահել Ադրբեջանի կազմում՝ նորաստեղծ սովետական կարգերի դեմ մուսավաթական ապստամբության սպառնալիքով: (Քեմալական Թուրքիան հարկադրեց սովետական կառավարությանը 1921 թ. ռուս-թուրքական դաշնագրում հատուկ կետ մտցնել այդ մասին: Նրանց չհաջողվեց Զանգեզուրն էլ ձեռքները գցել, որովհետև այդ ժամանակ Զանգեզուրը դեռևս սովետական չէր):

Մի գիշերվա մեջ բոլշևիկներ դարձած ադրբեջանական պանթուրքիստ-մուսավաթականները, դաշնակցած հայ ժողովրդի նկատմամբ ի ծնե օրգանական ատելությամբ լցված Ստալինի հետ, հասան այն բանին, որ 1921 թ. հունիսի 5-ին Անդրերկրկոմը որոշեց Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում:

Սակայն այդ աղաղակող անարդարությանը պետք է ժողովրդականության շապիկ հագցնեին: Այդ նկատառումով Ադրբեջանի ղեկավարությունը Ղարաբաղում հրավիրեց գյուղացիական արտակարգ համագումարներ՝ ժողովրդի համաձայնությունը ապահովելու համար: Նման մի

համագումար տեղի ունեցավ Մարտունու շրջանի Ճարտար գյուղում, ոչ անհայտ կոմունիստներ Ասադ Կարախի և Լևոն Միրզոյանի նախաձեռնությամբ: Սեփական կուսակցության որոշումը պաշտպանելու և անց կացնելու օգտին Միրզոյանի[17] բերած փաստերին ժողովուրդը հակադրեց իր կամքը՝ «Ամեն մարդու համար իր տունն է հարազատ, իսկ մեր տունը Հայաստանն է» ձևակերպումով, և մերժեց Ադրբեջանի կազմի մեջ մտնելու առաջարկը: Հրապարակորեն անհաջողության մատնվելուց հետո Կարախն ու Միրզոյանը պահանջում են համագումարի քարտուղարներ Արամ Բաղդասարյանից (Սոս գյուղացի) և Սամվել Գրիգորյանից (Գիշի գյուղացի), որ փոխեն արձանագրությունը և գրեն հակառակը: Երբ վերջինները հրաժարվում են՝ պատճառաբանելով, որ ժողովրդի վստահությունը այդ աստիճանի չարաշահել չեն կարող, նույն գիշերն իսկ ձերբակալվում են և հասցվում Շուշի, ապա՝ Բաքու: Սամվել Գրիգորյանը հաշվեհարդարից փրկվում է պատահաբար. իր գործը քննող չեկիստը նախաձանոթ է եղել նրան Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտում սովորելու տարիներից:

Ահա այս ձևով, ժողովրդի կամքին հակառակ, լուծվեց Ղարաբաղի հարցը, և սովետական պայծառ արևի տակ, ազատագրված ժողովուրդների եղբայրական ընտանիքում ժողովրդի հարյուրհազարանոց մի հատված օրը ցերեկով գաղութացվեց: Այո՛, ժամանակն է երևույթն իր անունով կոչելու. ժողովուրդների իրարահավասար ու եղբայրական ընտանիքում Ղարաբաղը գաղութացվեց Ադրբեջանի կողմից: Այդ բանը գիտակցում են բոլորը՝ սկսած վերջին ադրբեջանցուց անգամ:

Որ Ադրբեջանի ղեկավարությունը այն գլխից էլ Ղարաբաղը դիտել է որպես ժամանակավորապես իրեն տրամադրված պատառ և խտրական քաղաքականություն է վարում նրա նկատմամբ՝ Ղարաբաղը հայաթափելու հեռահար ծրագրով, հաստատվում է Ղարաբաղի վերջին 50-ամյակի ողջ պատմությամբ: Նշենք մի քանի փաստեր միայն:

Հեղափոխությունից առաջ Ղարաբաղը երկաթգծով կապված է եղել արտաքին աշխարհի հետ: Ադրբեջանի կառավարությունը քանդել է այդ

17 Լևոն Միրզոյանը եղել է այն կոմունիստներից, որ հանրապետություններ են ղեկավարել: Դա ենթադրում է, որ նա պետք է ունենար այնքան զարգացում, որ հասկանար «հոգևոր և ազգային կապ» հասկացությունների իմաստը և չհայտարարեր, թե Ղարաբաղը «հոգևոր ու ազգային տեսակետներից սերտորեն կապված է Ադրբեջանի կենտրոնի հետ»: Սա կեղծարարություն չէ՞ վերագրված Միրզոյանին: Իսկ եթե, իրոք, նա այդպես է պատճառաբանել, ավելի վատ իր համար. ոտնահարել է անգամ այդքան պարզ հասկացությունները:

երկաթգիծը: Այսօր Ադրբեջանում ճանապարհներն ու երկաթգծերը կառուցում են այնպես, որ նրանք անցնեն միայն ադրբեջանական շրջաններով:

1939 թ. մարդահամարով Ղարաբաղն ուներ 125 հազար հայ բնակիչ, որից 45 հազարը, այսինքն՝ բնակչության երեք անդամից մեկը մասնակցել է Հայրենական պատերազմին: Կևորկովի զեկուցումը թխողները գոնե այնքան գլուխ ունենային այս փաստը չհրապարակելու համար, որովհետև սրանով ավելի քան հաստատում են Ադրբեջանի կառավարության ռասսայական վերաբերմունքը հայերի նկատմամբ:

Պատերազմի դաժան տարիներին Ղարաբաղի աշխատավորները իրենց եղած-չեղածը, նույնիսկ բնակարանները ծածկող թիթեղները, տարել են հարևան ադրբեջանական գյուղերում վաճառել մի կտոր հացի դիմաց: Մեր հարևանները այդ թիթեղների կարիքը չունենալով հանդերձ, որովհետև ապրում էին վրաններում, գնում էին այն և ցանկապատում իրենց ոչխարների գիշերատեղիները՝ հայերին տալով իրենց ավելորդ գարին: Հացագործ ղարաբաղցիները, որ իրենց թիկունքում ունեին հաց արտադրելու հինգհազարամյա փորձ, սովից կոտորվում էին, կիսաքոչվոր ադրբեջանցիները հաց էին վաճառում նրանց: Ինչո՞ւ: Որովհետև «լենինյան ազգային իմաստուն քաղաքականությամբ» ղեկավարվող Ադրբեջանի կառավարությունը ոչ միայն յուրաքանչյուր երեք հայից մեկին ուղարկեց հայրենիքը պաշտպանելու՝ դրանով լրացնելով հանրապետության զորակոչի պլանը, այլև կանանց ու երեխաների վաստակն էլ մինչև վերջ տանում էր, ժողովրդին թողնում սովահար՝ «Ամեն ինչ պատերազմի համար» հայրենանվեր կարգախոսով:

Պատերազմից հետո դեռ կուշտ փորով հաց չէր կերել ղարաբաղցին, երբ կառավարությունը կիրառեց պատմության մեջ չկրկնված և ինքնատիպ հարկահանության մի ձև: Բրդամթերման պետական պլանը կատարելու պատրվակով ժողովրդի վերմակներից հանեց բրդերը, որպեսզի... Եվլախի կայարանում թափի որպես անպետքություն: Եվ այդ ամենն իրականացրեց միլիցիայի մտրակի տակ՝ հարկի տակ դնելով առաջին դասարանցի աշակերտից մինչև ընտանիքի գլխավորը: Իրականացրեց այն բանից հետո, երբ արդեն ղարաբաղցուն արգելել էին չորքոտանի պահելը:

Տարաբնույթ պատճառաբանություններով, ընդհուպ մինչև «նավթից էլ ենք սպիրտ ստանում» կարգախոսը դրոշ դարձրած, տարբեր ժամանակներ կտրատեցին մարգի թթենիները, որը երկրամասի տնտեսության հիմնական ու դարերի խորքից եկող ճյուղերից մեկն է: Այս

հարցում նոանք ընդամենը կրկնել են լենկթեմուրներին՝ որոնք նվաճված ժողովուրդներին վերջնականապես մաշելու համար դիմում էին արտադրության միջոցների՝ այգեստանների բարբարոսական ոչնչացմանը:

Այս կարգի հազարավոր իրողությունների գլխով ցատկելով և օգտագործելով այն հանգամանքը, որ ոչ ոք չի կարող գրավոր վիճակագրական տվյալներով ցույց տալ իրենց ասածների կեղծիքը, պատմության կեղծարարները բերում են «տվյալներ»՝ ապացուցելու համար, որ իբր թե Ադրբեջանի կառավարությունը Ղարաբաղին ավելի լավ է նայում, քան իրեն իսկ Ադրբեջանին: Սակայն չնայած յոթ կողպեքի տակ է պահվում մեր երկրի տնտեսական կյանքի վիճակագրությունը, վիճակագրություն, որի անարգել օգտագործմամբ Լենինը ժամանակին գրեց «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» հանրահայտ գիրքը, այնուամենայնիվ, իրականության իսկական պատկերն արտացոլող առանձին փաստեր, բեկուզ և 10 տարին մի անգամ, դուրս են գալիս առանձին իրազեկ մարդկանց լեզվի տակից և դառնում ժողովրդի սեփականությունը: Եվ ահա, պարզվում է, որ 1974 թվին սովետական յուրաքանչյուր քաղաքացու ընկել է 40 կգ միս, Ադրբեջանի յուրաքանչյուր քաղաքացու՝ 38 կգ, իսկ ղարաբաղցի քաղաքացուն՝ ընդամենը 4 կգ: (Այս կարգի վիճակագրական տվյալներ դուրս բերելու համար չէ՞, արդյոք, որ ԼՂԻՄ վիճվարչության պետ Զաքարյանի պատրաստած ժողովածուն արգելվեց, իսկ հեղինակն էլ հեռացվեց աշխատանքից որպես նացիոնալիստ):

Այս է իրական ճշմարտությունը, ինչքան էլ պանթուրքիզմի անփառունակ կառքին լծված կևորկովները փորձեն խեղաթյուրել իրականությունը և Ղարաբաղի անմխիթար վիճակը ներկայացնեն որպես «լենինյան ազգային իմաստուն քաղաքականության» կենսագործման օրինակ: Կևորկովյան տրամաբանությունից հետևում է, որ երախտամոռ ղարաբաղցիները, վարակված նացիոնալիզմի թույնով, չեն ուզում գնահատել Ադրբեջանի կառավարության հայրական հոգատարությունը իրենց նկատմամբ, ամեն կերպ խաթարում են ժողովուրդների լենինյան բարեկամությունը, իսկ մարզային կուսակցական կազմակերպությանը այլ անելիք չի մնում, բացի «նացիոնալիստական նախապաշարումների դրսևորումների» դեմ պայքարելուց: Այդպիսի դրսևորումներից մեկն էլ 1967 թվականի հուլիսին դատական պրոցեսի ժամանակ Ստեփանակերտ քաղաքում կատարված հանցագործությունն է, որի «աստառը ե-

ղել է ազգային զգացմունքների խեղաթյուրված դրսևորումը»:

Իսկ ո՞րն է իսկությունը, ի՞նչ էր պատահել:

1966 թվականի սեպտեմբերին Ղարաբաղի № 2 խաղողագործական սովխոզի դարոցի դիրեկտորի անմիջական ղեկավարությամբ գաղանաբար հոշոտվել է ինֆանտա մի հայ աշակերտ (սպանվելուց առաջ երեխային բռնաբարել են, հանել աչքերը, կտրատել մարմնի տարբեր մասեր, գլխատել, սեռական օրգանն էլ կտրել են, դրել բերանում): Դա զուտ թուրքամետ ոճրագործություն էր, սադիզմի մի նողկալի դրսևորում, որն իր կոչման բարձրության վրա գտնվող պետության դատարանը պետք է դատեր օրենքի ամբողջ խստությամբ, որպես կրկնակի, եռակի հանցագործություն: Եվ ի՞նչ: Դատարանը փրկում է գլխավոր հանցագործին: Ավելին: Այդ բազմակի հանցագործի կինը դատարանի դահլիճով մեկ բղավում է.

- Մի՛ վախենա, ոսկով ազատել եմ քեզ գնդակահարությունից, նույն ոսկով էլ ազատելու եմ բանտից:

Ի դեպ, պետք է նկատել, որ այդ անլուր ոճրագործությունը, ինչպես նաև դրան հաջորդած գիշերավար կատարող տրակտորիստների և մի շարք այլ անմեղ մարդկանց սպանությունները, որ այնպես էլ հետաքննության չենթարկվեցին, պատասխանն էր այն իրողության, որ նույն թվականի օգոստոսին Ղարաբաղի աշխատավորությունը 52 հազար ստորագրությամբ մի հերթական անգամ համախոսական էր ներկայացրել Մոսկվա՝ ադրբեջանական լծից իր ազատագրման պահանջով:

Տուժող կողմը շուրջ մի տարի համբերատար սպասել է սովետական արդարադատության վճռին, իսկ այն բարձրադաս չինովնիկների կեղտոտ ձեռքերով դարձել է ավազակային արդարադատություն, որը և դրդել է ժողովրդին՝ դիմելու ինքնադատաստանի: Դա ժողովրդի արժանի ապտակն էր իշխանությամբ օժտված այն սրիկաների երեսին, որոնք, լենինյան ֆրազաբանությամբ պճնազարդված, անց են կացնում ամենանողկալի նացիոնալիստական, ռասսայական քաղաքականություն մի բուռ ժողովրդի նկատմամբ:

Չբավարարվելով դատական կոմեդիայով՝ Ադրբեջանի կառավարությունը դիմում է հաջորդ քայլին. Մինիստրների խորհրդի նախագահ, վերցրած մի խումբ մոլլաների, կազմակերպում է հանցագործների հանդիսավոր, կառավարական թաղումը, երևի, ցեղասպանության ուշացած փաստաբան Կևորկովի տրամաբանությամբ, այնտեղ, թաղման արարողության ժամանակ, «լենինյան ինտերնացիոնալիզմի» դասեր

տա ժողովրդին: Էլ չենք խոսում այն բազմաթիվ անմեղ զոհերի մասին, սկսած միլիցիայի աշխատողներից մինչև այլևայլ գործերով բանտարկված մարդիկ, որոնք զոհվեցին այդ դատական կոմեդիայի պատճառով: Ուրիշ ի՞նչ պետք է սպասել մի կառավարությունից, որը նույնիսկ քրեական հանցագործներին դատելու ժամանակ անկողմնակալ լինելու քաջություն չունի:

Եվ այսպես, կյանքի բոլոր բնագավառներում, տնտեսականից մինչև քաղաքական ու մշակութային, մեր հասարակության զարգացման բոլոր էտապներում, շարունակվում է խտրականության ու ճնշման այդ քաղաքականությունը առանց որևէ փոփոխության:

Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի քաղաքականության ամենատխուր հետևանքն այն է, որ բնակչությունը ստիպված լքում է իր դարավոր օջախը՝ միջինասիական անապատները գերադասելով ալպիական բնություն ունեցող իր հայրենիքից: 1926-70 թվականների ընթացքում ադրբեջանցիները համարյա երեք անգամ ավելացել են, իսկ Ղարաբաղի հայությունը ոչ միայն աճ չի տալիս, այլև գնալով պակասում է: Ադրբեջանցիները 1 միլիոն 428 հազարից դարձել են 3 միլիոն 777 հազար, իսկ Ղարաբաղի հայերը 111 հազարից դարձել են ընդամենը 121 հազար:

Եթե նույնիսկ մի կողմ դնենք մյուս բոլոր հանգամանքներն ու փաստերը, միայն այս փաստը բավական է համոզելու համար, որ Ղարաբաղի հարցը սխալ է լուծվել և սխալ է այդ լուծումը կապել Լենինյան ազգային քաղաքականության իրականացման հետ, հռչակել որպես կուսակցության վերջին խոսք: Միայն այս փաստը բավական է համոզելու համար, որ հարցի ներկա լուծումը հակաժողովրդական, գաղութատիրական բովանդակություն ունի, և պետք է հրաժարվել նրանից: Հարցի միակ ճիշտ, իսկական Լենինյան լուծումը այն է, ու Ղարաբաղը միացվի իր մայր հայրենիքին՝ Հայաստանին:

1975 թ., ապրիլ

ԻՍԿԱՊԵՍ, ԻՆՉՔԱ՞Ն ԿԱՐՈՂ ԵՆՔ ՎՆԱՍԵԼ ԺՈՂՈՎՐԴԻՆ*

(Պատասխան պարոն Հախվերդյանին)

Ամենայն համբերությամբ կարդացի Ձեր հոդվածը: Քանի որ Դուք մտավորականության մի որոշակի խավի տրամադրությունն եք արտահայտում, մտավորականություն, որ տասնամյակներ շարունակ գրական-գիտական կյանքի առաջնորդի կեցվածքում է եղել, պատասխանն էլ այդ կտրվածքով կլինի՝ առանց խաթարելու Ձեր անձի նկատմամբ ունեցած հարգանքս:

Առաջինը վաղուց տանջող այն մտահոգությունն էր, թե, իրոք, դուք՝ մտավոր կյանքի «առաջնորդներդ», ինչքա՞ն կարող եք վնասել այս ժողովրդին: Տեսնո՞ւմ եք, չեմ համարձակվում ժողովուրդ բառին որոշիչ ավելացնել: Թե ասեմ՝ «այս ըմբոստ ու համառ ժողովրդին», երեսպաշտ ձևով ինձ էլ եք մեղադրելու ազգամոլության ու ազգային սնապարծության մեջ: Թե ասեմ՝ «այս տանջված ու տառապած ժողովրդին»՝ ողբասացությամբ ազգը փոշիացնող եք դարձնելու ինձ: Վերջապես ի՞նչ է Ձեր ուղածը, որ տասնամյակներ շարունակ ներքին ճակատ եք կազմել առանց այն էլ արտաքին թրքության ստեղծած դժոխային պայմաններում տապակվող այս ժողովրդի դեմ:

Այդ Դուք՝ գիտնականներդ չե՞ք, որ Կաղանկատվացուն դարձրել եք պատմության մեջ գոյություն չունեցող աղվան (ալբան) ժողովրդի պատմիչը: Իսկ երբ այսօր ձեր գործը շարունակում են բունիաթովները, փարիսեցիական աղմուկ եք բարձրացնում պամության կեղծարարության դեմ:

Այդ դուք՝ գիտնականներդ չե՞ք, որ «ինտերնացիոնալ» ստրկահաճությամբ գրել եք, թե Ղարաբաղի ու Զանգեզուրի ազատագրական պայքարի ժամանակ եղբայր ադրբեջանցիները մեզ հետ կռվում էին պարսկա-թուրքական նվաճողների դեմ: Դրանից հետո ի՞նչ մեծ բան է, որ ազերբուրք պատմաբանն էլ զարգացնի ձեր ասածը և գրի, թե Դավիթ-Բեկի զորքերի կազմում ադրբեջանցիներից բացի եղել են նաև հայեր:

Այդ դուք՝ գիտնականներդ չե՞ք, որ ոտնատակ տալով բարոյական ամեն մի սահման, գրել եք, թե դաշնակցականներն ու մուսավաթականները Շամխորի մոտ կոտորել են հայրենիք վերադարձող ռուս զինվորներին: Այն դեպքում, որ այնտեղ ոչ մի հայ չի եղել: Այդ դուք՝ գիտնականներդ չե՞ք, որ տասնամյակներ շարունակ Աբովյանին ներկայաց-

* Առաջին անգամ տպագրվել է «Հայ գրող» շաբաթաթերթում, 1991 թ., 15 մայիսի:

նում եք ծուռ հայելու մեջ և հասել եք նրան, որ այսօր տգետ մարդիկ ձեռք են բարձրացնում նաև նրա հուշարձանի վրա: Ձեր անձնական մասնակցությունը չկա՞ այնտեղ, քանի որ դուք եք հայտարարում. «էլ ինչ Աբովյան, որ ցարի ջատագովը չլինի»: Այդ չէ՞ ձեր վաստակը:

Դուք, որ աջ ու ձախ ցիտատներ հավաքագրելով գիտություն եք շինում, որ կանգ չեք առնում նույնիսկ գերեզմանի ճանապարհից ետ բերած ու գահին բազմեցրած Չեռնենկոյին վկայակոչելուց ձեր ելույթներում, գիտե՞ք, արդյոք, որ Աբովյանը իր վեպում 18 անգամ անդրադարձել է հայ-ռուսական հարաբերություններին, որից երկու անգամ է ցարի անունը հիշատակում, այն էլ հավուր պատշաճի, իսկ մյուս բոլոր դեպքերում Ռուսաստանն է, ռուս ժողովուրդը, ռուսաց ոգին:

Այդ դուք՝ գիտնականներդ չե՞ք, որ դարաբաղյան շարժման ամենա բուռն ու հուզական վերելքի օրերին գրական մամուլը տրամադրեցիք մի ելույթի, որտեղ 1892 թ. խոլերայից մահացած Մամադ Շաֆի բեկը 1932 թ., այսինքն՝ իր մեռնելուց 40 տարի հետո, մի երիտասարդ չեկիստի պատմում էր, թե ինչպես են սպանել Աբովյանին և որտեղ թաղել: Վախենալով, թե «Գրական թերթը» քիչ ընթերցողներ կունենա, իրար ետևից երկու անգամ էլ հեռուստաէկրան եք տրամադրում այդ թուրքաբարո կեղծիքին: Իսկ հայոց մամուլն էլ, այն ժամանակ միայն պաշտոնական և ձեր կալվածատիրական միահեծան սեփականություն, իր դռները ամուր փակեց ճատասխանի առաջ:

Այսօր էլ Ձեր արշավանքը հայ ժողովրդի քառասուն մեղքերի դեմ: Այդ ի՞նչ հակառուսական կողմնորոշում է, որտե՞ղ է դրսևորվել, ի՞նչ ձևերով, ո՞վ է որևէ ռուսի չոռ ասել, ո՞վ է որևէ ռուս գինվորի կողքով անցել:

Դուք չեք կարող որևէ մեկին համոզել, որ ամբողջատիրական վարչակարգի դեմ սկսված պայքարն արդեն իսկ այդ պայքարի առաջնորդը դառնալուն ձգտող ռուս ժողովրդի դեմ է ուղղված: Այսօր մեծից փոքր գիտեն, որ Պետրոս Առաջինից սկսած կայսերապետական վարչակարգի հետևողական ձգտումը համաշխարհային տիրապետության հասնելու համար, որը լենինյան «նոր» գաղափարների դրոշի տակ ընդունեց ծայրահեղ չափեր՝ ընդգրկելով բոլոր աշխարհամասերը, ամենից շատ հարվածել է ռուս ժողովրդին: Որ այդ բազմաչարչար ու ոտնատակ տրված ժողովրդի զավակները մարդկային ցուցակի մեջ էին մտնում միայն պատերազմների ժամանակ: Որ ռուսական ստրկատիրությունը ամենից նողկալին էր թեկուզ այն պատճառով, որ մարմնականից ավելի արմատակալած էր հոգևոր ստրկությունը:

Սկսած Ռադիշչևից մինչև Սախարով ու Ելցին, Ռուսաստանի լավագույն զավակները գերմարդկային ճիգեր են թափում ռուս ժողովրդին վեր բարձրացնելու, նրա հոգու մեջ ազատության ու մարդկային արժանապատվության զգացմունք արմատավորելու համար, բայց ամեն անգամ էլ հաղթող են դուրս գալիս «բատյուշկա» ցարն ու «իմաստուն» առաջնորդը: Այսօր շարժվել սկսած ռուս ժողովուրդը կհասնի՞ իր համար բաղձալի ազատության, թե՞ նորից կընկնի «առաջնորդների» ծուղակը: Այսօր սա՛ է հրապարակի ամենակարևոր հարցը:

Որ կայսերապետական վարչակարգից ամենաշատ տուժողը ռուս ժողովուրդն է, այդ քաջ գիտեին նաև հպատակ ժողովուրդների առաջավոր զավակները և պատմության բոլոր անցումային ժամանակներում իրենց ժողովրդի փրկության ելքը կապում էին Ռուսաստանի առաջավոր, հեղափոխական-ազատագրական պայքարի ուղին բռնած ուժերի հետ՝ գտնելով, որ ազատագրված Ռուսաստանը իր ձեռք բերած ազատությունից բաժին կհանի նաև ենթակա ժողովուրդներին: Այսօր էլ միության բոլոր ժողովուրդները ոտքի են կանգնել նույն ակնկալությամբ:

Հայ իրականության մեջ Աբովյանն էր առաջինը, որ իր ամբողջ խորությամբ ըմբռնեց այս ճշմարտությունը: Անդրկովկասի նվաճումից հազիվ մեկ տասնամյակ անց նա տեսավ «ազատարար» ցարի բերած «բարիքները» և Չեռնիշևսկու կացնի կոչից քսան տարի առաջ դրեց գաղութարարների դեմ «մուշտու ու քացու» արդարադատության անհրաժեշտության պահանջը: Նա էր, որ իր դարակազմիկ վեպի վերնագրից մինչև վերջին պարբերությունը խիզախորեն մարտնչում էր ցարիզմի գաղութային քաղաքականության դեմ՝ կանգնելով դեկաբրիստական շարժմամբ ազատագրական պայքարի ուղին բռնած Ռուսաստանի դիրքերում, մարտահրավեր նետելով ցարիզմին:

Աբովյանի գործը շարունակեցին հետագա սերունդները՝ ամեն անգամ կանգնելով ազատագրվել փորձող Ռուսաստանի կողմը: Նայեցեք վերջին 150 տարվա պատմությանը, մատնացույց արեք մի դեպք, որ խախտած լինի այս օրինաչափությունը: Դեկաբրիստներ ու Պուշկին-Աբովյան, Չեռնիշևսկի-Նալբանդյան, նարոդնիկներ՝ նույնը, սոցիալ-դեմոկրատներ՝ նույնը, էսէռներ՝ նույնը, բոլշևիկներ՝ նույնը, կայսերապետությունը մերժող Ռուսաստան, նույն ճանապարհին կանգնած Հայաստան: Մատնացույց արեք հակառակը: Չեք գտնի: Նույնիսկ հասարակական այն խավերը, որոնք շահերի բերումով պետք է որոնեին ցարիզմի կամ ամբողջատիրության հովանավորությունը, իրենց գտել են նրանց հակառակորդների բանակում: Այսօր էլ անհիմն է այն մտավախությունը, թե Հայաստանի կոմկուսը կարող է դառնալ գորբաչովյան վարչակարգի կամակատարը: Այդպիսի բան չի լինի:

Սկսած հնդկահայ գաղափարախոսներից՝ հայ ժողովուրդը կողմնորոշվել է դեպի Ռուսաստան, որդեգրել Ռուսաստանի հետ, բայց ոչ նրա ստրուկը, Ռուսաստանի հետ, բայց հավասարի ու բարեկամի իրավունքով քաղաքականությունը, որի տրամաբանական ավարտն անկախության գործընթացի սկիզբն ազդարարող Հռչակագիրն է: Այնպես որ, մեր Հռչակագրի առաջին քարերը դրել են Օրին և Էմինը, Աբովյանն ու Նալբանդյանը: Այդ դուք եք, որ ամբողջատիրական վարչակարգի պահանջներին համապատասխան ստրկահաճ տեսություններ եք հորինել պատմական ճշմարտությունը արժեքավորելու փոխարեն, ժողովրդին կտրել իր արմատներից՝ նոր սերնդի ուսերին զցելով ձեր քանդածը վերականգնելու ծանր գործը:

Հակառուսական տրամադրությունների ապացույց-խրտվիլակ եք դարձրել «երրորդ ուժի բացառման օրենքը», այն ներկայացնում եք ծայրահեղ մեկնաբանությամբ: Իսկ ո՞վ է ասել, թե այդ օրենքը փակում է երրորդ, չորրորդ, հինգերորդ ուժերից օգտվելու ճանապարհը: Դա ընդամենը նշանակում է, որ ամեն մի ժողովուրդ իր սանձերը չպետք է տա մի երրորդ ուժի ձեռք և ոչխարային համակերպությամբ սպասի, թե ինչպես պետք է նա տնօրինի իր ճակատագիրը: Դա նշանակում է, որ ամեն մի ժողովուրդ առաջին հերթին ինքը պիտի տեսնի իր գլխի ճարը, իր հույսը առաջին հերթին իր վրա դնի՝ հնարավոր դեպքում օգտվելով նաև այլ ուժերից:

Եթե մենք ազգովի այդ գաղափարին լինեինք, այսօր այս վիճակում չէինք լինի: Եթե մեր «իմաստուն ու հեռատես ջոջ աղաները» չխանգարեին ժողովրդին, Սումգայիթից անմիջապես հետո դարաբաղցին իր հարցը կլուծեր թեկուզև այնքանով, որ Դարաբաղը կմաքրեր եկվոր տարրերից: Եթե Լաչինի ճանապարհի փակման առաջին փորձը հակահարվածով խափանվեր, այսքան տեսական ու անմարդկային շրջափակում չէին մտցնի: Եթե երկրաշարժի առիթով աշխարհի տված ողորմության առաջին թալանի ժամանակ Նորաշենը արժանի պատասխանի հանդիպեր, այդ թալանը համապետական քաղաքականության մակարդակի չէր բարձրանա: Այդպիսին է երրորդ ուժի բացառման օրենքը: Իսկ մենք ինչ ենք արել և ինչ ենք անում: Ամեն անգամ մեզ կոտորել տվողների հասցեով հեռագրեր, բողոքներ ու խնդրագրեր ենք ուղարկում, թե դուք այս եք, այն եք, իսկ բարոյական հաղթանակը մեր կողմն է: Բարոյականությո՞ւն են թողել, որ բարոյական հաղթանակի պոչից ենք բռնել: Այսօր էլ դեռ այդ մտայնությունից չենք ազատագրվել, լրջորեն չենք գործում մեր գլխի ճարը տեսնելու համար, չնայած ամպերը գնալով գերխտանում են:

«Փոքր ածու, զորությամբ տկար», բայց խոտոր ու անհնազանդ

հայ ժողովուրդն իր հազարամյակների մաքառումների ճանապարհին միշտ էլ հարկադրված է եղել բախվել իրենից տասնապատիկ, հարյուրապատիկ հզոր ուժերին: Եվ դիմադրել ու դիմացել է՝ իր բազմաթիվ պարտություններով ու սակավ հաղթանակներով: Դիմադրել ու դիմացել է՝ իր լույսն ու ջերմությունը տալով աշխարհին:

«Էս ա հսկայություն, սրտապնդություն, մեծահոգություն, քաջություն, կամաց հաստատություն, հոգու կարողություն ու զորություն, որ աշխարքիս վրա ջրհեղեղիցը դեսը՝ մեկ ազգ էլա մինչև էսօր՝ չի կարաց ու չի էլ կարող ցույց տալ: Սար ըլեր՝ փուլ կգար, երկաթ ըլեր՝ կհալչեր, կմաշվեր, ծով ըլեր՝ կպակասեր, կցամաքեր. բայց Աստվածասեր Հայ ազգը՝ մինչև էսօր գերօրինակ հսկայությամբ տարավ բոլորը ու իր անունը պահեց»: (Ինչպե՞ս է, որ Ձեր ցիտատների անտառում տեղ չի գտել այս եզակի «ազգային սնապարծությունը»: Զգուշացա՞ք Աբովյանի անունից):

Այսպիսի ջերմ ու հուսադրող խոսքերով են զորացրել ժողովրդին նրա լավագույն զավակները պատմության բոլոր ճգնաժամային պահերին: Իսկ դուք կանգնել եք այսքան ցավ ու ավերի մեջ ընկած, այսքան զսպանակված անորոշության մատնված ժողովրդի գլխին ու եղերամայրերի դեր ստանձնել: Ո՛չ, ժողովուրդը իր հավաքական բնազդով հասկացել է, «թե այնտեղ է լոկ սխրանքն սկսվում, Ուր վերջանում է ամեն մի հնար»...

Ազատության շոշափելիորեն մոտիկությունը և այն ձեռք բերել չկարողանալու անզորությունը մեզ շատ է մղել ինքնակեղեքման, մշակել բոլոր մեղքերը մեզ վրա վերցնելու նարեկացիական հոգեբանություն: Կարդացեք մեր հեղափոխական կուսակցությունների 1921 թ. այս կողմ գրած հրապարակումները, այդ ծով ինքնակեղեքման գրականությունը: Բայց մի կողմ կանգնենք ու հարց տանք. ի՞նչ կարող էր անել հայկական Հանրապետության ղեկավարությունը աքաքուրքյան գնդանի և լենինյան կռանի արանքում, որ չարեց իր գոյությունը պահպանելու համար: Ամեն ինչ արեց, բայց ոչինչ չստացվեց: Համաշխարհային շարժման անիվն այս անգամ էլ կայսեր ձիու պոչի տակ մի ճանճ մտցրեց...

Ինքնակեղեքման նույն ոգին է դրսևորվել նաև Սոս Սարգսյանի մտորումներում: Բայց մենք Վոլսկու կառավարում էինք ստեղծե՞լ, որ հետո էլ այն պաշտպանենք: Չէ՞ որ Վոլսկու կառավարումը կայսերապետական վարչակարգի քաղաքականության հերթական դրսևորումներից մեկն էր, որից մենք օգտվել չէինք կարող, չէին թողնի: Այդ կառավարմամբ նրանք ստուգեցին մեր ախորժակը և դեմ տվին Պոլյանիչկոյին՝ զորացված սաֆոնովյան բանդիտիզմով: Իսկ դուք մանկական հրճվան-

քով հայտարարում եք, թե «մի շատ լրջախոհ մարդ» Սիդորովը, ընդարձակել է Ղարաբաղում կատարվելիք միջոցառումների ձեր ծրագիրը: Իսկ ինչո՞ւ չթողեցին, որ իրականանա: Որովհետև Կրեմլի համար Սումգայիթն առաջին հարվածն էր, նա ծրագրած ուներ Բաքուն ու Ադրբեջանի ողջ տարածքի հայաթափումը («իսկ ի՞նչ եք մտածում Բաքվի 230 հազար հայերի մասին»): Այսօր էլ օրակարգային են դարձրել Արցախը: Վկան՝ Սումգայիթի նախորդ օրը արեգիոնենտի հղած նամակի երկրորդ հրատարակությունը Օգալին բավարարություն տալու համար: Ահա այս մասին պիտի մտածենք, ազգովի նախապատրաստվենք մի նոր Սարդարապատի, հնարները սպառած մի նոր սխրանքի:

Վոլսկու կառավարում տապալեցի՞ք: Չէ մի՝ պոզեր: Ուրիշ ի՞նչ արեցինք մատ ծծող քաղաքագետներս:

Կրեմլը տեսնելով, որ ժողովուրդը չի հավատում իր հերթական խաբեությանը և լուրջ պահանջներ է առաջ քաշում, 1987 թ.-ից անցավ կայսրությունը արյան բաղնիքներով փրկելու քաղաքականությանը: Ամենաշատ չոր վառողը հայ-ադրբեջանական հարաբերությունների արանքում էր կուտակված, և պայթեցրին այն՝ մեթոդիկ հետևողականությամբ տարածելով կայսրության բոլոր հնարավոր և իրենց համար կարևոր անկյուններում: Ազգամիջյան առճակատման սերմերը ցանեցին Հայաստանի գերբը Բաքվում փոխելով, Չարդախլուի դեպքերով, մինչև հասցրին ղարաբաղցիներին ոտքի կանգնեցնելը: Վերջին երեք տարիներին տարբեր տեղեր կատարված ու կատարվող արյունահեղությունների ու դեռևս անարյուն առճակատումների միակ հեղինակն ու կազմակերպիչը Կրեմլն է:

Ինչո՞ւ Կրեմլն անտարբեր ականատես եղավ նաև ռուսների կոտորածին Բաքվում: Ինչո՞ւ անջատվել ցանկացող հանրապետություններին դեմ են անում «իսկ ի՞նչ պետք է լինի ձեր մեջ ապրող ռուսների ճակատագիրը» պրովոկացիոն հարցը: Դարձյալ հետապնդվում է նույն նպատակը. բորբոքել վիլիկոռուսական շովինիզմը, ռուսներին և մյուս ժողովուրդների լարել իրար դեմ, ռուսների ձեռքով ծնկի բերել մյուս ժողովուրդներին: Վերջին հաշվով, առանց ռուսների նրանք հենարան չունեն:

Բարեբախտաբար դա հասկանում են բոլորը: Վկան Լիտվան է, ուր երեք տարի է չեն կարողանում ստեղծել Սումգայիթ կամ Բաքու և ստիպված դիմում են բացահայտ լկտի միջոցառումների: Բոլորը, այդ թվում և ռուսները, հասկանում են, որ ապագա ինքնուրույն պետությունների կազմում ռուսները ապրելու են այնպես, ինչպես այսօր իրենց ազգակիցները ապրում են Անգլիայում, Ֆրանսիայում, Ամերիկայում և այլուր: Բոլորը, այդ թվում նաև ռուսները, դուրս են եկել կայսերապետության դեմ: Արդեն ռուսներն են իրենց ձեռքը վերցնում ազատագրական պայքարի ղեկը, և «ռուսիո ազատությունը համայան մարդկության համար մեծ խորհուրդ ունի» նալբանդյանական ակնկալիքը այսօր էլ արդիական է ու սպասելի: Արդեն շարժմանը մասնակից որևէ ժողովրդի մեղադրել հակառուսական տրամադրությունների մեջ, առնվազն զրպարտություն է: Իսկ հայ ժողովրդի հարցում՝ գերզրպարտություն:

Ձեր ելույթը միգուցե տպավորություն գործեր 1988 թ.-ից առաջ, բայց այսօր, երբ ողջ Միության ժողովուրդներն են ոտքի կանգնել, և ռուսներն էլ են գլխի ընկել իրենց գաղութ լինելը և տարբեր ձևերով պահանջում է նույնը՝ ազատություն, դուք, կամա թե ակամա, ջուր եք լցնում ոչ թե առաջադեմ, այլև սևհարյուրակային Ռուսաստանի ջրաղացին:

Վերջապես վեր բարձրացրած մի հարցի մասին ևս: «Մեր մտավորականության մակարդակի մասի՞ն եք ուզում գաղափար կազմել՝ «Հայ գրող» թերթը կարդացեք՝ կեղտոտ սպիտակեղենի լվացք: Մեջտեղը կշիռ ունեցող գրականություն չկա, բայց փոխարենը կա գրողների երկու միություն՝ հարյուրավոր անդամներով, պատրաստ միմյանց բզկտելու»:

Այդ վիճակը դուք չե՞ք ստեղծել՝ ամբողջատիրական վարչակարգի ուժով ֆեոդալական սեփականություն դարձնելով մամուլի ու հրատարակչությունների բոլոր օրգանները՝ բացառելով «այլախոհների» բանասիրական ճշգրտումների հրապարակումն անգամ: Ինչո՞ւ կոմունիստի տոմսով հայրենադարձված Լևոն Խաչերյանը ստիպված նորից վերադարձավ «մեռնող կապիտալիզմի» երկիրը: Որովհետև հանդգնել էր «Դատաստանագիրք հայոց» միջնադարյան մշակութային կոթողի հրատարակության մեջ տեքստաբանական սխալներ մատնանշել և արժանացել այնպիսի անմարդկային մեկուսացման, որ հավաքարարներն անգամ վախենում էին բարևել նրան:

Երանի թե «Հայ գրողի» շուրջը հավաքվեին այնպիսի առողջ ուժեր, որ կարողանային մաքրել մեր մտավոր կյանքում արմատակալած բարքերի ավգյան ախոռները՝ նպաստելու համար գրականության ու գիտության բնականոն զարգացմանը:

Պա՛րոն Հախվերդյան, համաձայնեք, որ մտավոր կյանքի այս վիճակի համար թերևս ամենաքիչ մեղավորներից մեկը Դուք եք, բայց դա բնավ էլ չի մեղմացնում Ձեր պատասխանատվությունը՝ որպես մտավորականության այդ խավի տրամադրությունների արտահայտիչ:

«ԱՆԿԱՆԽԱՏԵՍԵԼԻԻ» ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ղարաբաղցիների 70-ամյա ազատագրական պայքարը 88-ին վերածեց համազգային պայքարի՝ ընդգրկելով ողջ հայությանը: Դժբախտաբար, ինչպես 65-ին, այնպես էլ 88-ին հայերին ընդառաջելու խաբուսիկ տպավորությամբ շարժումը լիցքավորում էր Կրեմլը՝ նրա արդյունքները ծառայեցնելով իր նպատակներին: 1965 թ.-ին ղարաբաղցիների յուրահատուկ հանրաքվեն՝ 52 հազար ստորագրություններ երեք հասցեով (Մոսկվա, Երևան, Բաքու) Կրեմլին անհրաժեշտ էր հայերի ազգային շահերը երիցս վաճառելու գնով հերթականորեն սիրաշահել Թուրքիային: Այդ ստորագրությունները 14 մլրդ. օգնության և այլ զիջումների հետ միասին Կոսիգինը դրեց Աթաթուրքի դամբարանին՝ հայտարարելով, որ ՍՍՀՄ-ը Թուրքիայից տերիտորիալ պահանջներ չունի: 1988 թ. Ղարաբաղն էր կայսրության այն ամենալիցքավորված օջախը, ուր կուտակված հարյուրամյա չոր վառոդի պայթեցումով, ազգամիջյան թշնամանք ու արյունահեղություն կազմակերպելով պետք է սկսվեր կայսրության լուծարումը: Չպետք է մոռանալ, որ Սումգայիթը կազմակերպեցին Լուկյանովն ու Դոլիգիխը Հայաստանից, Դեմիչևը, Ռազումովսկին, Կատուսևը, Ադրբեջանի ղեկավարության գլուխ անցած, Ադրբեջանից: Եվ լուծարվեց կայսրությունը՝ իր այսօր էլ դեռ անկանխատեսելի ու չերևացող հետևանքներով: Երկու դեպքում էլ ժամանակին չկարողացանք հասկանալ կրեմլյան խարդավանքները և արդարության հաղթանակի նկատմամբ միամիտ հավատով ներքաշվեցինք արյունոտ կոնֆլիկտի մեջ:

Այսպես թե այնպես, շարժմանը մենք նախապատրաստվում էինք, շարժումը մենք սկսեցինք, սկսեցինք՝ ակնարկված «կարմիր հույսերով» խանդավառված, հաղթանակի վճռականությամբ: Շարժման ակունքներում կանգնած էին մարդիկ, որոնք տասնամյակներ շարունակ ուսումնասիրել էին ղարաբաղյան հիմնահարցը, տասնամյակներ շարունակ պայքարել էին պատմական անարդարության վերացման համար և վաստակել մասնագետի համարում: Շարժման հենց սկզբից նրանց կողքը կանգնեցին բռնապետության նկատմամբ ընդդիմադիր, ազգային շահերով մտահոգ բոլոր ուժերը՝ ժողովրդական հուժկու շարժումը նպատակամղված հունի մեջ պահելու առաջադրանքով:

Երբ ազատագրական շարժումը ընդունեց համազգային բնույթ, և հրապարակ դուրս եկան միլիոնավոր մարդիկ, Կրեմլը անմիջապես ձեռնամուխ եղավ վտանգավոր մարդկանցից ազատվելու գործին: Տարիներ շարունակ մեն-մենակ բռնատիրության դեմ պայքարող Սուրեն Այվազյանին ինչ-ինչ մեղադրանքով նետեց բանտ, և այսօր էլ նրա ձայնը չի լսվում որևէ տեղ: Պառույր Հայրիկյանին, որին 88-ի գարնանը ժողովուրդն անգամ չէր ընդունում, թույլ չէր տալիս ելույթ ունենալ հանրահավաքներում՝ չցանկանալով որևէ այլ բան լսել ղարաբաղյան հիմնահարցից դուրս, Կրեմլը զրկեց քաղաքացիությունից և վտարեց երկրից: Բռնապետության կամակատարի դեր չստանձնող Սուրեն Հարությունյանին Կրեմլը հարկադրեց հրաժարվել քաղաքական կյանքից և պատվավոր աքսոր ուղարկեց արտասահման: (Ժամանակին նույն ձևով Նիկոլայ Առաջինը Ներսես Աշտարակեցուն է աքսորել Բեսարաբիա, այն տարբերությամբ, որ աքսորելուց մի ամիս առաջ ցարը Աշտարակեցուն արժանացրել էր կայսրության ամենաբարձր պարգևին):

Եվ ահա, համազգային շարժման հուժկու վերելքի պայմաններում, երբ մի բուռ չինովնիկներից բացի ամբողջ ժողովուրդը միասնական կամք էր դարձել, նույնիսկ գողերն էին դարձել գործադուլավորներ, հանկարծ երկնքից օպերայի հրապարակ ընկավ մեկ տասնյակի հասնող մարդկանց ցեմենտված մի բռունցք: Չնայած այդ մարդիկ իրենց մեծ մասով մինչև 88-ի գարունը միմյանց գոյության մասին չէին կարող իմանալ, ասենք Ա. Սանուչարյանը կամ Վ. Սիրադեղյանը չէին կարող իմանալ, որ գոյություն ունի Խ. Ստամբոլցյան և հակառակը, բայց օպերայի հրապարակ ընկան այնպիսի սերտ միակամությամբ, հայ ժողովրդի ողջ պատմության մեջ աննախադեպ տեսակետների այնպիսի նույնությամբ, որ լազերային ճառագայթով անգամ իրարից կտրել չէր լինի: Այդ պարոնները միահեծան տեր դարձան հրապարակի միկրոֆոնին, իրենցից բացի ելույթի հնարավորություն էին տալիս միայն նրանց, որոնց ելույթը նախօրոք գրաքննել էին (մի արատավոր պրակտիկա, որ այսօր էլ ժառանգել է «Ազգային դաշինքը»), և սկսեցին գերհեղափոխական կարգախոսներին, 70 տարի ժողովրդի հոգու վրա ծանրացած սոցիալ-քաղաքական ու ազգային չլուծված հարցերի սրմանը զուգահեռ և դրանից ավելի՝ գրպարտչական հզոր արշավանք ծավալել բոլոր ուղղություններով՝ սկսած Գորբաչովի անկողնուց մինչև հայոց կաթողիկոսն ու ակադեմիայի պրեզիդենտը, մինչև տասնամյակների ազգանվեր գործունեությամբ ժողովրդի սերն ու հարգանքը վաստակած մտավորականները: Իրենց կեղտոտ գրպարտություններով նրանք ազգի դավաճան ներկայացրին Սիլվա Կապուտիկյանին, այն խիզախ մարտիկին,

որն Իսահակյանից հետո առաջինը խիզախեց քայլել Ղարաբաղն ու Հայաստանը իրարից անջատած պատնեշի վրայով որպես հայոց բանաստեղծ, որը տասնամյակներ շարունակ կռիվ էր տալիս կոմունիստական մաֆիոզության դեմ՝ ենթարկվելով ամեն կարգի հալածանքների: Մատնացույց արեք ազգի ճակատագրով մտահոգ որևէ գործչի, Զորի Բալայանից մինչև Հրաչիկ Սիմոնյան, որոնք դարձած չլինեն այդ պարոնների զրպարտությունների թիրախ: Էլ չենք խոսում ՊԱԿ-ի գործակալ հռչակվածների մասին՝ Իգոր Մուրադյանից մինչև Հրայր Մարուխյան:

Այդ ինչպե՞ս էր, որ Այվազյանը, Հայրիկյանը շարժման հենց սկզբից մեկուսացվեցին, իսկ Գորբաչովի անկողինն ու կնոջ ներքնաշորերը արևի դեմ փռող «Ղարաբաղ» կոմիտեն մնաց անձեռնմխելի այն դեպքում, երբ 1988-ին իշխող տրամաբանությամբ նրանք պետք է քրեական պատժի արժանանային որպես զրպարտիչներ: Չէ՞որ այն ժամանակ ՊԱԿ-ը ճշմարիտ քաղաքականներին առանց որևէ փաստի էր խցկում քրեականների շարքերը: Օրեցօր կուտակվող փաստերն ու ծավալվող իրադարձությունները հաստատում են, որ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին Մոսկվա են տարել վերապատրաստման դասընթացների: Դրա անառարկելի ապացույցներից մեկն էլ Գորբաչովի Գարաժից Լ. Տեր-Պետրոսյանին Կրյուչկովի նվիրած ավտոմեքենան է, աննախադեպ մի փաստ ՊԱԿ-ի ողջ պատմության մեջ: Հետաքրքիր է իմանալ, թե մեր արեզիդենը այդ պատվին արժանացել է Գետաշենով սկսված ողբերգությունից առա՞ջ, թե՞ հետո: Սումգայիթի կամ Բաքվի իրադարձությունների համար այդպիսի պատվի չէին արժանացնի, վաստակ չունեին:

Ինչ կռահվում էր երեկ, այսօրվա լույսի տակ արդեն երևում է, որ «Ղարաբաղ» կոմիտեն օպերայի հրապարակ է իջել մի ամենազոր ու անտեսանելի զորության շնորհիվ, որը խնամքով հովանավորել ու հզորացրել է նրան՝ հանձին նրա տեսնելով հավատարիմ կամակատարների մի գործունյա ուժ:

«Պայքար, պայքար մինչև վերջ» մեծաբերան կարգախոսով քողարկված՝ նրանք օպերայի հրապարակից բռնությամբ հեռացնում էին Իգոր Մուրադյանին այն բանի համար, որ վերջինս պահանջում էր արմատուրայի դեմ դուրս գալ արմատուրան ձեռքին: Ահա այդ կետից սկսած, որը փաստորեն «Ղարաբաղ» կոմիտեի գործունեության սկիզբն է, այսօրվա գլխավոր իշխանավորները ժողովրդի մեջ սերմանում են պարտվողական տրամադրություններ, ստեղծում մեր և թշնամիների

մասին պատկերացումների յուրահատուկ կոմպլեքս, ըստ որի՝ երեկ նրանք բարբարոս էին, իսկ մենք՝ քաղաքակիրթ, այսօր նրանք հզոր են, իսկ մենք՝ թույլ, կատարելով իրենց թիկունքին կանգնած ուժերի քաղաքական պատվերը: Ուրիշ ո՞ր հանրապետությունում իշխանության փոփոխություն կատարվելուց անմիջապես հետո իր համար հանգստացող Գարբաչովը անմիջապես շնորհավորեց դրության տիրոջը: Իր ընտանիքի հասցեին նետվածների համար շնորհակալություն հայտնելո՞ւ...

Այդ «Ղարաբաղ» կոմիտեն չէ՞ր, որ իրեն շարժման մեջ դնողների սցենարով հանդես էր գալիս ծայրահեղ արմատական կարգախոսներով, կազմակերպում Զվարթնոցի, կայարանի արյունահեղությունները, մեթոդիկ հետևողականությամբ ու ՊԱԿ-ական ճկունությամբ հուժկու շարժումը շեղում իր բուն խնդրից, տեղափոխում տևական գործադուլների, գործարանների փակման, տնտեսության քայքայման ուղին այն դեպքում, երբ ժողովուրդը դուրս էր եկել ազգային-ազատագրական պայքարի: Չէ՞ որ Սումգայիթի, Բաքվի ու ադրբեջանական մյուս տարածքների հայության ջարդի ու բռնագաղթեցման ժամանակ պատկերացում անգամ չկար կայսրության կազմալուծման ու հանրապետությունների «անկախացման» վերաբերյալ, և այն ժամանակ չէին կարող շահարկել թուրքական ներխուժման վտանգը: Կամ թուրքական վտանգն իմացողն ինչպե՞ս է փակ աչքերով ու գրկաբաց նետվում այդ վտանգի գիրկը՝ զուգահեռ բարձրացնելով հակառուսական հիստերիկայի փոթորիկ՝ ընդհուպ մինչև պառլամենտում թարգմանելով ռուսերեն ելույթները:

Այդ «Ղարաբաղ» կոմիտեն չէ՞ր, որ պատգամավորներին բարոյական ու ֆիզիկական հալածանքների ենթարկելով, Ոսկանյանին ծեծելով հարկադրեց, որ Ղարաբաղը հռչակի Հայաստանի անբաժանելի մաս: Ի՞նչ պատահեց, որ իշխանության հասնելուց ուղիղ տասն օր հետո նույն պարոնները հանդես եկան տրամագծորեն հակառակ պահանջով, և Լևոն Տեր-Պետրոսյանը հպարտ կեցվածքով ազդարարում է, որ 1990-ի սեպտեմբերի 3-ից սկսած ինքը հանդես է գալիս Ղարաբաղը Ադրբեջանի կազմում թողնելու պահանջով, և այսօր էլ գործնականում իրականացնում է այն՝ բոլոր պայմանները ստեղծելով, որ ղարաբաղցիներին բնաջնջելով ու բնավեր դարձնելով՝ երկրամասը մնա Ադրբեջանին:

Սումգայիթից սկսած՝ Ադրբեջանը պատերազմ է մղում հայ ժո-

ղովրդի դեմ. միջնադարյան բարբարոսությունները գերազանցող մեթոդներով բնաջնջում մեզ, բռնագրավում հայրենական տարածքները և հաղթողի լկտիությամբ աշխարհի առաջ մեզ ներկայացնում ագրեսոր: Իսկ իշխանության գլուխ անցած «Ղարաբաղ» կոմիտեի պարոնները ոչ միայն «չեն կարողանում» ադրբեջանական պրոպագանդային հակադրել իրական ճշմարտությունը, ոչ միայն չեն համախմբում ազգային պոտենցիալ ուժերը և դիմագրավում ագրեսորին, այլև իրենց վարքագիծը բողարկելու համար ճամարտակում են խաղաղության անունից: Բանը հասցրել են այնտեղ, որ հանրապետության պրեզիդենտը հունիսի 10-ին պահանջում է Ղարաբաղի իշխանություններից՝ դադարեցնել ռազմական գործողությունները այն դեպքում, երբ թշնամին հաղթական կեցվածքով առաջ է շարժվում:

Սումգայիթում մեզ կոտորեցին, հանդես եկան պարոններ, թե դա մեր օգտին է, և ժողովրդին արգելեցին համարժեք գործողությունների դիմելու: Այսօր ադրբեջանական բանակը, ավերելով հայրենի տարածքները, բնավեր դարձնելով ժողովրդին, հաղթականորեն առաջ է շարժվում, իսկ պրեզիդենտը պահանջում է չկռվել: Ե՞րբ պետք է վերջ գա հակաբնական, հակաբանական այս աբսուրդին:

Իր այդ կեցվածքով Հայաստանի իշխանությունը մեղավոր ու մեղսակից է մեր բոլոր ձախորդությունների համար ու մեջ՝ սկսած Գետաշենով բացված պարտություններից մինչև Շահումյանի ու Մարտակերտի ողբերգությունները:

Հայաստանի իշխանությունները հայկական Լուկյանովի՝ Բ. Արարաքցյանի գլխավորությամբ Ստեփանակերտում կատարեցին իրենց սև գործը և մի քանի ուղղությամբ լուծեցին ազատամարտիկների կողմից Շուշու հերոսական ազատագրման վրեժը: Նախ՝ ամենուր միահեծան տիրապետության մոլուցքով հարբած՝ նրանք կազմալուծեցին Ղարաբաղյան ուժերի հարաբերական միասնությունը, քաղաքական ու հոգեբանական գինաթափման ենթարկեցին ղարաբաղցիներին, հետո Շահումյանն ու Մարտակերտը նվիրեցին թշնամուն՝ նույնիսկ գնալով սահմանները ականագերծելու և կռվողներին ժողովրդից ծածուկ ետ քաշելու քայլին:

Իր վերջին՝ հունիսի 29-ի ելույթում ռազմապաշտպանական գաղտնիքների հրապարակումով պրեզիդենտը հաստատեց, որ իր ղեկավարած կառավարությունը ներքին թուրքական ճակատ է դարձել հայ ժողովրդի դեմ: Սարսափով սարսափում ենք այն մտքից, որ այդ կառավարությունը ստիպելու է ժողովրդին մաքառելու երկու ճակատով: Ամեն օր, ամեն ժամը մոտեցնում է այդ ողբերգական հնարավորությունը:

Տա Աստված, որ մենք սխալված լինենք, որ ՀՀՇ-ական ղեկավարությունը վերջապես ուշքի գա, կանգնի հարազատ ժողովրդի ու հայրենիքի պաշտպանության դիրքերում կամ քաղաքակիրթ ձևով հրաժարվի իշխանությունից:

Տա Աստված, որ ՀՀՇ-ական ղեկավարությունը վերջապես հասկանա, որ աշխարհի հզորների հրապարակ նետած մարդու իրավունքների կարգախոսը աստառը շուռ տված մարքսիզմ-լենինիզմ է, որով նրանք քողարկում են իրենց իմպերիալիստական գիշատիչ ծրագրերը: Առանց հայրենիքի, առանց ազգային ինքնուրույնության ու անկախության իրավունքի ճանաչման ու հարգման՝ մարդու իրավունքները գալիս են «կոմունիզմի համաշխարհային տիրապետության» կարգախոսի փոխարեն իրականացնելու հզոր ժողովուրդների համաշխարհային տիրապետությունը:

Այսօր ո՞ւմ կառքին են լծվել ՀՀՇ-ական հորջորջված «Ղարաբաղ» կոմիտեի պարոնները և դեպի ի՞նչ անդունդ են տանում մեր բազմաչարչար ժողովրդին[18]:

1992 թ., հուլիս

ՍԱՏԱՆԱՆ ԱՍՈՒՄ Է՝ ԽՈՍԻՐ

Վերջերս մի ընկերոջ գրասեղանին նկատեցինք թերթային մի տպավորիչ ծաղրանկար: Վերցնելով թերթը՝ տեսանք, որ «Հայկական ժամանակ» լրագիրն է գետեղել այն որպես «Մեծապատիվ մուրացկաններ» խոսուն վերտառությամբ հրապարակումը տեսանելիորեն լիցքավորելու հատու միջոցի («Հայկական ժամանակ», 23 հունվարի, 2001 թ.): Հե-

18 Այս հոդվածը ժամանակին չկարողացա տպագրել անկախ Հայաստանի՝ հայրենիքի համար կուրծք ծեծող ազատ մամուլում: Հաջողվեց միայն հետևյալ երկտողը խցկել տալ «Երկիր» օրաթերթի մի անկյունում:

«Բոլոր ժամանակներում, բոլոր երկրներում ռազմական գաղտնիք հաղորդողները դատապարտվել ու համապատասխան պատիժ են ստացել: Պատերազմական իրավիճակում՝ գնդակահարվել:

Հանրապետության նախագահն, ի լուր թշնամու, հունիսի 29-ի հեռուստաելույթում ռազմական գաղտնիք հաղորդեց՝ հրապարակելով Արցախում կռվող ազատամարտիկների թիվը և այլ փաստեր: Ի՞նչ կարող է անել մի ժողովուրդ, որի նախագահն է նման դիրքերում» («Երկիր», 1992 թ., 3 հուլիսի, էջ 3):

տաքրքրությունը ստիպեց ընթերցել յոթ «գլխից» կազմված այդ «հրաշալիքը», և ինչքան առաջանում էինք ընթերցանության մեջ, այնքան ակնբախ էր դառնում, որ գործ ունենք քյուչի խուժանական մակարդակի մի զառանցանքի հետ: Հենց այն է. մի կողմ պետք է շպրտեինք թերթը. երբ հինգերորդ «գլխի» վերջին պարբերությունից դեմներս ցցվեց «շան գլուխը». «Ինչո՞ւ հալեպցին կարող է Հայաստանի պրեզիդենտ լինի (լինել), ղարաբաղցին չի կարող»: Ահա թե ի՞նչ... Դարձյալ գավառական «նացիոնալիզմի», թայֆայական շահախնդրությունների հրեշը, որի դռները բացվում են արդեն վեցերորդ «գլխում»: Պարզվում է, որ ՀՀՇ-ն խստագույնս վրդովված է այն բանի համար, որ խունկ չեն ծխում իր առաջ երեկվա ծաղկուն հայրենիքը ավերակելու դիմաց, մի գործընթաց, որ իր շարունակությամբ հայրենիքից փրկված այս փոքրիկ հողակտորի հետագա գոյությունը դրել է սպառնալիքի տակ: ՀՀՇ-ն ամեն անգամ ջղաձգությունների մեջ է ընկնում, երբ որևէ տեղից որևէ ձևով դրությունը շտկելու լույսի շող է երևում, թեկուզև դրանք դեռևս շոշափելի արդյունք չեն արձանագրում: ՀՀՇ-ն, որ ասպարեզ իջավ ժողովրդի ամենասրբազան զգացմունքներն ու երազանքները շահարկելով և գործնականում այդ ամենն իր հակադրությանը վերածելով, այսօր «մեր այսօրվա պատմության սկզբնաղբյուրը» արձանագրելու հայտ է ներկայացնում՝ ապահովելու իր «փառավոր» տեղն այդ պատմության մեջ: Հենց այդ հայտն է, որ մեզ պարտադրում է խոսել, վերհիշել հայտնի իրադարձությունները՝ առանց Ամերիկա հայտնագործած լինելու հավակնության: Այո՛, կենսական անհրաժեշտություն է մեր օրերի պատմության իրական սկզբնաղբյուրի արձանագրումը:

ՀՀՇ-ն և Ղարաբաղը

Հանրահայտ է, որ ցարական կայսերապետության կործանումից հետո Անդրկովկասում ձևավորվող ազգային պետությունների հակամարտությունների համայնապատկերում Ղարաբաղը երբեք չի համակերպվել Արևելյան Անդրկովկասում, որ նույնն է թե պատմական իրավունքով Արևելյան Հայաստանում ստեղծվող թուրքական պետության մաս դառնալու գաղափարին, և զենքը ձեռքին դիմակայել է ոչ միայն ազերաթուրքերին, այլև օսմանցիների ագրեսիային: Հանրահայտ է, որ Ղարաբաղն ու Արևելյան Հայաստանի այլ երկրամասեր ձևավորվող Ադրբեջանի տարածքում հայտնվեցին որպես քաղաքական ռազմակալում, որպես Լենին-Աթաթուրք գործարքի հետևանք՝ մի գործարք, որի դեմ Ղարաբաղը 70 տարի անընդմեջ մաքառում էր՝ ամեն 4-5 տարին

մեկ իր լավագույն զավակներին բարձրացնելով զոհասեղան: Ժամանակի հանգամանքների թելադրանքով ղարաբաղցու միակ զենքը մնացել էր իշխող գաղափարախոսության ու ընթացիկ քաղաքականության սողանցքների օգտագործմամբ ադրբեջանական գաղութատիրության լուծը թոթափելու հույսը: Եվ ղարաբաղցին ձեռքը մեկնում էր ամեն մի փրփուրի: Ներկայացնում ենք փրփուրից բռնելու անհայտ մի դեպք: Երբ 50-ականների վերջերին Խրուշչովը բարձրացրեց կրճատումներով պետական ապարատը թեթևացնելու հարցը, տողերիս հեղինակը փորձեց այն ծառայեցնել Ղարաբաղի հարցի լուծմանը: Միամտորեն կարծում էր, թե մարզային ապարատի ծանրությունից ազատ լինելու դիմաց կենտրոնը կգնա Ղարաբաղը Հայաստանին միացնելու քայլին: Բայց երբ դիմեց վստահելի մարդկանց խորհրդին ու աջակցությանը՝ համատեղ հանդես գալու առաջարկով, վերջինները կոնկրետ փաստերի մատնանշումով այնպես վախեցրին խեղճին, որ նա իր սևագիր թեզիսները թաքցրեց հողում՝ հետագայում այնպես էլ չկարողանալով գտնել այն:

Նման մի փրփուր էր նաև գորբաչովյան վերակառուցումն ու հրապարակայնությունը, բայց արդեն մեր հարաբերականորեն հասուն, համազգային ընդգրկումներով գորացած պահանջատիրության պայմաններում: Արդեն ընդհանուրի գիտակցությանն էր հասել, որ «Քարավանները դեռ քայլում են», 1965 թ. ապրիլի 24-ին հայրենաբնակ զանգվածները աննախադեպ մի պոռթկումով դուրս էին եկել ասպարեզ, դրան հաջորդել էր ղարաբաղյան յուրահատուկ հանրաքվեն, երեք օրինակից կազմված, 52 հազար ստորագրություն պարունակող փաստաթուղթը ղարաբաղյան հարցի լուծման պահանջով՝ ուղղված Մոսկվային, Բաքվին ու Երևանին: Արդեն հանդես էին գալիս առանձին անհատներ, որոնք վերընթաց համարձակությամբ անհանգստացնում էին կենտրոնին. մի Եպիսկոպոսով, մի Զ. Բալայան անընդհատ կրակը թեժ էին պահում, մի Ս. Այվազյան հաշիվ էր պահանջում կենտրոնից, թե ի՞նչ իրավունքով են հայոց ազգային շահերը ոտնատակ տալիս: Եվ այդ ամենը լիցքավորվում էր մեր սփյուռքահայ ազգակիցների համառ ջանքերով ու ինքնազոհողությամբ հայկական հարցը աշխարհի ատյաններին ներկայացնելու գործողություններով: Եվ այդ մթնոլորտում հանկարծ գորբաչովյան **պերեստրոյկա** ու **գլասնոստ:**

Ինքնին հասկանալի է, որ իր ազգային վերքերը բուժելուն հետամուտ ժողովուրդը չէր կարող ձեռքից բաց թողնել հարմար նկատված պահը, և ազգովի դուրս եկանք հրապարակ: Ոչ միայն դուրս եկանք, այլև դուրս բերեցին՝ աննահանջ հետևողականությամբ երկու ժողովուրդների համար էլ ստեղծելով այնպիսի գրգռիչ իրավիճակներ, որոնք

արյունոտ բախումները դարձնում էին անխուսափելի: Մեզ դուրս բերեցին հրապարակ՝ իրադարձություններին ընթացք տվող սանձերը պահելով իրենց ձեռքին:

Արդարության և իրավունքի ակնկալիքով ժողովուրդը դուրս եկավ հրապարակ զուտ ազգային պահանջատիրությամբ՝ գիտակցաբար հրաժարվելով ամեն կարգի սոցիալական ու տնտեսական խնդրից: Բայց ազգային պահանջատիրության համար տասնամյակներ շարունակ պայքարող անձինք չէին հասցրել մի որոշակի հունի մեջ դնելու ժողովրդական ընդվզումը, դեռ չէին կարողացել մի ընդհանուր հայտարարի գալու հետագա անելիքների հարցում, երբ մի գիշերվա մեջ օպերայի հարթակ իջեցրեցին մի խումբ անհայտ ու անանուն երիտասարդներ, որոնց համար Ղարաբաղը, Վիետնամը կամ Անգոլան միևնույն հարթության վրա գտնվող աշխարհագրական հասկացություններ էին:

Ստեղծվեց մի «Ղարաբաղ» կոմիտե, որի կազմում բացառվեց որևէ ղարաբաղցու մասնակցությունը, ստեղծվեց մի կոմիտե, որի անդամները նախօրոք իրար գոյության մասին չէին կարող իմանալ, բայց հանդես էին գալիս հայացքների ու գնահատականների այնպիսի նույնությամբ, որ նրանց խոսքում ոճական տարբերություններ անգամ չէին նկատվում: Փակագծերում ասենք, որ ՀՀՇ-ական այդ կորիզը սեփական դիրքորոշում մշակելու անհրաժեշտություն երբևէ չի ունեցել, ամեն ինչ մշակվել է արևմտյան հատուկ կենտրոններում և դրվել նրանց ձեռքը: Բացառություն է կազմում ինքնուրույն մտքի «փայլատակման» երկու դեպք միայն, որի համար պարտական ենք Գինեսի գրքի թեկնածու հռչակավոր Հ. Բագրատյանին: Առաջինն այն, որ պարոնը ծխախոտ էր գնում գործուղման ծախսերի խնայողությամբ, երկրորդը, որ կոնյակի գործարանի ավազակային վաճառքից լկտիացած հունիսի կեսերին հայտարարեց ի լուր աշխարհի, թե այդ վաճառքով ոգևորված ժողովուրդը խաղողի նոր այգիներ է ստեղծում:

Ղարաբաղն ու ղարաբաղյան պահանջատիրությունը ՀՀՇ-ականների բեմելի առաջին իսկ օրվանից եղել է մի ծխածածկույթ իրենց հեռուն գնացող նպատակները քողարկելու համար: Քանի դեռ կայսրության լուծարումը պիտի իրականացնեին, իրենց անդրկովկիանոսյան տերերի թելադրանքով պետք է շիկացած մթնոլորտը գերշիկացնեին և ժողովրդական հուժկու ընդվզումը շահարկելով՝ հարկադրեցին ՀԽՍՀ ԳԽ-ին, որ Ղարաբաղը «միացնի» Հայաստանին: Չէ՞ որ նրանք առաջնորդվում են «Պայքար, պայքար մինչև վերջ» գերարմատական կարգախոսով: Բայց ահա, իշխանության հասնելուց ուղիղ տասը օր հետո, 1990 թ. սեպտեմբերի 3-ին, ՀՀՇ-ական առաջնորդը հայտարարում, հետագայում բազմիցս կրկնում է, որ Ղարաբաղը պիտի մնա Ադրբեջանի կազմում, ու գործում միայն այդ ուղղությամբ:

ՀՀՇ-ական նորաթուխ ղեկավարությունից լքված Ղարաբաղը ստիպված ինքնուրույնաբար տեսավ իր գլխի ճարը. հռչակեց անկախություն, այդ ժամանակ դեռ գործող միութենական օրենքներով ու հանրաքվեով ամրագրեց այն, ստեղծեց պետական կառույցներ: Որպես հակակշիռ, ՀՀՇ-ական տեռորիստների ձեռքը հասավ Ստեփանակերտ, սեփական բնակարանում սպանեց հանրապետության առաջին ղեկավարին, հաջորդ ղեկավարին հարկադրանքի բոլոր միջոցներով փորձեցին իրենց կամքը թելադրել, բայց արդյունքի չհասան:

ՀՀՇ-ական վերնախավի և անձամբ Լևոն Տեր-Պետրոսյանի կամքին հակառակ, նրա թևերան մենկած գիշերը, մեր ազատամարտիկները ազատագրեցին Շուշին: Իրանական շահերն անգամ, հարյուրհազարանոց զորքի գլուխ անցած, չեն կարողացել Շուշին գրավել կռվով, և՛ Աղա Մահմեդ շահը, և՛ Աբաս Միրզան գլխիկոր են հեռացել Շուշու ստորոտից:

Աշխարհին անհայտ ու անանուն մի հայ զինվորական, մի եզակի հնարագիտությամբ, այնպես ազատագրեց Շուշին, որ համարյա զոհեր չունեցանք: Ազատամարտիկները մի թափով մաքրեցին նաև Շուշի-Լաչին մայրուղին՝ բացելով մայր հայրենիքի հետ կապող գիծը: Այդ հերոսական մեծագործությունից գազազած ՀՀՇ-ական ղեկավարությունը մի քանի օր հետո, Բ. Արարքցյանի գլխավորությամբ մի ոհմակ կազմած, իրեն նետում է Ստեփանակերտ՝ Ղարաբաղի համար նոր ղեկավարություն ընտրելու առաջադրանքով: Կարծես թե աննախադեպ հաջողության բերկրանքը դեռ չճաշակած հանրապետությանը միայն պակասում էր ղեկավարության փոփոխությունը: Քանդուքարափ արին այն վերխմբակային, վերկուսակցական միասնությունը, որ իրար էր շաղկապում ֆիդայական ջոկատներին կռվող Ղարաբաղում: Ղարաբաղից մեկուսացրին Շուշու հերոսին՝ այդ տաղանդավոր զորականին, նրան հավասար մի շարք անձանց վերացրին թիկունքից արձակած գնդակով, աննահանջ կռվող Արաբոյի ջոկատը գցեցին ծուղակի մեջ և ոչնչացնել տվին:

Այս ձևով ազատվելով իրենց անձեռնտու անձանցից՝ ասպարեզ բացեցին համարձակ ու վճռական, բայց քրեական ու կիսաքրեական հակումներով աչքի ընկնող տարրերի համար, որոնք պատրաստ էին փակ աչքերով կատարելու վերադասի բոլոր հանձնարարությունները, և կատարեցին՝ թռիչքով բարձրանալով զորավարի և ազգային հերոսի պատվանդաններին:

Շահումյանի պաշտպան ֆիդայիները տեսնում են, որ հակառակորդի կողմից տանկեր են շարժվում դեպի Կարաչինար: Սպասում են, որ ուր որ է նրանք օդ են ցնդելու ականների վրա, բայց ականների վրայով

անցնում են փոշի բարձրացնելով: Օրինական հարց է առաջանում. թե ովքե՞ր են այսօրվա այն «հերոսները», որ թշնամու առաջ ականագերծել են Շահումյանի պաշտպանական գիծը: Միգուցե այդ հարցին Մեղրյա՞նը կարողանար պատասխանել, եթե նրան չոչնչացնեին օդում: Նույնանման մեթոդներով Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորած հանցախումբը Մարտակերտն էլ հանձնեց թշնամուն: Եվ եթե հաշվի առնենք, որ Ասկերանի ու Հադրութի շրջաններն արդեն գորբաչովյան ռեժիմի հետևանքով էին համարյա հայաթափվել, ապա ղարաբաղյան հարցը ՀՀՇ-ական ծրագրով լուծելու համար մնում էին միայն մի ռմբահարված Ստեփանակերտ ու մի համարյա անգեն Մարտունի:

Այդ օրհասական պահին երկնքից Մարտունի էր ընկել մի ճշմարիտ հայրենասեր, մի խիզախ մարտիկ՝ Սոնթ Մելքոնյանը, որը կարողացավ մեկուկես տանկով կազմակերպել շրջանի ինքնապաշտպանությունը, թշնամուց տասնյակներով խլված տանկերով զորացնել շրջանը, կանխել խուճապային տրամադրությունները և սկիզբ դնել ազատագրական կռվի նոր վերելքին՝ առաջադրելով Ղարաբաղի ազատագրման խնդիրը իր պատմական սահմաններով:

Ղարաբաղի ազատամարտիկները տանկերով հասան իրենց հայրերի ու պապերի կառուցած, բայց թուրքերի կողմից բռնազավթված Ժդանովի՝ թշնամու կողմից արդեն լքված շրջան, բայց ռացիայով ետ կանչվեցին, և հետո սահմանը գծեցին Մարտունու մերձակայքով՝ Ղարաբաղի վարելահողերը դաշտային Մարտակերտի հետ նվիրելով թշնամուն: Ղարաբաղի ազատամարտիկները երկու անգամ ազատագրեցին Խոջալուն, ղարաբաղցիների ձեռքով կառուցված մայրուղու այն վերջին հանգույցը, որով երկրամասը կապվում էր արտաքին աշխարհի հետ: Երկու անգամ էլ այն վերահանձնեցին թշնամուն: Արտաքին աշխարհի հետ կապվելու առումով, նրանք այդ ակտով Ղարաբաղի դեմ ստեղծեցին մի նոր Նախիջևան: Դե եկ ու մի հիշիր Լենին-Աթաթուրք գործարքը:

ՀՀՇ-ական ղարաբաղադավ գործելակերպն այնքան տարողունակ է, որ անհնար է մի հոդվածի շրջանակներում տեղավորել: Մնում է միայն մատնացույց անել, որ ղարաբաղյան ազատամարտի ողջ ընթացքում ՀՀՇ-ական հանցախումբը կանգնած է եղել պայքարի թուրքական դիրքերում, որ հայ ժողովուրդն իր հավաքական ջանքերով հաղթեց ոչ միայն ազերթուրքերին, այլև Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորած հանցախմբին: Այս կտրվածքով նրանք պետք է ներկայանան հայոց Նյուրնբերգ:

Ահա այս է «մեր այսօրվա պատմության սկզբնաղբյուրի» արձանագրության էջերից մեկը, հարգարժան պատմաբան Աշոտ Սարգսյան:

4. 02. 2001 թ.

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄՈՏ

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ

Ցարիզմի տապալումով վերակենդանացած ղարաբաղյան հիմնահարցը ավելի քան յոթ տասնամյակ մեր ժողովրդի համար դարձավ անհավասար ու հերոսական մաքառումների մի արյունոտ ճանապարհ: Ավելի քան յոթ տասնամյակ ղարաբաղցին, թիկունք ունենալով մայր ժողովրդին, դիմեց պայքարի բոլոր միջոցներին՝ սկսած սովորական բողոքագրերից ու համախոսականներից մինչև իր լավագույն զավակներին զոհասեղան բարձրացնելը, մինչև պատերազմի դաշտում զենքի զորությամբ այս արևի տակ իր գոյության բնական իրավունքի հաստատումը: Այս ամբողջ ընթացքում հայոց ազգային ազատագրական միտքը չլուծվող հիմնահարցի առթիվ պտտվել է միայն մի կարգախոսի շուրջը՝ «Ղարաբաղը մերն է»: Ըստ որում, Ղարաբաղ ասելով էլ սահմանափակվել է այն փոքրիկ հողակտորով, որ օտար իշխողների ողորմածությամբ ընդունվել է հայկական, օտարի ձեռքով դարձել Ինքնավար Մարզ: Դրանով տեսադաշտից դուրս է մնացել մի ամբողջ երկրատարածքի՝ Հայոց Արևելից Կողմանց կամ Աղվանից աշխարհի հասկացությունը՝ իր տերիտորիալ ամբողջականությամբ, իր հազարամյակների պատմությամբ ու մաքառումներով՝ տեղը զիջելով ամբողջի մի հատվածին:

Նման մոտեցման համար կային զորավոր պատճառներ: Նախ՝ համառուսական կայսրության հավերժության ու անբաժանելիության հիմքի վրա խարիսխված «պրոլետարական ինտերնացիոնալիզմի» պարտադրանքը, որը հայ իրականության մեջ դրսևորվեց վատթարագույն տեսքով: Սկսած Մյասնիկյանից, որը համակերպվեց Կավբյուրոյի 1921 թ. հունիսի 5-ի տխրահռչակ որոշման հետ, մինչև պատմագիտության ասպարեզը ոտք դնող սկսնակը՝ «ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամության ու եղբայրության» կարգախոսով ամեն տեսակ զիջումների գնացին ադրբեջանական մարտնչող շովինիզմի ու զավթողական քաղաքականության նկատմամբ, որի արդյունքում ոչ միայն գաղափարական, քաղաքական, պատմագիտական և այլ կարգի կորուստներ ու-

նեցանք, այլև ՀՍՍՀ-ից նորանոր տարածքներ անցան Ադրբեջանին: Մյուս կողմից էլ, Հայոց Արևելից Կողմանց միայն մի հատվածը՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, սևեռուն ուշադրության կենտրոնում պահելը, ամբողջը անտեսելու գնով, պայմանավորված էր գոնե փրկված բեկորից ևս չզրկվելու մտահոգությամբ, մանավանդ որ Ադրբեջանի իշխանությունները ամբողջ 70 տարի զբաղված են եղել այն ևս կլանելու, Ղարաբաղի հայկականությունը վերջնականապես վերացնելու խնդրով:

Հասկանալի է, որ հայ մտավորականությանը ի վերուստ արգելվում էր ադրբեջանական մարտնչող շովինիզմին ու պատմության կեղծարարությանը հակահարված տալը, որ հայ մտավորականության համար արգելված գոտի էր Հայոց Արևելից Կողմանց պատմությունը, որ իշխող քաղաքականությունից շեղվելու ամեն մի փորձի դեպքում ահավոր սպառնալիքի տեսքով մեջտեղ էր քաշվում պրոլետարական ինտերնացիոնալիզմի դեմ ոտնձգություն կատարելու մեղադրանքն իր հայտնի հետևանքներով: Հիշում ենք, թե ինչ պատոնեշի հանդիպեցին Կարո Մելիք-Օհանջանյանն ու Պարույր Սևակը բունիաթովյան կեղծարարության դեմ հանդես գալու ժամանակ:

Այսօր, երբ փոխվել են ժամանակները, երբ մեր զավակները զենքը ձեռքներին բռնել են հայրենի տարածքների ազատագրման սրբազան առաքելության ուղին, երբ երեքհարյուրամյա մաքառումներից հետո Ղարաբաղը կերտում է իր անկախ պետությունը՝ վերականգնելով Վաչագանի, Համամ Արևելցու և մյուսների հայրենաշեն ավանդները, առավել քան կենսական անհրաժեշտություն ու քաղաքական անհետաձգելի պահանջ է դառնում պատմական ճշմարտության վերհանումը, մեր նկատմամբ իրականացված տևական ագրեսիայի պսակազերծումը: Դա առավել ևս անհրաժեշտ ու հրատապ է այսօր հայրենիքի ազատագրության համար մարտնչող մեր զավակներին կողմնորոշելու, նրանց անձնազոհ մեծագործությունների արդարացիությունը քաղաքական աշխարհին ներկայացնելու համար: Այլապես ինչ է տեսնվում. Ադրբեջանը այս էլ որերորդ անգամ սանձազերծեց վայրենի ագրեսիա և որերորդ անգամ Բաքվից մինչև Ղազախ, Ժդանովի շրջանից մինչև Կովկասյան լեռների փեշերը կազմակերպեց այրունոտ նախճիր, հայերիս զրկեց հինգհազարամյա հայրենիքից և արդյունքը մարսելուց հետո էլ հանդես է գալիս զոհի կերպարանքով, իսկ մենք, մեր ահավոր կորցրածով հանդերձ, ներկայացվում ենք ագրեսոր:

Ո՞վ պետք է այս ամենին հակահարված տա, եթե ոչ հայ մտավորականությունը, որը պարտավոր է պատմական իրականությունը ճշմարիտ տեսքով ներկայացնելով սատար կանգնել մեր վերականգնված պետականության քաղաքական գործիչներին, որպեսզի նրանք կարողանան իրենց ծանր լուծը պատվով տանել աշխարհի բախտը որոշող հզոր ուժերի հակադիր շահերի բախման կեռմաններում:

ԽՍՀՄ-ի փլուզմամբ ստեղծված նոր իրականությունը և այդ վայրիվերումների հորձանուտում ստեղծված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը եկավ հաստատելու, թե «հրաշք չկա, կա միայն կարիք», որ պահանջում է իր բավարարումը: Երեկվա անտրոհելի սոցիալիստական կայսերապետությունում ծայր առած գործընթացների հետևանքով ծնավորված ԼՂՀ-ն վկայությունն է այն բանի, որ հազար տարին մեկ կարող է վրա հասնել արդարության վերականգնման, կորցրածը ետ բերելու պահը, և առաջին հերթին ազգային-պետական իմաստնությունից է կախված, թե ինչ չափով կարելի է օգտվել պահի ընձեռած հնարավորությունից: Այս իմաստով պատմությունը նոր ու պատասխանատու խնդիր է դնում մեր առջև: Իսկ հասարակական կյանքում խնդիրները ծագում են այն ժամանակ, երբ առկա են դրանց լուծման միջոցները:

ԼՂՀ-ն, ծվարած իր անդնդախոր ձորերում ու անտառներում, այս վիճակով երկար ճանապարհ գնալ չի կարող: Անհրաժեշտության պարտադրանքով նա պետք է ապահովի իր վաղվա գոյության ու զարգացման հնարավորությունը: Եվ եթե հնարավոր չէ Հայոց Արևելից Կողմանց ազատագրումը ամբողջությամբ, ԼՂՀ-ն գոնե պետք է տեր կանգնի պատմականորեն ծնավորված Ղարաբաղին՝ իր բնական ու պատմական սահմաններով: Դա մի հրամայական պահանջ է, որ պատմությունը մեր առաջ է դրել ժամանակակից քաղաքական բարդ ու խճճված վայրիվերումների հետևանքով:

Դրա համար պատմաքաղաքական հիմք է ծառայում այն իրողությունը, որ ադրբեջանական հանրապետություն կոչվող Արևելյան Անդրկովկասը հայ ժողովրդի հազարամյակների հայրենիքն է, որը վերջին 2-3 հարյուրամյակի ընթացքում վերափոխվել է հայերի ու ադրբեջանցիների ընդհանուր տան: Եվ վերջին 70-ամյակում դա երկու ժողովուրդների համար հավասարապես ընդհանուր տուն է եղել հանրապետության ողջ տարածքով մեկ: Պարզապես հայերի նկատմամբ գործողության մեջ դրված երեքհարյուրամյա շարունակվող ցեղասպանության հետևանքով երկու ժողովուրդների թվական հարաբերակցությունը միշտ էլ լուծվել է եկվոր քոչվորների օգտին: Եվ քանի որ մեզ համար ողբերգական այդ քաղաքականությունը մի շարունակվող գործողություն է եղել, որի վերջին արարի մասնակիցներն ենք մենք և չգիտենք՝ ինչքան կծգվի հակամարտությունը, այն դադարում է սովորական ըմբռնումով

պատմություն լինելուց: Այն ժամանակակից իրողություն է. դեռ ծխում են մեր ավերված տները Ադրբեջանի ողջ տարածքով մեկ, և դրա համար հատուցում է հասնում: Հետևապես պետք է հարցը դնենք այլ հարթության վրա, պետք է մեր գաղափարական-քաղաքական ջանքերը մղենք ընդհանուր տան բաժանման խնդրի կողմը:

Պատմական ճշմարտությունը վեր հանելու համար մեր կողմից կատարված մի քանի շտրիխներ ներկայացնելով՝ գիտական ու քաղաքական շրջանների ուշադրությունը հրավիրում ենք նոր իրականության առաջ քաշած այս կենսական խնդրի վրա:

ԻՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ՓԱՍՏԵՐԸ

Հանրահայտ է, որ «Հայաստանն առանց հայերի» բանաձևը առաջին անգամ ցարական արտաքին գործերի նախարար Լոբանով-Ռոստովսկին է հուշել թուրքական սուլթան Աբդուլ Համիդին սրանից 100 տարի առաջ: Արդեն 300 տարի է, ինչ հայ ժողովուրդը դարձել է ցեղասպանության առարկա և պատմական ամեն մի անցումային ժամանակաշրջանում ֆիզիկական բնաջնջման սպառնալիքի հանդիման է կանգնում: Իրական փաստ է, որ նույնիսկ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի դեմ պատերազմող ցարական վարչակարգը Արևմտյան Հայաստանում կռվող ռուսական բանակների տեղաշարժերը այնպես էր կատարում, որ չխանգարի հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման գործը թուրք ոճրագործների ձեռքով: Ավելին, ցարական գեներալ Յուդենիչը հեռագրել էր ցարին, որպեսզի եղեռնից սարսափած փրկվածներին թույլ չտան բնակություն հաստատելու Ալաշկերտի հովտում, այլ պահանջում էր նրանց քշել Ռուսաստանի խորքերը, որպեսզի Ալաշկերտի հովիտը դառնա կազակական երկրամաս:

Վերջացավ համաշխարհային պատերազմը՝ հայ ժողովրդի համար ծանր հետևանքներով: Հայաստանի մեծագույն մասը զրկվեց իր բնիկ տերերից, որ հազարամյակներ շարունակ ապրել էր այնտեղ, մասնակցել մարդկային քաղաքակրթության զարգացման գործին: Հայաստանի փրկված փոքր մասը դարձել էր որբերի ու գաղթականների հավաքավայր՝ կանգնած իսպառ բնաջնջման սպառնալիքի առաջ:

Հաղթեց հեղափոխությունը Ռուսաստանում և Անդրկովկասում: Սպասվում էր արդարության ու մարդկայնության դրսևորում «ամենքից լքված ու հուսահատված» հայ ժողովրդի նկատմամբ: Բայց դարձյալ

կատարվեց պատմական մեծ անարդարություն: Թուրքիայի քեմալական կառավարության, մի գիշերվա մեջ կոմունիստներ դարձած ադրբեջանական մուսավաթականների հետ գործարքի մեջ մտնելով՝ Լենինի ղեկավարած կառավարությունը նախկին ցարական Ռուսաստանի կազմի մեջ մտնող Հայաստանի մի մեծ բաժին զիջեց Թուրքիային: Դրանով չբավարարվելով՝ սովետական պետության կազմի մեջ մնացած Հայաստանի տերիտորիան էլ այնպես բաժանեց հարևանների մեջ, որ ՀՍՍՀ-ն սովետական պետության կազմի մեջ մնացած Հայաստանի կեսից ավելին չլինի: Ախալքալաքն ու հարակից շրջանները նվիրեց վրացիներին, Նախիջևանը, Ղարաբաղը և նրան հարակից հայկական մյուս շրջանները կցեց Ադրբեջանական ՍՍՀ անունով հորինված նորաթուխ հանրապետությանը՝ մի նոր հիմք դնելով հայ ժողովրդի ցեղասպանության շարունակման համար: Սովետական իշխանության բոլոր տարիներին Ադրբեջանի կազմի մեջ մտած հայկական մարզերում տարբեր ձևերով ու մեթոդներով շարունակվել է ցեղասպանությունը և հասել մինչև Սումգայիթի ոճրագործություն ու Մասիսում քիմիական զենքի գործադրում:

Անդրկովկասի երկու հարևան ժողովուրդներին իրար դեմ գրգռելու, նրանց դեպի արյունահեղության ճանապարհ մղելու գործում ոչ միայն մեղավոր է կենտրոնական կառավարությունը, այլև իրադարձությունները ցույց են տալիս, որ ամբողջը հրահրված է կենտրոնական կառավարության մեջ գտնվող, երկրի ճակատագրի համար պատասխանատու ինչ-որ մարդկանց կողմից: Երկրում սկսված վերակառուցման ու դեմոկրատացման թշնամիները համապետական այդ շարժումը վարկաբեկելու և կասեցնելու համար օգտագործեցին այն չոր վառոդը, որ տասնամյակներ շարունակ պահվում էր հայ և ադրբեջանցի ժողովուրդների հարաբերությունների կենտրոնում: Դեռևս 1987 թ. հունիսին Ադրբ. ՍՍՀ-ի պաշտոնական օրգան «Բակինսկի ռաբոչի» թերթը վերածվեց ՀՍՍՀ-ի գերբը, դրան հաջորդեց հրահանգ, որի պահանջով հավաքվեցին Ղարաբաղի հայ բնակչության որսորդական հրացանները: Ինչքան թափ էին առնում վերակառուցումն ու դեմոկրատացումը, այնքան լկտի ու սանձարձակ էին դառնում երկու ժողովուրդներին իրար դեմ հանելու միջոցառումները: Դրա անժխտելի ապացույցն է Չարդախլուն, որտեղ շրջկոմի քարտուղարի ղեկավարությամբ ու մոտակա շրջանների միլիցիայի ձեռքով հայ կանայք վայրենի ծեծի ենթարկվեցին այն բանի համար, որ չէին ուզում իրենց գյուղի հողերը տալ հարևան թուրքերին:

Վերակառուցման թշնամիների համար երկնքից ընկած մանանայի արժեք ստացավ ղարաբաղյան շարժումը. երբ 70 տարի բգկտվելուց,

ոտնահարվելուց ուժասպառ մարզի բնակչությունը իր արդարացի բողոքը բարձրացրեց կենտրոնական կառավարության առջև: Առիթն օգտագործելով՝ վերակառուցման թշնամիները ոտքի կանգնեցրին Ադրբեջանի և Անդրկովկասի պանթուրքական ընդհատակը, որը մի աննախադեպ բարբարոսությամբ արյունոտ հաշվեհարդար տեսավ Սումգայիթի 18-հազարանոց հայության նկատմամբ, իսկ ադրբեջանական այն շրջաններից, ուր խառը բնակչություն էր ապրում, արտաքսեցին հայերին, դաժան շրջափակման մեջ դրեցին Ղարաբաղը և, վերջապես, ձեռք մեկնեցին քիմիական զենքին Հայաստանի Մասիսի շրջանում:

Որ այս ամբողջ արյունոտ գործը ղեկավարվում էր կենտրոնական կառավարության ինչ-ինչ մարդկանց կողմից, ապացուցվում են բազմաթիվ փաստերով, որոնցից մի քանիսը մատնացույց ենք անում:

1. Չարդախլուի իրադարձությունների առնչությամբ «Իզվեստիայի» խմբագիրն իր աշխատակցին ուղարկել էր Չարդախլու, որն իրադարձությունների օբյեկտիվ նկարագիրը ձեռքին ներկայացել է խմբագրություն: Դրանից հետո գլխավոր խմբագիրը գնացել է Բաքու, այնտեղից՝ Շամխոր շրջկենտրոնը, չի բարեհաճել բարձրանալ միջադեպի վայրը և, վերադառնալով Մոսկվա, հեռացրել է իր աշխատակցին: Եթե «Իզվեստիայի» աշխատակիցը դեպքերի օբյեկտիվ նկարագիրը չի տվել, ապա ինչպե՞ս է, որ նրա հոդվածը տպվեց «Սելսկայա ժիզն» թերթում:

2. Երկրի մամուլի կենտրոնական ու գլխավոր օրգան «Պրավդան» անորակելի վատթարագույն դիրք է բռնել հայ ժողովրդի արդարացի պահանջների նկատմամբ՝ դեպքերի ու իրադարձությունների նենգափոխումները հասցնելով անմարդկայնության մակարդակի: Նույն դիրքերում են կանգնել նաև կենտրոնական ինֆորմացիայի մյուս միջոցները:

3. Փետրվարյան բուռն իրադարձությունների օրերին կենտրոնական իշխանության ամենապատասխանատու աշխատակիցների մի պատկառելի խումբ եկել է Հայաստան ու Ադրբեջան և ի՞նչ է արել: Հայաստան եկած բարձրագույն պաշտոնյաները ՀԿՀ Կենտկոմի անդամներին պատին են սեղմել՝ պահանջելով ստորագրել, որ հայերը էքստեմիստներ են, իսկ Ադրբեջան մեկնածները հեռվից դիտել են նախօրոք կազմակերպված, Ադրբեջանի և Հայաստանի շրջաններից Սումգայիթ տարված մարդասպանների եռօրյա վայրենի հաշվեհարդարը տեղի հայ բնակիչների նկատմամբ: Ավելին: Որպեսզի հոգեբանորեն արդարացնող մթնոլորտ ստեղծեն Սումգայիթում նախապատրաստվող վանդալիզմի համար, գերագույն դատախազի տեղակալ Կատուսևը Հայաստանի, Ադրբեջանի և կենտրոնական հեռուստատեսություններով պրովակացիոն ելույթ է ունեցել, որ իբր թե Ղարաբաղի դեմ Ադդամի ադրբեջանցիների հայտնի արշավանքի ժամանակ տեղի է ունեցել ընդհարում և երկու ադրբեջանցի սպանվել է: Իրականում ադրբեջանցիների կատարած արշավանքը ընդհարման չի վերածվել, և երկու ադրբեջանցիների սպանության գործում հայերը ոչ մի առնչություն չունեն: Արդեն հինգ ամիս է, որ արդարադատության մարմինների հսկայական բանակը իբր թե չի կարողանում պարզել, թե ովքեր են եղել սպանողները:

4. Երբ երկու ժողովուրդների լարված հարաբերությունների մեջ նկատվում էր լիցքաթափում, Լիգաչովը եկավ Ադրբեջան և մի նոր ուժով բորբոքեց առանց այն էլ բորբոքված կրքերը:

5. Տաշքենդի հայտնի երկրաշարժի ժամանակ Հայաստանում կանգնեցվեց շինարարությունը և ամբողջ շինանյութն ու շինարար բանվորները տրամադրվեցին աղետյալ քաղաքի վերականգնմանը: Իսկ ղարաբաղյան դաժան բլոկադայի պայմաններում Հայաստանը փորձեց ինչ-որ չափով օգնել Ղարաբաղի բերքահավաքին և այնտեղ ուղարկեց ընդամենը 15 ավտոմեքենա: Սակայն Ադրբեջանի Լաչինի շրջանի միլիցիան, որը պետք է այդ մեքենաների անվտանգ անցումը ապահովեր իր շրջանի տարածքով, շարասյունը տանում է մտցնում փոկուղի, ջարդի տակ դնել տալիս ինչպես վարորդներին, այնպես էլ մեքենաները: Չէ՞ որ և՛ Տաշքենդը, և՛ Ղարաբաղը նույն պետության մարմիններն են և, բնականաբար, պետք է առաջնորդվեին նույն օրենքով ու բարոյականությամբ:

Եթե դրան էլ գումարենք Ղազախի, Թոուզի և Ադրբեջանի այլ շրջանների ղեկավարության թողտվությամբ ու մասնակցությամբ հայերի դեմ կատարվող խժդժությունները, ապա պարզ կդառնա, որ այն դարձել է պետական քաղաքականություն, որն ուղիղ գծով տանում է դեպի կենտրոնական կառավարության բարձրագույն պաշտոններում գտնվող ինչ-որ պաշտոնյաներ: Այլապես ինչո՞վ բացատրել, որ այս հինգ լարված ամիսների ընթացքում ոչ մի հանցագործություն իր արժանի գնահատականը չստացավ, որ աշխարհի գերհզոր պետությունը իբր թե չի կարողանում երկու հանրապետություններ իրար միացնող ճանապարհների անվտանգությունը ապահովել: Ինչո՞վ բացատրել, որ կենտրոնական կառավարությունը կոմունիստական դաստիարակության բնագավառում սոցիալիստական մրցության հաղթող է ճանաչում Սումգայիթն ու Ադդամն այն դեպքում, երբ դեռ չի չորացել Սումգայիթում թափված արյունը, երբ դեռ աշխարհը սպասում է հանցագործների դա-

տին: Որևէ նշանակություն չունի, թե բյուրոկրատական ապարատի որ օղակից է դուրս գալիս այդ գարշելի լկտիությունը: Ինչո՞վ ենք երաշխավորված, որ վաղն էլ Թալեաթն ու Էնվերը չեն հռչակվելու Սովետական Միության հերոսներ:

Ինչո՞վ բացատրել, որ Մասիսում գործադրված թունավորումների դեմ կենտրոնական կառավարությունը ոչ մի միջոց չի ձեռնարկում: Չէ՞ որ եթե իր մատը խառն չլիներ այդ գործում, եթե իր կամքին հակառակ լիներ միջազգային օրենքով արգելված այդ ոճրագործությունը, նա կայծակնային արագությամբ ամեն ինչ իր տեղը կդներ, ինչպես անում էր իր գոյության բոլոր տասնամյակներում:

Դեպքերի օբյեկտիվ ընթացքը ցույց է տալիս, որ այս լարված ու ծանր հետևանքներով հղի իրավիճակի կազմակերպիչները նստած են Կրեմլում:

Երբ Ղարաբաղի հայությունը ստորագրություններ էր հավաքում իր ցավը կենտրոնական կառավարությանը տեսանելի դարձնելու համար, հարևան ադրբեջանցիները ծաղրում էին նրանց՝ ասելով... «Դուք ստորագրություններ հավաքեցեք, մենք՝ փող, տեսնենք՝ Մոսկվայում ով կհաղթի»: Ժամանակն է պարզելու, թե ադրբեջանական ժողովրդից հավաքած միլիոնները Կրեմլում ինչ մարդկանց գրպաններ են մտել, որոնք հետևողականորեն աշխատում են երկու ժողովուրդներին հրել արյան բաղնիքի մեջ:

Չէ՞ որ Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու հարցում օրինական, բարոյական, քաղաքական, տնտեսական ու ազգային արգելք չկա: Հայ ժողովրդի պահանջը ամենաարդարացի, ամենադեմոկրատական պահանջն է, որով մի ժողովուրդ պահանջում է միևնույն քաղաքական-պետական միավորման մեջ ապրել ու գոյատևել:

1988 թ., հուլիս

ԲԱՑ ՆԱՄԱԿ Մ. Ս. ԳՈՐԲԱՉՈՎԻՆ

Ամբողջատիրական համակարգի պաշտպանները, ովքեր, սոցիալիստական հասարակարգի առկա ճեղքերն օգտագործելով, զբաղված են միայն սեփական գրպանները լցնելով, լրջորեն անհանգստացած, որ վերակառուցումն ու երկրի դեմոկրատացումը խփում են իրենց սոցիալ-քաղաքական շահերին, վճռականորեն կանգնեցին այն վիժեցնելու դիրքերում: Դրան հասնելու համար նրանք պետք է ցույց տային, որ սովետական երկրի ժողովուրդները կարող են հանգիստ ապրել միայն ու միայն մտրակի սպառնալիքի տակ:

Պետք է արժանին հատուցել նրանց փորձին ու իմաստնությանը: Նրանք ընտրեցին հսկայածավալ երկրի ամենաշիկացած այն կետը, ուր ամբողջ մի հարյուրամյակ ցարական ու սովետական վարչակարգերը չոր վառոդ էին կուտակել: Դա հայ-ադրբեջանական հարաբերությունների ասպարեզն էր: Նրանք ըստ ամենայնի հաշվի առան, որ սկսած Պետրոս Մեծից՝ ռուսական կայսրությունը միշտ էլ հենվել է հայության վրա, սիրաշահել մուսուլմանական աշխարհին, որ մանավանդ վերջին հարյուրամյակը բնութագրվում է հայ հայրենիքը շրջակա թուրք ժողովուրդներին կաշառք տալու և այդ ճանապարհով հավասարակշռություն պահպանելու քաղաքականությամբ: Եվ ահա վերակառուցման թշնամիները պայթեցրին հայ-ադրբեջանական հարաբերությունների արանքում կուտակված չոր վառոդը:

Այս ընթացքում արդեն ցեմենտվեց ստալինիզմի ժառանգորդների և սովետական իշխանության ընթացքում Ադրբեջանի ղեկավարությունը իր ձեռքում պահող պանթուրքական-մուսավաթական ընդհատակի սրբազան դաշինքը: Չպետք է մոռանալ, որ Ադրբեջանի մուսավաթականները 1920 թ. մի գիշերվա ընթացքում դարձան կոմունիստներ, որ Շուշին հրկիզող Ասլանովը իրեն հռչակեց Ղարաբաղի Ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ:

Քաղաքական այդ երկու ուժերի ամրապնդման գործում բնավ էլ երկրորդական դեր չեն խաղում ադրբեջանցիներից հավաքված այն հսկայական գումարները, որով կաշառվեցին վերջին թղթակցից մինչև բարձրաղաս պաշտոնյաները: Եվ հարցի փակուղի մտնելու գաղտնիքներից մեկն էլ դա է:

Ձեր հռչակած վերակառուցման ու դեմոկրատացման լոզունգներով խրախուսված ղարաբաղցին, որ միշտ քայլել է առաջավոր Ռուսաստանի առաջին շարքերում, կարծելով, թե իրոք եկել է արդարության վերականգնման ժամանակը, Ձեր իսկ տված սահմանադրական իրավունքների շրջանակներում բարձրացրեց իր ձայնը և ընկավ սևհարյուրակային Ռուսաստանի ժառանգորդների պատրաստած ծուղակի մեջ: Պետական բարձր իշխանությամբ օժտված այդ ուժերը ընդունեցին ղարաբաղցիների պատվիրակություններ, նրանց միջոցով ոգևորեցին ժողովրդին և հանրագրերով իր պահանջները ներկայացնող ժողովրդին մղեցին դեպի հրապարակներ: Ծայր առավ համազգային շարժում, որն արդեն գերազանցեց վերակառուցման թշնամիների ակնկալությունները, երկրի ու ամբողջ աշխարհի առաջ դրեց արմատական հարցեր, որոնք դարձան Ձեր հռչակած քաղաքականության փորձաքարը: Եվ եթե դա անժամանակ էր, ապա Ձեր թիկունքին դանակ խրեց ոչ թե հայ ժո-

ղովուրդը, այլ Ձեր կողքին կանգնած ուժերը, որոնց շրջապատում սպառնալիքի տակ է նույնիսկ Ձեր ֆիզիկական գոյությունը: Իսկ Դուք, փոխանակ վերակառուցումը սկսելու Կրեմլից, թաքցնում եք կաշառակերների այն ցուցակը, որ ժողովրդի լավագույն զավակները խիզախություն ունեցան հրապարակորեն Ձեր ծեռքը դնելու:

Լենինը բոլոր քաղաքական հոսանքների, կուսակցությունների ու կառավարությունների կրախի մատնվելու հիմքերի հիմքը համարում էր խոսքի ու գործի միջև եղած հակասությունը: Նայեցեք Ձեր հռչակած խոսքի և իրական գործի միջև առաջացած այն ահռելի անդունդի խորքը, որ վերակառուցման թշնամիները ստեղծել են ղարաբաղյան շարժման կապակցությամբ:

Աշխարհի բոլոր ժողովուրդները թոթափել են գաղութային ստրկացման լուծը: Ղարաբաղի հայությունն էլ, սովետական ազատ հասարակարգում, ուզում է ազատագրվել պանթուրքական Ադրբեջանի լծից, մի լուծ, որ գաղութատիրության համաշխարհային պատմության մեջ անկրկնելի բազմաթիվ փաստեր է արձանագրել: Ո՞ր գաղութատեր պետությունում են մանկասպան բանդիտի համար կառավարական շուքով, կառավարության ղեկավարի նախագահությամբ թաղում կազմակերպել և գերեզմանին արձան կանգնեցրել: Գաղութային ո՞ր երկրում են մթերման պլանների կատարման քողի տակ բնակչության տեղաշորերի բուրդը հանել տարել՝ նրանց թողնելով չոր գետնին: Վերջապես, որտե՞ղ է կուսակցական ղեկավարության ծեռքով ոչնչացվել Հայրենական պատերազմի զոհերի հիշատակին կառուցված հուշարձանը, բացի Ադրբեջանում գտնվող հայկական գյուղից:

Ահա այս վիճակի մասին է, որ տեղյակ էր դարձնում վերակառուցման լոզունգներով ոգևորված ղարաբաղցին՝ ակնկալելով հումանիզմի ու մարդու բնական իրավունքի հաղթանակի հնարավորություն:

Իսկ ինչո՞վ պատասխանեցին վերակառուցման թշնամիները: Նրանք այլ զենք չունեին, բացի հարցի լուծման թուրքական տարբերակից: Կուսակցական ու կառավարական ղեկավարության ակտիվ ջանքերով նրանք կազմակերպեցին աղդամցիների արշավանքը դեպի Ղարաբաղ, Ադրբեջանից ու Հայաստանից հավաքագրեցին ջարդարարների մի բանակ և նախօրոք կազմած ցուցակներով եռօրյա ջարդ կազմակերպեցին Սումգայիթում, նույնանման մեթոդների դիմեցին Սինգեչաուրի, Թոուզի, Ղազախի և այլ շրջաններում ապրող հայերի նկատմամբ, քիմիական պատերազմը արգելել հռչակող պետության մեջ քիմիական զենքով հաշվեհարդար տեսնելու սպառնալիքը ցուցադրեցին Մասիսում՝ շարքից հանելով 50-ից ավելի բանվորուհիների, ժողովրդին ու

նրա արդար շարժումը վարկաբեկելու համար կազմակերպեցին «Զվարթնոց» օդանավակայնի խայտառակ պրովոկացիան և այսօր էլ նույն արյունոտ պրովոկացիաները տեղափոխել են Ղարաբաղ:

Իրադարձությունների այս շղթան, ինչքան էլ խարդախված ներկայացնի պաշտոնական պրոպագանդան, չի կարող թաքցնել ճշմարտությունը: Իսկ ճշմարտությունն այն է, որ վերակառուցման թշնամիները գործի են դրել հսկայական պետական մեքենան՝ արյան մեջ խեղդելու ժողովրդի արդար պահանջը: Ո՞ւմ կարող եք հավատացնել, որ աշխարհի գերհզոր պետությունը անզոր է իր տանը մարդու ֆիզիկական գոյության իրավունքն անգամ ապահովելու, ապահովելու բնակչության անվտանգ երթևեկությունը:

Այն ուսմունքը, որի անունից հանդես եք գալիս, քաղաքական այն դոկտրինաները, որ թմբկահարում եք աշխարհով մեկ, ոչ մի ընդհանուր եզր չունեն այն դրության հետ, որ ամիսներով Ղարաբաղը վերածվում է թշնամական ուժերով շրջափակված, աշխարհից կտրված ամրոցի: Միջնադարյան նվաճողները պաշարված ամրոցները ծնկի էին բերում՝ նրանց զրկելով ջրից: Միջնադարյան այդ ակտն էլ կատարեցին՝ պայթեցնելով Ստեփանակերտը մատակարարող ջրատարը:

Բոլորիս համար ղեկավար ուսմունքն ու գրավոր քաղաքականությունը թույլ չեն տալիս Հայաստանի ու Ղարաբաղի քաղաքական անջատում, որովհետև նրանք մի օրգանիզմ են և պետք է լինեն անբաժան: Իսկ գործող քաղաքականությունը օրինականացնում է ցարերի ու Ստալինի պրակտիկան այդ հարցում: Ավելի գարշելի բան կարո՞ղ է լինել, քան այն իրողությունը, որ ամեն անգամ Ադրբեջանում անմեղ հայերի արյուն է թափվում, Հայաստանն են լցնում զորքերով: Չէ՞ որ բացարձակ ճշմարտություն է, որ այս ընթացքում ադրբեջանական ժողովուրդը ոչ մի զոհ չի ունեցել հայի ծեռքով, չնայած հարյուրավոր, եթե ոչ հազարավոր հայեր են զոհվել, տասնյակ հազարներ իրենց կյանքը փրկելու համար դարձել են անտուն ու անտեր փախստականներ: Ավելի հակամարդկային ու գարշելի բան կարո՞ղ է լինել, քան ցեղասպանության հովանավորումն ու խրախուսումը, քան ցեղասպանության դիմողներին սոց. մրցության հաղթող հռչակելը, քան այն, որ Ադրբեջանի կառավարությունը պետական որոշումով իրենն է հռչակում հայ ժողովրդի հազարամյակների նյութական մշակույթն ու պատմությունը և հանգիստ մարսում: Սա արդեն գերազանցում է ամեն տեսակի ֆաշիզմ, սա ուլտրաֆաշիզմ է:

1905 թ. ցարական սևհարյուրակային Ռուսաստանի կազմակերպած հայ-թուրքական ընդհարումներից անհրաժեշտ դասեր քաղած ժողովուրդը հանդես է բերում քաղաքական բարձր գիտակցություն ու կազմակերպվածություն՝ հույս ունենալով, որ ադրբեջանցիները վերջապես կհասկանան, որ իրենք կույր գործիք են սև ուժերի ձեռքին, և կսթափվեն: Բայց, դժբախտաբար, իշխող ուժերը Բաքվից մինչև Մոսկվա ոչ միայն այդ ժողովրդին սթափվելու հնարավորություն չեն տալիս, այլև ամեն ինչ անում են հրդեհը խորացնելու համար: Դրա հերթական դրսևորումն է ադրբեջանցի այն կեղծ փախստականների ամբոխը, որ կուտակել են Ղարաբաղում, այն հերթական կոնֆլիկտը, որ կազմակերպեցին Ստեփանակերտի շուրջը:

Վերջին իրադարձությունները ցույց տվեցին հուլիսի 18-ի որոշման սնանկությունը, ցույց տվեցին, որ առանց հարցի քաղաքական լուծման վերակառուցման թշնամիները շարունակելու են դրությունը շիկացնել՝ գործի դնելով պետական իշխանության բոլոր միջոցները:

Չպետք է անտեսել, որ ղարաբաղյան պրոբլեմը դուրս է եկել զուտ հայկական, կամ երկու ժողովուրդների կոնֆլիկտ լինելու շրջանակներից և ձեռք բերել համասովետական բովանդակություն, իր վրա վերցրել վերակառուցման ճակատագրի բեռը: Չպետք է անտեսել, որ այսօր կանգնել ենք երկու Ռուսաստանի փաստի առաջ, որ պաշտոնական Ռուսաստանն իր շչերբիցկիների և նման հաստավիզ պարոնների բերանով բնավ էլ չի արտահայտում արթնացող դեմոկրատիայի շահերը:

Երբ դուք Կրասնոյարսկում էիք՝ այնտեղի հուզումները հանգստացնելու համար, Նովոսիբիրսկի արվեստագետները Երևանում բարեգործական համերգներ էին տալիս հօգուտ Ղարաբաղի: Այսօր Երևանի Ազատության հրապարակում հայի կողքին հացադուլի են նստել քուրդը, եզդին, ուկրաինացին, ռուսը և պահանջում են հարցի արդարացի լուծում: Սա արդեն այն ճշմարիտ ինտերնացիոնալիզմն է, որ դուրս է եկել պաշտոնական Ռուսաստանի ստալինյան ինտերնացիոնալիզմի դեմ և դառնում է մի ուժ, որի դեմ անզոր է պատժիչ ջոկատների ու տանկերի սպառնալիքը:

Ղարաբաղյան հարցի արդարացի լուծման պահանջն այսօր ամբողջ սովետական դեմոկրատիայի պահանջն է: Փոքրիկ Ղարաբաղը դարձել է ոչ միայն հայ ժողովրդի ազգային, այլև ողջ Միության սոցիալ-քաղաքական հարցերի լուծման կուլմինացիան: Վերջին հաշվով վերակառուցողական եռամյա քամի քշելուց հետո մի կետից պետք է սկսե՞ք վերկառուցում, թե՝ ոչ: Չէ՞ որ փակուղու մեջ է նաև վերակառուցման

հարցերի հարցը՝ երկրի սոցիալ-տնտեսական վերափոխումը: Ոչ մի բարոյական քաղաքացի չի կարող հաշտվել այն իրողության հետ, որ միլիոնների արյուն-քրտինքով ստեղծված բարիքները առայժմ վերակառուցման քողով մտնում են մասնավոր գրպաններ:

Դուք պարտավոր եք արդարացիորեն լուծել ղարաբաղյան հարցը՝ հրաժարվելով թուրքական տարբերակից ու տանկերից: Այստեղից է սկիզբ առնում համընդհանուր ու ճշմարիտ վերակառուցումը: Ղարաբաղն էր այն փոքրիկ, բայց հերոսական միջավայրը, ուր բարձրացավ ձեր հռչակած հեղափոխական վերակառուցման դրոշը: Ոտնատակ մի տվեք այդ դրոշը:

1989 թ.

ԴԱՐՁՅԱԼ ՓԱՍՏԵՐԻ ՃՆՇՄԱՆ ՏԱԿ

Հավասարության ու եղբայրության, ազգերի լենինյան ինտերնացիոնալ բարեկամության կարգախոսների թիկունքում, որպես Լենին-Աթաթուրք գործարքի տրամաբանական շարունակություն. 1921 թվականի հունիսի 5-ի Կավբյուրոյի որոշումով Ղարաբաղը հանձնվեց Ադրբեջանի ողորմածությանը և ընկավ այնպիսի պայմանների մեջ, որն անծանոթ էր համաշխարհային գաղութատիրության հինգհարյուրամյա պատմությանը: Եթե գաղութատիրության բնորոշ գիծը գաղութների անխնա շահագործումն ու թալանն էր, պանթուրքիզմի ցնորամիտ ծրագրերով հարբած ադրբեջանական վերին շրջանները, խրախուսված Մոսկվայի թողտվությամբ, դրան գումարեցին Ղարաբաղը իր բնական տերերից մաքրելու, Մեծ Թուրանի ստեղծման ճանապարհին ընկած այդ պատնեշը ևս հալեցնելու քաղաքականությունը: Ստրատեգիական այդ նպատակն իրականացնելու համար նրանք կանգ չեն առել ու կանգ չեն առնում բարոյական ու անբարոյական որևէ միջոցի առջև: Մասնագետ գիտնականների պատկառելի կոլեկտիվ է հարկավոր տասնամյակների շերտավորված իրողությունները համակարգելու համար:

Միաժամանակ ղարաբաղցին, սկսած 1921 թվականից, և ոչ մի օր չի հաշտվել իր վիճակի հետ, անընդհատ պայքարել է ելք գտնելու համար՝ ամեն հինգ տարին մեկ զոհասեղանին դնելով իր լավագույն զավակներին, որոնք կա՛մ կյանքով, կա՛մ սիբիրյան տայգաներով են հատուցել: Կասկած չկա, որ համընդհանուր վերակառուցման այս ժխորում ղարաբաղցին լռել չէր կարող, մանավանդ որ նա միամտորեն կար-

ծում էր, թե վերջապես վրա է հասել իր ցավը բուժելու ամենահարմար ժամանակը: Սակայն ոչ մի անգամ դարաբաղյան հիմնահարցը ռեգիոնալ շրջանակներից դուրս չէր բերվել, չնայած պայքարի ձևերն ու մեթոդները բոլոր ժամանակներում էլ նույնն են եղել՝ բողոք-խնդրանք, համախոսականներ, պատվիրակություններ ու անհատական խիզախումներ՝ կենտրոնից հարցի արդարացի լուծման ակնկալիքով:

Ո՛վ դարաբաղյան հարցը դուրս բերեց լայն ասպարեզ, դարձրեց համաշխարհային մի նոր շարժման ազդանշան ու սկիզբ, դարաբաղյան ալիքը հասցրեց մինչև բեռլինյան պատը: Պատասխանը միանշանակ է՝ Մոսկվան և միայն Մոսկվան՝ մեզ համար առայժմ անբացատրելի ու մութ քաղաքական նկատառումներով:

Խաբված արդարության վերականգնման լոզունգներով՝ դարաբաղցին իր ցավը լսելի դարձնելու հերթական քայլը կատարեց՝ մի ամսվա մեջ երեք պատվիրակություն ուղարկելով Մոսկվա: Առաջին պատվիրակությունը կազմում էին անասնապահ, տրակտորիստ ու հողագործ, վերջինը՝ «բարձր» մտավորականությունը՝ ի դեմս «ծիտիկ» երգող մանկագրի: Կրեմլի դռները, որ 70 տարի պարապապատված էին հասարակ մահկանացուների առաջ, հանկարծ բացվեցին դարաբաղյան պատվիրակների համար: Այնտեղից երկդիմի խոստումներով ու «կարմիր հույսերով» այնպես ոգևորեցին ժողովրդին, որ վերջինս դուրս եկավ հրապարակ: Իսկ երբ դարաբաղցին իր վճռական խոսքն էր ասում ստրկության դեմ՝ հենվելով նոր քաղաքականության ընձեռած օրինական միջոցների վրա, Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի պատասխանատու աշխատողը նրան սպառնում է հարյուրհազարանոց գաղտնի բանակով, որը կարող է Դարաբաղը մոխրի վերածել: Առաջին պլան է մղվում հարցի լուծման, այսպես կոչված ադրբեջանական տարբերակը, որը ոչ այլ ինչ է, քան Չինգիզ խանից, Լենկթեմուրից ժառանգված և քաղաքակրթությանը հասցրած ավերածությունների հազարամյա փորձից հանված հոգևոր կտակ: Շուտով սպառնալիքը վեր է ածվում գործողության: Կենտկոմի քարտուղար Բաղիրովը Դեմիչևի, Ռազումովսկու, Կատուսևի և մյուսների աչքի առաջ (գուցե և խրախուսանքով կամ հարկադրանքով) կազմակերպում է ադրամցիների բազմահազարանոց արշավանք դեպի Դարաբաղ: Բայց քանի որ ադրամցիները իրենց դեմ կանգնած ուժ տեսան, որի հետ ընդհարվելու դեպքում իրենք էլ զոհեր կտային, մեջտեղ հանեցին ադրբեջանուհու լաչակը, որը մոլորեցրեց միայն Եվտուշենկոյի պես անտեղյակ մարդկանց: Չախողված արշավանքի վրեժը լուծվեց Սումգայիթում և ադրբեջանական մյուս քաղաքներում, ուր հայերը ինքնապաշտպանության հնարավորություն չունեին: Այստեղ ևս վճռական տեղը բռնում են վերակառուցման կրեմլյան թշնամիները: Ադրամում սպանում են երկու ադրբեջանցու: Կատուսևը այն վերագրում է հայ-ադրբեջանական ընդհարմանը՝ բարոյաքաղաքական արդարացում նախապատրաստելով սումգայիթյան ցեղասպանության համար:

Կատարած ահավոր ոճրագործություններից ուշքի չեկած ադրբեջանցուն զգաստացնելու է գալիս Լիգաչովը, որի այցելությունը Բաքու նոր սկիզբ է դառնում հայ-ադրբեջանական առճակատման: Այս անգամ արդեն ադրբեջանական քաղաքներից ու հայաբնակ շրջաններից ջարդի ու կոտորածների սպառնալիքով դուրս են մղում հայերին՝ շատ դեպքերում տնային շորերով ու ոտաբոբիկ: Ադրբեջանի բազմաթիվ բնակավայրերում հայերի դուրս մղումը կատարվում է կուսակցական ու պետական ղեկավարների ու բանակային միավորումների ջանքերով ու մասնակցությամբ: Միայն Բաքվում կես միլիոնից ավելի հայեր զրկվում են տուն ու տեղից, ցրվում Միության բոլոր զուգահեռականներով: Այդ ամենին զուգահեռ սկիզբ է առնում Դարաբաղի բլոկադան՝ միջնադարյան բարբարոսությունները հիշեցնող ավազակային մեթոդներով: Բանը հասնում է այնտեղ, որ մի փոքրիկ գյուղ փակում է ճանապարհը՝ մարզի բնակչությանը զրկելով երթևեկելու հնարավորությունից, և այն էլ Հատուկ դրության ու պարետային ժամի պայմաններում: Նույնիսկ բանակի հայ փոխգնդապետը պետական ճանապարհով անցնելիս ընկնում է վայրենի ջարդի տակ, իսկ հանցագործները ոչ միայն չեն պատժվում, այլև շարունակում են իրենց լկտի գործողությունները: Հավատա՞նք, որ աշխարհի սարսափ գերիզոր պետությունը անզոր է այդ ամենը կարգավորելու գործում...

Պատմությունը ցույց է տալիս, որ քաղաքակրթության ամենաստորին աստիճանում գտնվող պետություններում անգամ ամեն մի հանցագործություն ստացել է իրեն արժանի գնահատականը: Իսկ XXI դարի շեմին հասած Կրեմլը իր պաշտպանության տակ է առնում մարդակերությունից մարդասպանության աստիճանի հասած բարբարոսությունը, մի ամբողջ ժողովրդի հետևողականորեն ներշնչում անպատժելիության համոզմունք: Աշխարհին ենք թողնում գնահատականը այն իրողության, երբ սումգայիթյան ահավոր ոճրագործությունից երկու ամիս հետո Մոսկվան Սումգայիթն ու Ադրամը ճանաչեց որպես սոցիալիստական մրցության հաղթող երիտասարդության ինտերնացիոնալ դաստիարակության բնագավառում: Ահա թե Մոսկվան որտեղ է հասցնում ժողովուրդների լենինյան ինտերնացիոնալիզմի պրակտիկան:

Իսկ ձեռնարկված միջոցառումնե՞րը, հուլիսի 18-ը և հունվարի 12-ը: Ժողովրդի արդար պահանջը կատարելու փոխարեն վերացվեց սովետական իշխանությունը Ղարաբաղում, մտցվեց Հատուկ կառավարման սիստեմ, որը վատթարագույնն է ամեն կարգի օկուպացիոն իշխանությունից: Մարզի հայ բնակչությանը շղթայելով զորքերի պողպատյա օղակով՝ Հատուկ կոմիտեն հետևողականորեն մարզը ադրբեջանականացնելու քաղաքականություն է իրականացնում: Պարետային ժամը խախտելու պատրվակով սեփական բակում քայլող հայ կնոջը ջարդելով պարետատուն են տանում, երկրով մեկ հայտարարում որպես օրինախախտ, իսկ մի քանի կիլոմետր այն կողմ գտնվող ադրբեջանական գյուղերում գիշերներն անգամ հզոր լուսարձակների տակ շինարարություն են կատարում, ազերբուրքերով չբավարարվելով. Միջին Ասիայից բռնագաղթեցված մեսխեթ թուրքերին են խոթում այնտեղ, որպեսզի մարզի կենտրոն Ստեփանակերտ քաղաքը շրջափակեն այլացեղ եկվորների անանցանելի շղթայով:

Իսկ ինֆորմացիայի կենտրոնական միջոցնե՞րը: Իրականության աղավաղման, ամեն ինչ ծուռ հայելու մեջ ցուցադրելու, շեշտված հակահայկական դիրքորոշման մեջ նրանք վաղուց առաջ են անցել գեբելյան պրոպագանդայից՝ բանը հասցնելով այնտեղ, որ իբր հայերը զինվորականներին սիրաշահելու համար կանայք ու աղջիկներ են առաջարկում նրանց երևանում: Իսկ թե ինչո՞ւ են երևանը զորքերով լցրել, միայն իրենց գիտենալիքն է:

Այդքանից հետո ինչպե՞ս մեղադրենք քաղաքականության մեջ գավառական դերասանի անուն վաստակած Վեզիրովին, որ պարծենալով հայտարարում է, թե իրենք յոթ միլիոն են և հեշտությամբ կոչնչացնեն հայերին: Այսքանից հետո հասկանալու և բացատրելու դժվարություն չի ներկայացնում բունիաթովների և անարների վարքագիծը:

Երկիրը կեղեքող, երկիրը անկումից-անկում տանող կնճռոտ հարցերից և ոչ մեկն էլ Մոսկվան առ այսօր չի լուծել և ցույց չի տալիս լուծելու նշաններ: Ինչպես դարաբաղյան, այնպես էլ շատ ու շատ այլ հարցերում Մոսկվան բռնել է իրողությունները մեխանիկորեն բարդացնելու ու խճճելու կուրս, որը շղթայական ռեակցիայով հարցականի տակ է դնում ոչ միայն վերակառուցման ճակատագիրը, այլև երկիրը կանգնեցնում է ազգամիջյան պատերազմների ու քաղաքացիական կռիվների ռեալ սպառնալիքի տակ: Հասունացած հարցերը պետք է լուծում ստանան, ուրիշ բանական միջոց չկա:

Մի քանի տասնամյակ առաջ սպիտակամորթ դեսպաններ ուտող աֆրիկյան նեգրերն անգամ ձեռք են բերել ազատություն ու անկախություն: Ղարաբաղցու միակ պահանջը ադրբեջանական գաղութային ստրկացումից ազատագրվելն է: Սա այս պետք է հասկանան ժողովրդի կամքի արտահայտիչ պատգամավորները և ամեն ինչ անեն ինչպես այս, այնպես էլ հասարակական կյանքի առաջ կանգնած բոլոր անհետաձգելի հարցերը լուծելու համար: Նրանք ուժ կունենա՞ն վնասազերծելու բրեժնևյան լճացման «շկոլայով» անցած, կաշառակերությամբ ու կաշառատվությամբ պետական իշխանությունը իրենց ձեռքը հավաքած զորավոր ուժերին:

1990 թ.

ԳՈՐԲԱՉՈՎԸ ՊԵՏՔ Է ԴԱՏՎԻ*

«Արդ, Հուստինիանոսը որպես մա՞րդ կյանքից պիտի հեռանա, թե՞ իր կյանքը պիտի խորտակի որպես դևերի արքա, ճշմարիտը կիմանան նրանք, ովքեր այն ժամանակ գոյություն կունենան»:
Պրոսկոպիոս Կեսարացի, «Գաղտնի պատմություն»

Արցախյան վերջին իրադարձությունները ջարդուփշուր արեցին բոլոր դիմակները, ամբողջ խորությամբ ցուցադրեցին վարչակարգի իսկական պատկերը:

Գետաշենում պատանդ վերցված գնդապետի մոտ հայտնաբերվեց նախօրոք ծրագրավորված ռազմական գործողությունների մանրամասն պլանը և փաստաթղթեր, թե ինչ նպատակով է կատարվում այդ ակտը: Նույն ձեռագիրն է, նույն մեթոդները, սկսած այն օրից, երբ ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը դրոշ դարձրած Լենինը ձեռնամուխ եղավ Ռուսական կայսրության վերանվաճմանը՝ կրկին ստրկական լծի տակ դնելով կայսրության ազատատենչ ժողովուրդներին, մինչև աղվանական ագրեսիան: Նորությունն այն է, որ Գետաշենի ենթաշրջանում չկարողացան ճարել «հեղափոխականորեն տրամադրված պրոլետարիատ» կամ մի Բաբրակ Քարմալ, որոնց անունից սկսեին ագրեսիան և «համեստորեն» լռեցին «ազատարար» բանակի «ինտերնացիոնալ պարտքի» մասին:

Արցախյան իրադարձությունները մինչև վերջ մերկացրին Գորբաչովին, անառարկելիորեն հաստատեցին, որ վերջին չորս տարում երկրում կատարված բոլոր չարիքների հեղինակն ու գործողության մեջ դնողը

* Առաջին անգամ տպագրվել է «Զով Արցախ» թերթում, 1991 թ., թիվ 6, այնուհետև՝ «Արցախականչ» թերթում, 1991 թ., թիվ 14:

անձնապես ինքն է՝ սկսած Ղարաբաղյան շարժման հրահրումից մինչև Սումգայիթում ու Բաքվում կատարված մարդակերությունը և հետագա մյուս արյունահեղությունները:

Այսօր Արցախը հայաթափելու համար նա գործողության մեջ է դրել էնվերի ու Թալեաթի փորձը. բանակի ու ադրբեջանական ՕՄՈՆ-ի համատեղ ուժերով հայկական գյուղերից նախ կալանավորում ու տանում են 17-50 տարեկան տղամարդկանց, հետո՝ մնացած բնակչությանը դուրս քշում բնակավայրերից:

* * *

Դեկաբրիստական ապստամբությունը ճնշելուց անմիջապես հետո Նիկոլայ Առաջինը ստեղծեց հատուկ մի ծառայություն՝ երրորդ բաժանմունք, որն ամիսը երկու անգամ պետք է զեկուցեր հսկայական կայսրության մեջ կատարված ամեն ինչի մասին, որը կարող է կասկածելի համարվել ինքնակալի կամքի ու պետության շահերի տեսակետից: Լենինը ծայրահեղ կատարելագործման ենթարկեց այդ համակարգը՝ ստեղծելով ամենատես, ամենազոր, ամենակարող ՉԵԿԱ-ՊՈՒԿ-ը, որն իր անշոշափելի շոշափուկներով գիտե, թե Միության յուրաքանչյուր քաղաքացի ինչով է շնչում: Ավելի քան 150 տարի է, ինչ կայսրությունում որևէ պատժամիջոց չի կարող կիրառվել առանց ինքնակալի կամքի ու թույլտվության: Դա բխում է ստրկատիրական վարչակարգի էությունից, ուր բոլորը հիերարխիկ սանդուղքով պատասխանատու են կատարվածի համար, բացի մեկից՝ բուրգի գագաթը զբաղեցնողից:

Իր գոյության վերջնակետին հասած, պատմական անխուսափելիությամբ կործանման դատապարտված կայսրությունը փրկելու համար կրեմլյան վարչակարգը 1985 թ. ծեռնամուխ եղավ հերթական պրոպագանդիստական խաբեության՝ հռչակելով արագացում, վերակառուցում, դեմոկրատացում: Չէ՞ որ նախորդ տասնամյակներին ևս նման ազգակից բառերի ծխածածկույթով էին քողարկում երկրի տնտեսական ու քաղաքական ձախողումները, հրաշալի ստերով մոլորեցնում ժողովրդական մասսաներին: Ժողովրդին ստրուկների կույր զանգված դարձնելուց հետո Ստալինը հայտարարում էր, թե իր սերունդը կապրի կոմունիզմի օրոք: Խրուշչովը 1960 թ. սահմանեց կոմունիզմին հասնելու տարեթիվը: Բրեժնևը հերթական, փոքրիկ ստերով էր կերակրում ժողովրդին: Ստախոսության մեջ ո՞ր տիրակալից էր պակաս Գորբաչովը...

Սակայն դանակն արդեն ոսկորին էր հասել, գեղեցիկ ստերի փոխարեն ժողովուրդն արդեն պահանջում էր իրական տեղաշարժեր, որ չէր կարող տալ ամբողջատիրական վարչակարգը: Ամբողջատիրությունն ու կայսրությունը մի անբաժանելի միասնության մեջ պատկերացնող կոմունիստական վերնախավը, համոզվելով, որ այլևս հնարավոր չէ ստով փրկել վարչակարգն ու կայսրությունը, 1987 թ. անցավ հակահարձակման երկու գլխավոր ուղղություններով:

Առաջինը առանց այն էլ կաթվածահար տնտեսական կյանքի կազմալուծումն էր՝ «վերակառուցողական» ռեֆորմների ու շուկայական հարաբերությունների ծրագրերով, ծրագրեր, որոնք հրապարակ էին իջել չգործելու համար՝ ստատեգիական նպատակ ունենալով սովի ոսկրոտ ձեռքով 300 միլիոնի սանձահարումը: Այլապես մի կողմ կշպրտեին հաստավիզ ու դատարկագլուխ ակադեմիկոսներին իրենց փուչ ծրագրերով, որպեսզի ժողովուրդը մի ելք ճարի: Չէ՞ որ իրենց մարգարեն ունի նման ցուցում: Բայց այդ նույն մարգարեն մարդակերության հասնող սովի, արյան ու տեռորի զենքով վերանվաճեց կործանված ռուսական կայսրությունը, նույն զենքով Ստալինը կառուցեց «սոցիալիզմը», նույն մեթոդներով Գորբաչովը փորձում էր փրկել կայսրապետությունն ու տոտալիտարիզմը:

Երկրորդը ազգամիջյան թշնամանքի ու կոտորածների բորբոքումով ենթակա ժողովուրդների մեջ անզորության ու անպաշտպանվածության զգացումի խորացումն էր, որը պետք է հարկադրեր նրանց՝ ամուր բռնելու հզոր կենտրոնի փեշից, իր ճակատագիրը անվերապահորեն հանձնելու այդպիսի կենտրոնի տնօրինությանը: Եվ այդ ամենը վերակառուցման ու դեմոկրատացման դրոշի թիկունքում, դրոշակակրի կեցվածքով, բայց «դեմոկրատիզմի» ամենաանձարձակ, ամենաավազակային դրսևորումով:

Կորցնելով սոցիալական ու քաղաքական ամեն մի հենարան՝ Գորբաչովն այժմ էլ, որպես վերջին հույս, ձեռք է մեկնել բանակին: Այստեղ ևս բորբոքում է խուճապային տագնապ զինծառայողների վաղվա անմխիթար օրվա հեռանկարով, որպեսզի կարողանա այդ ամենահզոր բռունցքը օգտագործել սեփական (՞՞՞) ժողովրդի դեմ՝ նրան վերջնականապես համակենտրոնացման ճամբարին հնազանդեցնելու համար: Այսօր նա բանակը պատժիչ գործիք է դարձրել ոչ միայն հեռավոր Արցախում կամ անհնազանդ հանրապետություններում, ուր հարկ եղած դեպքերում անխնա կոտորում է հպատակներին կամ «հերոսական» գրոհով զավթում հեռուստաաշտարակներ, այլև մի խաղաղ ցույցի առաջացրած սարսափից մղված՝ մայրաքաղաքը լցնում է զինված զորամիավորումներով՝ անհրաժեշտության դեպքում իր գործը տեսնելու համար:

Կայսրապետության համար չկան առանձին ազգեր ու ազգություններ, կա միայն հպատակների զանգված և մի ժողովուրդ, որի անունից նա հանդես է գալիս, և պատուհասող ձեռքը գործում է երկրի ցանկացած կետում: Վերջին վկաներից մեկը դեմոկրատների շենքի պայթեցումն է մայրաքաղաքում:

Այս ամենը վկայում է, որ վարչակարգը անվերապահորեն ընտրել է ջարդերի ու տեռորի միջոցով ժողովրդին վերաստրկացնելու ուղին: Կայսրության ժողովուրդների հրամայական խնդիրը վարչակարգին այդ հնարավորությունից զրկելն է: Իսկ դրան հասնելու միջոցներից մեկն էլ ցուցադրելն է Գորբաչովի ու նրա շրջապատի առ այսօր կատարած ոճրագործությունները մարդկության դեմ:

Ժամանակագրական հաջորդականությամբ ու ոճիրի ահագնությամբ առաջին տեղը առ այսօր զբաղեցնում է չեռնոբիլյան աղետը:

Պատմության վաղնջական ժամանակներից սկսած թշնամական երկրների գերի ընկած զինվորներին եթե չէին ոչնչացնում, ստրկացնում էին, ստրուկների «ավելցուկն» էլ վաճառքի հանում միջազգային շուկաներում: Այս երևույթի հետագա զարգացումը հանգեց լենին-ստալինյան ու հիտլերյան համակենտրոնացման ճամբարներին՝ իրենց հայտնի հետևանքներով, որը հաջողությամբ շարունակվեց բրեժնևյան Ռուսաստանում, շարունակվում է Թուրքիայում և Իրաքում:

Չեռնոբիլը սեփական ժողովրդի գլխին պայթած աղետ էր, որի համար վարչակարգը գուցեև տվյալ պահին մեղավոր չէր և կարող էր աղետը տեսանելի դարձնել աշխարհին: Սակայն վարչակարգի պարագլուխը, գերի ամեն ինչ քաղաքական ամբիցիային ստրկացնելու գաղափարական կողմնորոշմանը, խաչ քաշեց միլիոնների ճակատագրի վրա: Թող միլիոնները կոտորվեն, միայն թե կոմունիստականի ստվերը տեսանելի չլինի: Ստրկական համակերպությամբ հնազանդ մեռնողների լեզուն բացվեց միայն դարաբաղյան ընբոստացման շնորհիվ, և այսօր աշխարհը ձեռք է մեկնում թշվառներին: Իսկ Գորբաչովը հեշտությամբ մի խեղճ առողջապահության մինիստրի ու մի քանի «մանրապծեղ» չինովնիկների աշխատանքից ազատելով, իսկ հետո էլ մի քանի չինովնիկների դատի տալով՝ սեփական հանցանքը գցեց նրանց ուսերին և պոչը ազատեց չոր ու ցամաք: Այդ ինչպե՞ս է, որ նա գիտեր, թե օրերի հաջորդականությամբ ինչեր են ասել իր ու իր կնոջ մասին Երևանի Ազատության հրապարակում 1988 թ. ցույցերի ժամանակ և Մոսկվայի տրամվայներում, իսկ չէր իմանում Չեռնոբիլի ահավոր աղետի հետևանքների մասին:

Չեռնոբիլյան ողբերգության հետևանքների հարցում առաջին հանցագործը Գորբաչովն է, որը աշխարհից թաքցրեց աղետի չափերը և պետք է պատասխան տա մարդկության դեմ կատարած ոճրագործության համար:

Մարդկության դեմ Գորբաչովի հերթականորեն հաջորդ ոճրագործությունը Միության ժողովուրդներին իրար դեմ թշնամացնելն ու ազգամիջյան կոտորածներ հրահրելն է, որի չափերը գնալով ահագնորեն մեծանում են: Դա մի երևույթ է, որը, սկսած Բաբելական աշխարհակալությունից, բոլոր կործանվող կայսրությունների համար անխուսափելի ուղեկցի դեր է կատարել, չնայած չի կարողացել դրությունը փրկել: Որ Միության ժողովուրդների փոխադարձ թշնամանքի ու արյունահեղության կազմակերպիչը կենտրոնն է՝ Գորբաչովի ղեկավարությամբ, երևում է իրադարձությունների կոնկրետ դրսևորումներից: Այդ ամենը ջրի պես պարզ է հայ-ադրբեջանական առճակատման օրինակում, որը տրաֆարետի պես կրկնվում է ամենուր:

«Վերակառուցման» ողջ ընթացքում հայ-ադրբեջանական հարաբերությունները խառնելուց ազգամիջյան կոնֆլիկտներ հրահրելը այն եզակի դեպքն է, երբ կարելի է ասել, որ Գորբաչովը իր դահճությունը ճիշտ կետից սկսեց: Բանն այն է, որ սկսած 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից՝ հայ ժողովրդին դարձրել են երկու հզոր տերությունների պետական հարաբերությունների կարգավորման առարկա, և մի ամբողջ հարյուրամյակ տարբեր ձևերով, բայց անընդմեջ շարունակվում է հայերի ցեղասպանությունը, որը հսկայական չոր վառոդ էր կուտակել նաև հայ-ազերական հարաբերությունների արանքում: Բավական էր մի փոքրիկ կայծ, որ վառոդը պայթեր, իսկ Գորբաչովը կայծի փոխարեն կրակ նետեց վառոդի վրա:

Քանի որ այդտեղից սկսեց Գորբաչովը՝ օգտագործելով ցարական վարչակարգի 1905-1906 թթ. փորձը, և շարունակեց գործել Էնվերի ու Թալեաթի մեթոդով, ներկայացնում ենք միայն իրադարձությունների սկիզբը՝ ցուցադրելու համար կոմունիստական գործելակերպի մեխանիզմը, որն ընկած է բոլոր միջադեպերի հիմքում, մինչև Օշ, Տալլին, Հյուսիսային և Հարավային Օսեթիաներ:

1987 թ. հունիսին հայ գրականության օրեր կազմակերպեցին Բաքվում, և այդ «բարեկամական» հանդիսությունների ժամանակ «Բակինսկի ռաբոչի» պաշտոնաթերթը երկու անգամ վերածևեց ՀԽՍՀ պետական գերբը: Նույն օրերին հավաքեցին Ղարաբաղի հայության որսորդական հրացանները: Զուգահեռաբար այդ օրերի Գորբաչովի մերձավոր օգնական Աղամբեկյանը միջազգային մամուլի միջոցով հայտարարեց, թե վերակառուցումը լուծելու է նաև Նախիջևանի ու Ղարաբաղի հարցը: Օ-

գոստոսին Շամխորի շրջկոմի քարտուղարը տասնյակ գեներալներ ու երկու մարշալ տված Չարդախլու հայկական գյուղից պահանջեց 500 հա հող տալ հարևան ադրբեջանական գյուղին: Առաջացավ հայտնի կոնֆլիկտը, ուր առաջին անգամ երևաց կենտրոնի խառնակիչ ձեռքը: «Իզվեստիայի» խմբագիրը չհավատաց Չարդախլու գործուղած իր աշխատակցին, անձամբ մեկնեց Բաքու և Շամխոր, առանց միջադեպի վայրը ներկայանալու վերադարձավ Մոսկվա և աշխատանքից ազատեց իր աշխատակցին: Վերջինիս հաջողվեց «Սելսկայա ժիզնում» տպագրել կոնֆլիկտի մասին իր հաղորդումը (1987, 24 դեկտեմբերի):

Կրեմլի պարագլուխների համար երկնքից ընկած մանանայի արժեք ստացավ Ղարաբաղյան շարժումը: Գորբաչովյան ճոճռան ֆրազոլոգիայով խաբված մի երկու ղարաբաղցի՝ անասնապահ, տրակտորիստ, այգեգործ, իրենց յոթանասունամյա ցավերը ներկայացրին Կրեմլին: Կրեմլը, որ իր դռները հեշտությամբ չէր բացում նույնիսկ հանրապետությունների ղեկավար պաշտոնատարների առաջ, անմիջապես ներս ձգեց այդ գյուղացիներին, հուսադրեց, թևավորեց նրանց: Մի ամսվա մեջ Կրեմլը ընդունեց ղարաբաղյան երեք պատվիրակություն, «կարմիր հույսերով» խաբեց նրանց՝ այդ ձևով հարկադրելով, որ ղարաբաղցին դուրս գա հրապարակ: Արդյունքը փետրվարի 20-ի պատմական ակտն էր, որի պատասխանը Գորբաչովը շպրտեց հայերի չորրորդ պատվիրակության երեսին. «Դուք իմ թիկունքին դանակ խրեցիք»:

1921 թվականից ղարաբաղցին իր ցավը անընդմեջ լացել է բողոքագրերի ու հանրաքվեների միջոցով, որով Կրեմլի արխիվներում կուտակվել է հսկայական փաստաթուղթ: Կրեմլը ղարաբաղցուն հարկադրեց, որ դուրս գա հրապարակ:

Ղարաբաղյան շարժմանը զուգահեռ Գորբաչովը շարժման մեջ դրեց ամենակուլ պետական մեխանիզմը: Անմիջապես էմիսարներ ուղարկեց Հայաստան ու Ադրբեջան, որոնք ավելի բորբոքեցին առճակատումը՝ հասցնելով այն սումգայիթյան ցեղասպանության: Հայաստան գործուղված էմիսարներ Լուկիանովն ու Դոլգիխը այն օրերին Հայաստանի կոմկուսի ղեկավարությանը պատին սեղմած պահանջեցին ընդունել, թե հայ ժողովուրդը էքստրեմիստ է, նրա պահանջը՝ ագրեսիա: Ադրբեջան գործուղված էմիսարներ Ռագումովսկին, Դեմիչևը, Կատուսևը և ուրիշներ լեգալացրին յոթանասուն տարի իշխանության գլուխ կանգնած պանթուրքական ընդհատակը և համատեղ գործակցությամբ Անդրկովկասի ողջ տարածքից Սումգայիթ հասցրին ադրբեջանական ժողովրդի տականքին, նախօրոք պլանավորված ծրագրով իրականացրին 18 000 հայության ջարդն ու տեղահանությունը երևի

նրանց այն «մեղքի» համար, որ իրենք են կառուցել այդ քաղաքը այն ժամանակ դեռևս քոչվորական կյանքով ապրող ադրբեջանցիների համար:

Կրեմլյան էմիսարների ձեռքով ամեն ինչ նախապատրաստելուց հետո Գորբաչովը անձամբ տվեց ջարդի հրահանգը «անկանխատեսելի հետևանքներ» կանխատեսնող իր հայտնի նամակով, իսկ քաղաքում կանգնած զորքին վերապահեց լուռ ականատեսի դեր: Նա սուտ է ասում, թե զորքը երեք ժամով ուշացել է: Զորքը ջարդերի երեք օրն էլ կանգնած է եղել քաղաքում, և ինչպես պարզվեց արցախյան վերջին իրադարձություններից, զորքը կանգնած է եղել նրա համար, որ հայերի դիմադրության դեպքում միանա ջարդարարներին:

«Ղարաբա՞ղ եք ուզում, ի՞նչ եք մտածում Բաքվի 230 000 հայերի ճակատագրի մասին» դիրեկտիվով Գորբաչովը հայերից մաքրեց Բաքուն և Ադրբեջանի հայաշատ շրջանները, այդ թվում Ղարաբաղի մեծության հայկական մի տարածք ևս՝ պատմական Գարդմանը (Շամխորի, Դաշքեսանի, Խանլարի շրջանները): Կշեռքի թաթերը հավասարեցնելու պատրանք ստեղծելու համար Գորբաչովը զորքի միջոցով տեղափոխեց նաև Հայաստանաբնակ ադրբեջանցիներին: Մի կողմից գալիս էին տնային հագուստներով, ոտաբոբիկ ու ջարդված զանգվածներ, մյուս կողմից տեղափոխում էին՝ իրենց հետ տանելով սեփական հավերի ջրամանն անգամ:

Այս ամենի հեղինակն ու կազմակերպիչը Գորբաչովն է: Դարձյա՞լ ապացույց: Սումգայիթյան եղեռնի դատական կոմեդիան և նրան հաջորդած բոլոր իրադարձությունները, ընդհուպ մինչև պետականորեն Ադրբեջանին զինելը ժամանակակից զենքով ու բանակը նրան տրամադրելը, իսկ Ղարաբաղի հայությանը՝ ջարդ, թալան, ու դեպորտացիա՝ զենք ու գրոհայիններ հայտնաբերելու պատրվակով:

Մարդկության դեմ կատարած հանցագործությունների համար Գորբաչովն ու նրա շրջապատը պետք է կանգնեն միջազգային դատարանի առաջ և պատասխան տան: Պետք է կանխել օրավուր ահագնացող չարիքը և մարդկությանը փրկել ավերումի շղթայական ռեակցիայից: Երբ գործողության մեջ են դրվում ջարդն ու ոչնչացումը, աշխարհը չի կարող փրկվել անզոր ժողովուրդների կործանումով: Մարդկությունը չպետք է բավարարվի կործանվողների չեզոք ականատեսի դերով:

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻՆ*

Երբ լրատվամիջոցները սկսեցին քննարկել «Դարի պայմանագիրը», չկարողացա չգրել այս նամակը՝ որպես երեկվա ու վաղվա միասնական պետության քաղաքացի: Բայց տեսնելով, որ ռուսական քաղաքական էլիտան հաղթական կեցվածքով զբաղված է Ռուսաստանը և ազգերի ռուսական համագործակցությունը քանդելով ու թալանելով, ավելորդ համարեցի հրապարակ հանել այն: Այժմ, երբ Ռուսաստանն արդեն փորձում է վերականգնել իրեն, չի կարելի լռել և թույլ տալ, որ մեր ժողովուրդների իրավունքը դարձնեն ամերիկյան «ազգային շահերի» առարկա, համարեն միայն մի ժողովրդի սեփականություն, որի ներդրումը այդ սեփականությունն ստեղծելու մեջ այնքանով է միայն, որքանով որ ինքն էլ է այդ տարածքում ապրել:

Մեծարգո՛ խորհրդարանականներ:

Մեզ հայտնի է ձեր պետական այրերի հակասական, մեկը մյուսի հետ չհամաձայնեցված կեցվածքը «Դարի պայմանագրի» նկատմամբ: Բայց առավել ցավալին այն է, որ այդ հակասական դիրքորոշման մեջ մոռացվում է մի կարևոր հանգամանք. Ռուսաստանը ոչ միայն իրավունքներ ունի երկրագնդի մեկ վեցերորդ մասում, այլև պարտք ու պարտավորություններ այդ լայնածավալ աշխարհատարածքում ապրող բոլոր ժողովուրդների նկատմամբ, անկախ այդ ժողովուրդների թվաքանակից և ուժից, ու պարտավոր է հարգել ու պաշտպանել նրանց ազգային շահերը, մինչև որ նրանք կարողանան կանգնել սեփական ոտքերի վրա:

Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Բաքվի և նրա հաստատությունների ազգային սեփականատիրական պատկանելությանը, որը Ռուսաստանի պետական այրերը մի հանցավոր թեթևությամբ դարձնում են միայն ադրբեջանական սեփականություն: Ինչքան էլ այսօր Արևմուտքը փորձում է ոտնատակ տալ պատմությունը՝ ելնելով աշխարհը տնտեսապես նվաճելու իր նկրտումներից, ինչքան էլ պատմությունը ձեռնտու չէ նրանց Անդրկովկասն ու Միջին Ասիան իրենց «ազգային շահերի» օբյեկտ դարձնելու տեսակետից, այնուամենայնիվ, Արևելքն իր պատմության շարունակությունն է, և հնարավոր չէ ցատկել այդ չավարտված պատմության վրայով:

* Առաջին անգամ տպագրվել է «10-րդ նահանգ» շաբաթաթերթում, 18. 03. 2000 թ.:

Սակայն անցյալը հանգիստ թողնելով, թեև սկսած այն հեռավոր ժամանակներից, երբ հնդեվրոպական մայր ժողովրդից տրոհվեցին հայերը, Արևելյան Անդրկովկասը, որ քաղաքական կեղծիքով այսօր կոչվում է Ադրբեջան, եղել է հայության հայրենիք, և հայերը անընդմեջ առկա են եղել Բաքվում, թեև պատմական բոլոր վկայությունները միաբերան հաստատում են, որ Բաքուն «ադրբեջանցի» կոչվող անվան հետ կապվեց միայն վերջերս, սկսենք 19-րդ դարից:

Երբ 1807 թ. Ռուսաստանը երկրորդ անգամ գրավեց Բաքուն, այն ուներ ընդամենը 500 ծուխ ազգաբնակչություն, որից 70 ծուխը հայեր էին, մեծամասնությունը՝ մահմեդական ժողովուրդներից, բայց ոչ երբեք ադրբեջանցիներից կազմված: Երկու տասնամյակ հետո Բաքվի ազգաբնակչությունը համարյա եռապատկվեց շրջակա գավառներից տեղափոխված բնակիչների հաշվին, որոնց մեջ էին նաև դեռևս Նադիր շահի կողմից Մուղանի դաշտ տեղափոխված թուրքալեզու այն ցեղերը, որոնց հիմքի վրա ձևավորվեցին այսօրվա ադրբեջանցիները: Այնպես որ, եթե հաշվենք նաև Պետրոս Առաջինի Կասպիական արշավանքը, ռուսները հարյուր տարով ավելի շուտ են ոտք դրել Բաքվում, քան ադրբեջանցիները: (Տե՛ս «Օբոզրենիե ռուսսկոյե վլադենիե զա Կովկազոմ», մաս 4, 1836 թ., էջ 39-40):

Բաքուն այլ հարթության վրա տեղափոխվեց Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո: Սկզբունքորեն որևէ նշանակություն չունի, թե ինչպիսի որակումով է ներկայացվում շուրջ 200-ամյա այդ տիրապետությունը՝ կայսերապետակա՞ն, գաղութատիրակա՞ն, թե՞ գերինտերնացիոնալ: Իրականությունն այն է, որ Բաքուն համաշխարհային հնչեղության քաղաք դարձավ հայերի և ռուսների տևական ջանքերի շնորհիվ: Ադրբեջանցիները չեն կարող մատնացույց անել իրար վրա դրված 2 քար, որևէ արհեստանոց, էլ չենք խոսում արդյունաբերական լուրջ ձեռնարկությունների մասին, որ իրենց ձեռքի կամ ուղեղի գործը լինի: Իսկ այսօր, բախտի հեգնանքով, Բաքվի հարստությունը միջազգային շուկա է հանվում որպես զուտ ադրբեջանական սեփականություն: Դա պատմական իրականության հանցավոր անտեսման հետևանք է: Բաքուն հայերի, ռուսների և ադրբեջանցիների համատեղ սեփականությունն է՝ դրանից բխող իրավաբանական բոլոր հետևանքներով:

Մեզ համար անհասկանալի է մնում, թե ինչպես է Ռուսաստանի ներկա ղեկավարությունը աղքատ ազգականի պես Բաքվի նավթային

հարստության 10 տոկոսի պահանջ ներկայացնում այն դեպքում, երբ այդ հարստության մեկ երրորդը պատկանում է ռուս ժողովրդին, հաշվի չառնելով նաև այն հանգամանքը, որ մարդակերությամբ ուղեկցված գենոցիդով Բաքվի շուրջ կես միլիոնանոց հայերից բռնազավթված անձնական ունեցվածքից մինչև ազգային հարստությունները հանգիստ մարսում են ջարդարարները: Խրախուսված անպատժելիությունից՝ այսօր էլ Բաքվի ռուսներին են հարկադրում բռնել դեպորտացիայի ուղին:

Մենք բողոքում ենք ռուսական իշխանությունների որդեգրած այդ քաղաքականության դեմ, նախ՝ որպես հանիրավի անտեսված, գենոցիդի զոհ դարձած և դրա հետևանքով իր սեփականությունից զրկված կողմ, ապա նաև Բաքվի հարցում ռուս ժողովրդի վաստակած սեփականատիրական իրավունքը ոտնատակ տալու համար: Մի մոռացեք, որ երկու դար եղել ենք միասնական պետության քաղաքացիներ: Մենք պահանջում ենք և իրավունք ունենք պահանջելու, որ Բաքվի նավթի շուրջ տարվող ամեն մի բանակցության հիմքում դրվի նրա եռակողմ պատկանելության հարցը՝ այն հաշվով, որ յուրաքանչյուր կողմ ունենա եկամտի իր վաստակած մասնաբաժինը: Այդ հարստության հայկական մասնաբաժնի օրինական ժառանգորդը ԼՂՀ-ն է, որովհետև, եթե նույնիսկ անտեսվի նախահեղափոխական Բաքվի նավթարդյունաբերության մեջ հայերի կատարած ներդրումը, որ ընդհանուրի կեսից ավելի է եղել, չի կարելի հաշվի չառնել, որ զինվորական զորակոչի խստությամբ մոբիլիզացված ղարաբաղցի երիտասարդների ուժերով իրականացավ Բաքվի հետպատերազմյան վերակառուցումը: Բաքվից հասնող իր վաստակած մասնաբաժնով ԼՂՀ-ն պետք է իր հարկի տակ հավաքի ադրբեջանական ագրեսիայի զոհ, աշխարհով մեկ ցրված գավակներին: Իսկ այդ գործում մեծ տերություն Ռուսաստանը պատմականորեն պարտավորված է սատար կանգնելու արդարության և իրավունքի վերականգնմանը:

Մենք բողոքում ենք և պահանջում...

ԱՐՑԱԽՆ Է ԼՈՒԾՈՒՄ ԻՐ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ

ՏԱԳՆԱՊԻ ԿԱՆՉ ԱՐՑԱԽԻ ՊԱՆԴՈՒԽՏ ԶԱՎԱԿՆԵՐԻՆ

Հարազատ հայրենական օջախը կենաց ու մահու պայքարի մեջ է ադրբեջանական մարդակեր ոհմակների դեմ:

Ադրբեջանական ստրկացնող լծից սահմանադրական ճանապարհով ու քաղաքակիրթ միջոցներով ազատագրվելու՝ արցախցիների ջանքերին կայսերապետությունը պատասխանեց իր բնավորությանը հարազատ ձևով: Կրեմլյան էմիսարներն ու նրանց գործակալները Անդրկովկասի ողջ տարածքից հավաքագրեցին ադրբեջանական ժողովրդի տականքին, նրանց ձեռքով կազմակերպեցին մասսայական ջարդեր ու գաղթական դարձրեցին ավելի քան 700 հազար հայերի՝ սկսած Բաքվից մինչև Ղազախ, Ժդանովից մինչև Նուխի: Զուգահեռաբար Կրեմլը ձեռնամուխ եղավ զինվորական բիրտ ուժով Արցախական աշխարհի հայաթափման գործին. սադիստական հետևողականությամբ հայաթափեց Շամխորի, Դաշքեսանի, Խանլարի շրջանները, Շահումյանի, Նուշու, Հադրութի շրջաններից 24 գյուղ: Միայն Գետաշեն-Մարտունաշեն օպերացիայի ժամանակ, որը հայտնի է «Կոլցո» օպերացիա անունով, ռուսական բանակը գործողության մեջ է դրել 22- հազարանոց զորամիավորում՝ զինված ժամանակակից ոչնչացնող տեխնիկայով: Այսօր էլ այդ նույն բանակը գյուղական ինքնագործ ներկայացումների մակարդակով «զինաթափվում է» ադրբեջանական խուժանի ձեռքով՝ այդ ձևով տուն վերադարձող ռուսական զորքերի զենքի ու զինամթերքի հսկայական պաշարները դնելով ադրբեջանցիների տրամադրության տակ:

Այս ահավոր անհավասար պայմաններում մեր հարազատ հայրենակիցները ոչ միայն չեն հուսալքվում ու ծնկի չեն գալիս, այլև զինվել են մի նոր վճռականությամբ՝ պաշտպանելու անփոխարինելի Հայրենիքը, հայրական օջախներն ու իրենց ֆիզիկական գոյության իրավունքը: Արցախի բնակչությունը Հայրենիքը հռչակել է ինքնուրույն, անկախ հանրապետություն, անհավասար պատերազմական իրադրության պայմաններում ձևավորում է պետական կառուցվածքներ: Հանրապետության գործկոմի որոշմամբ արդեն ստեղծվել է Ինքնապաշտպանության խորհուրդ, որի դրոշի տակ հավաքվում են մեր լավագույն զավակները: «Այսօր խնդիրն այն է, - ազդարարում է ԼՂՀ-ի գործկոմը,- որ բոլորը, ովքեր կարող են զենք վերցնել, պետք է կանգնեն Հայրենիքի պաշտ-

պանության դրոշի տակ: ԼՂՀ-ի գործկոմի անունից կոչ ենք անում, որպեսզի 18-ից 40 տարեկան արցախցիները զինվորագրվեն ինքնապաշտպանության բանակին»:

Ինչպես տեսնում եք, ազատագրական պայքարի վերջին չորս տարիների փորձից ելնելով, արցախաբնակ մեր հարազատները հույսը կտրել են դրսից, դրսի «սուտ ու պատիր խոստումներից»... և հենվում են սեփական փոքրաթիվ խմբերի վրա, այն էլ այն դեպքում, երբ բազմիցս զինաթափվել են ռուսական բանակի ձեռքով:

Հազարամյակների փորձությունների դիմացած, ամեն կարգի լենկթեմուրների ավերածություններից Հայրենիքը անխաթար պահած Արցախական աշխարհը այսօր գտնվում է օրհասական վիճակի մեջ: Ինչպես միշտ, այսօր էլ այս մեծ ողբերգության դիմաց խուլ, համր ու կույր են դարձել աշխարհի հզոր տիրակալները՝ թքելով իրենց իսկ ձեռքով ձևակերպված մարդու և ժողովուրդների գոյության իրավունքին վերաբերող հռչակագիրների ճակատին: Լինել թե չլինելու այս ճակատագրական ժամին ուրիշ էլ ո՞վ պետք է կանգնի Արցախի փրկության դրոշի տակ, եթե ոչ առաջին հերթին մենք՝ կայսրության բոլոր հորիզոնականներով ցրված մեկուկես միլիոնի հասնող արցախցիներս:

Որտե՞ղ ենք մենք՝ տարբեր ժամանակներում, տարբեր պատճառներով պանդխտության ճանապարհները ոտնատակ տված, Պետերբուրգից Վլադիվոստոկ, Սամարղանդից Տյումեն, Հայաստանից Մոսկվա ապաստան ու մի կտոր հաց ճարած արցախցիներս: Մի՞թե մենք վերջնականապես ու անդառնալիորեն մեռել ենք մեր հարազատ ժողովրդի, հայրենիքի, հայրենական օջախների, մեր ծնողների համար: Ովքե՞ր պետք է թուրքական յաթաղանից փրկեն մեր այն զառամյալ ծնողներին, որոնց աշխարհ բերած զավակներս երկրի տարբեր անկյուններում ապահով կյանք ենք վարում, եթե ոչ՝ մենք:

«Արցախ» հայրենակցական միությունն այս օրհասական պահին դիմում է ներքին սփյուռքի բոլոր արցախցիներին՝ մեզ ծնող Հայրենիքի գլխին մահացու վտանգ է կախվել, ոտքի ելեք ու կանգնեցեք հայրենիքի փրկության դրոշի տակ: Պատմությունը մեր առաջ հրամայական պահանջ է դրել. զենք կրելու ընդունակ բոլոր արցախցիներս անհապաղ պետք է վերադառնանք Հայրենիք. մնացած մեծագույն մասը պետք է կազմակերպված թիկունք դառնա և Հայրենիքի ազատամարտիկների համար ապահովի նրանց ամեն, ամեն ինչով:

Արթնացե՛ք անտարբերության թմբիրից, ի զեն և ի գործ, Արցախի պանդո՛ւխտ զավակներ:

«Արցախ» հայրենակցական միության նախագահության անունից

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ *

Հարազատնե՛ր,

Արցախյան հերոսամարտի վերջին դրվագները մի կրկին անգամ հաստատեցին հանրահայտ խոսքի ճշմարտությունը. «Ինքնապաշտպանությունը զինված ապստամբության մահն է»:

Մայր հայրենիքի հետ մի ավտոխճուղով միանալը, ինչքան էլ կենսական ու կարևոր, դեռևս Արցախի վերջնական փրկությունը չէ. այդ փրկությունը սկսվում է Արաքսի ափերից: Ինչքա՞ն պետք է մեր Արաժանք

---

* Շուշի-Լաչին կենսական ճանապարհը բացելուց մի երկու օր հետո, երեկոյան ուշ ժամին, տուն է վերադառնում այդ գործողությունների մասնակից որդիս, երեք թուրքական դրոշ փռում ոտքերիս տակ՝ ասելով. «Ամբողջ կյանքում պայքարել ես այս օրվա համար, երազանքդ կատարվել է, կործանվել է բանտը»: Եվ ցույց է տալիս Շուշու բանտի ներքին բանալիներից մեկը՝ որպես «բանտի» կործանման ապացույց:

Մի օր հետո իր երեք ազատամարտիկ ընկերոջ հետ ինձ էլ տանում են նորաբաց ճանապարհով: Ավելորդ է ասել, որ Շուշիում առաջինը հանդիպեցինք մեր օրերի օտյանական «որ մենք հերոս»-ներից մեկին, որը պարծանքով հայտնեց, թե Ղազանչեցոց եկեղեցում մորթած մատաղացու գառան վզից ինքն է բռնած եղել: Երկրորդը հանդիպեց լրագրող Ղարիբ Հայրապետյանը, որն ինձ պես խանդավառված չի կարողացել հանգիստ նստել տանը:

Ստեփանակերտ հասնելով՝ անմիջապես բարձրացանք ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանի մոտ: (Փակագծերում ասենք, որ դեռևս չէր ձևավորվել հետխորհրդային բյուրոկրատիան թիկնապահների ու դռնապահների իր ստվարածավալ բանակով: Ելումուտը ազատ էր, փոխհաղորդակցումը՝ անկաշկանդ ու տնավարի): Ծանոթանալով վերոգրյալ երկտողին՝ պարոն Պետրոսյանը հայտնեց, որ իրենք էլ են այդ ուղղությամբ մտածում:

Հաջորդ օրը, մի ոհմակի գլուխ անցած, Ստեփանակերտում վայրէջք կատարեց Բ. Արարքցյանը Ղարաբաղի ղեկավարությանը փոխելու առաջադրանքով. (Ինչպե՞ս կարելի էր թույլ տալ, որ մարդիկ ապրեին իրենց աննախադեպ հաղթանակի բերկրանքը): Ճիշտ է, հրավիրված Գերագույն խորհրդի եռօրյա հակամարտությունների արդյունքում նրանք չկարողացան իրենց ցանկացած հաջողությանը հասնել, բայց բանդուքարափ արեցին ֆիդայական ջոկատների միասնությունն ու միակամությունը: Եթե այդ օրերի խոսակցության առանցքը Գետաշենի ազատագրումն էր, ապա դրան հաջորդեց Շահումյանի ու Մարտակերտի ողբերգությունը:

Ծանր, շատ ծանր էր Ղարաբաղին հասցրած նրանց հարվածը, բայց, այնուամենայնիվ, **իրենք** պարտվեցին իրենց իսկ ստեղծած այդ օրհասական օրերին անգամ: Նրանց չհաջողվեց Գ. Պետրոսյանին ու նրան հաջորդած ղեկավարությանը պարտադրել, որ Ղարաբաղին աննպաստ որևէ փաստաթղթի տակ ստորագրեն: Փառք ու պատիվ նման հայորդիներին:

բնակավայրից, որ ցարը դարձրել էր Կարյուգինո, թուրքը՝ Ֆիզուլի, ավերածություններ ափռվեն Հադրութի ու Մարտունու բնակավայրերի վրա: Չէ՞ որ մեր, միայն մեր ձեռքով է կառուցվել Մարտունի-Արաժանք-Խորադիզ մայրուղին: Եվ Խորադիզում աշխատանքները վերջնակետին հասցնելու ժամանակ ասած թե չասած մի արտահայտության համար գիշեցի եփրեմ Գրիգորյանին տասը տարով աքսորեցին Սիբիր:

Ինչքա՞ն պետք է մեր Բայլականը մեզ համար մնա Օրան դալա: Չէ՞ որ մեր հողում, մեր ձեռքով ստեղծվեց Ժդանովի շրջան, ուր ոչ միայն հայությունը գոյատևեց մինչև 88 թվականը, այլև շրջանի գյուղատնտեսական աշխատանքների ծանրագույն բաժինն ընկած էր մեր աշխատավորության ու սովորողների ուսերին՝ որպես կոռային պարտականություն: Ի՞նչ անենք, որ շրջանը Արցախի հյուսիսային շրջանների պես (Շահումյան, Խանլար, Դաշքեսան, Շամխոր), դուրս էին թողել մարզի վարչական տարածքից: Այդ ո՞ր նվաճողն է նվաճված երկրի վարչական բաժանումների ժամանակ հարգել ազգային տարածքի ամբողջականությունը:

Պետրոս ցարից խաբված արցախցիներիս համար Նադիր Շահի ու Մելիք Եգանի մահվանից հետո եկած ժամանակները ոչ մի անգամ մեր օգտին չեն գործել այնպես, ինչպես գործում է այսօր: Պատմությունը արցախցիներիս չի ների, եթե այս բարեպատեհ հնարավորությունը ձեռքից բաց թողնենք:

Մեր վերջնական փրկության սկիզբն Արաքսի ափն է: Պետք է այնտեղ հասնենք մեր իսկ կառուցած ճանապարհներով՝ կանգնելու համար արցախական աշխարհի ազգային ու բնական սահմաններից գոնե մի կետում:

Արցախի վերջնական ազատագրման հույսով ապրող Արցախցի

ՔԱՐԻՆՏԱԿ՝ «ԱՐՅՈՒՆՈՏ ՁՈՐ» ԹՈՒՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ*

Լրացավ Ղարաբաղյան ազատամարտի հերոսական էջերից մեկի՝ Քարինտակի ճակատամարտի երկրորդ տարին, մի ճակատամարտ, որտեղ, մասնակիցներից մեկի դիպուկ բնորոշմամբ, Ադրբեջանը պարտվեց: Ընդամենը 180 տնտեսություն ունեցող այդ փոքրիկ գյուղի համար մղված ճակատամարտում Ղարաբաղը հաղթեց Ադրբեջանին՝ չնայած դեռ առջևում էր դեպի վերջնական հաղթանակը ձգվող ուղին:

Քարինտակը Շուշի-Գորիս-Քարվաճառ եռանկյունու հարավարևելյան ծայրամասն է, մի մասնիկը Արցախ աշխարհի այն տարածքի, որը դարասկզբին վաստակել էր Ղարաբաղի Զեյթուն անվանումը: Ռազմավարական խիստ կարևոր նշանակության մի տարածք, որի էթնիկական յուրացման սկիզբը դրվել է դեռևս պարսկական տիրակալության ժամանակներից՝ Արցախի և Սյունիքի արանքը սեպ խրելու հեռահար նկատառումով: Իրենց զավթողական նկրտումներն իրականացնելու համար ազերի թուրքերը որդեգրեցին այդ քաղաքականությունը և դարասկզբից ձեռնամուխ եղան հարցի վերջնական լուծմանը՝ հայերի ֆիզիկական ոչնչացման ճանապարհով: Ե՛վ 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, և՛ 1918-21 թթ. պատերազմական տարիներին ազերի թուրքերը, ապահովելով նախ ցարիզմի, ապա թուրքական ու անգլիական զավթիչների, հետո բոլշևիկների գործուն աջակցությունը, հիմնականում հասան իրենց նպատակին՝ սկսած Շուշի մայրաքաղաքի ավերումից մինչև Մինքենդի ոչնչացումը: Անհավասար ու արյունածոր այդ գոտեմարտում փրկվել կարողացան միայն երկու հենակետեր՝ Բերդաձորն ու Քարինտակը՝ շարունակելու համար հետագա գոյամարտը:

Ահա թե ինչու ղարաբաղյան այս վերջին ազատամարտի հենց սկզբից, դեռևս պայքարի «պառլամենտական» փուլում, համայն հայության կողմից խորապես ընկալվեց Բերդաձորի ու Քարինտակի ռազմավարական կարևոր նշանակությունը և դարձավ ընդհանուր մտահոգության առարկա: Չէ՞ որ այդ երկու հենակետերի կորուստով Ղարաբաղը մայր հայրենիքից արհեստականորեն բաժանող 4 կմ պետք է ձգվեր մինչև 70

* Առաջին անգամ տպագրվել է «Երկիր» օրաթերթում, 1994 թ., 27 հունվարի:

կմ: Ազերիների ճնշումների ու հետապնդումների պատճառով հայրենի օջախները թողած ու Միությունով մեկ ցրված ղարաբաղցիներից առաջինը բերդաձորցիներն ու քարինտակցիներն էին, որ բացեցին հայրենի օջախներ հետդարձի արահետը և կանգնեցին Ազատամարտի առաջին շարքերում: Ազատամարտի նախնական միամիտ-ռոմանտիկական փուլում, երբ դրված էր Արցախի տնտեսական վերականգնման ու զարգացման խնդիրը, առաջինը Բերդաձորն ու Քարինտակն էին, որ դարձան հոգացության առարկա: Մեր խիզախ ազատամարտիկներն անհրաժեշտության բերումով առաջին վայրէջքը կատարեցին Բերդաձորում ու Քարինտակում:

Սական գորբաչովյան զորքերը հայաթափեցին նաև Բերդաձորը, և կանգուն մնաց միայն վերջին հենակետը՝ Քարինտակը: Բոլոր կողմերից շրջափակված, աշխարհից մեկուսացված Ղարաբաղում կրկնակի և ավելի դաժան շրջափակման մեջ հայտնված Քարինտակը մղելու էր իր վերջին հաղթական ճակատամարտը անարգ թշնամու դեմ:

Իսկ այդ ճակատամարտին նա նախապատրաստվել էր Ազատամարտի առաջին օրերից: Թուրքական դաժան շրջափակման և Շուշիից տեղացող գնդակոծությունների ու հրթիռակոծությունների տարափի տակ գյուղը կարողացավ 18 կմ-ոց կյանքի ու փրկության ճանապարհ բացել դեպի «մեծ աշխարհ», դեպի մոտակա հայկական գյուղերը, ինչն իրականացրեց գյուղին օգնության եկած ապարանցի տրակտորիստ Լյովան: «Արցախ» հայրենակցական միության գործուն աջակցությամբ Երևանից հայրենի օջախ վերադարձած Միշա Պետրոսյանը գյուղի նախկին ջրաղացի տեղում կանգնեցրեց երկհարկանի ջրաղաց, ստեղծեց հացաթխման փուռ՝ բավարար հիմքերի վրա դնելով բնակչության կենսապահովումը: Տարագիր քարինտակցիների, առանձնապես «Արցախ» հայրենակցականի ջանքերով ճիշտ ժամանակին գյուղ էին հասցվել նաև ինքնապաշտպանության զինական միջոցներ, այն օրերին ինչքան հնարավոր էր, երբ կապը միայն օդային էր, երբ գորբաչովյան զորքերը Ղարաբաղում խաղաղ բնակիչներ էին որսում ու վաճառում թուրք մարդակերներին, իսկ կենտրոնական լրատվական բոլոր միջոցները մոլեգին թափ էին հաղորդել հակահայկական, հակաղարաբաղյան քարոզչությանը: Այդ ընթացքում երևանաբնակ քարինտակցի-

ները կարողացել էին գյուղ հասցնել 14 հոգուց կազմված ազատամարտիկների մի ջոկատ՝ հնարավոր զինված ինքնապաշտպանության համար:

Հերոսական քարինտակցիները ճակատագրականորեն դատապարտված էին վերջին հաղթական ճակատամարտը տալու ազերի զավթիչներին, և այն չուշացավ:

Խորապես ճշմարիտ էր Պարույր Սևակը, երբ նման իրավիճակների համար բանաձևում էր.

Թե հրաշք չկա՝,
Կա միայն կարի՛ք,
Թե այնտեղ է լոկ սխրանքն սկսվում,
Ուր վերջանում է ամե՛ն մի հնար...

Գորբաչովյան զորքերով ու ծանր զինտեխնիկայով Գետաշենի ենթաշրջանը, Հադրութի շրջանի մեծ մասն ու Բերդաձորը հայաթափած Ադրբեջանը, հղփացած չվաստակած հաղթանակներով, ենթարկվեց փոքրիկ Քարինտակը սեփական ուժերով զավթելու փորձությանը: Շուշիի ժայռերի բարձրությունից թափած քարաբեկորների ու վառվող անվադողերի հեղեղումների, ինչպես նաև գնդակոծումների ու հրթիռակոծումների քառամյա հոգեբանական պատերազմից հետո թուրք զավթիչները 1992 թ. հունվարի 26-ի գիշերը շրջապատման երկաթյա օղակի մեջ առան գյուղը և առավոտյան ժամը 6.30-ին սկսեցին գրոհը: Ռազմական գործողություններն անձամբ ղեկավարում էր պաշտպանության նախարար Մեհտիևը: Այդ գիշեր գյուղի պաշտպանական դիրքերում էին միայն 60-70 ազատամարտիկ՝ ինքնապաշտպանության հրամանատար Վաղարշակ Առուշանյանի գլխավորությամբ: Գրոհն ուղեկցվում էր այնպիսի ահավոր գնդակոծությամբ, որ անհնար էր դարձել գյուղի մյուս պաշտպանների տեղաշարժը դեպի դիրքեր: Մի բուռ հայ քաջորդիներ թվաքանակով տասնապատիկ գերազանցող ու համեմատաբար լավ զինված թուրք ելուզակների դեմ շուրջ 12 ժամ տևող գոտեմարտում հաղթող դուրս եկան, և երեկոյան ժամը 7-ին ազերիները ստիպված էին մազապուրծ փախչել՝ մարտի դաշտում թողնելով 100-ից ավելի սպանված, բազմաթիվ վիրավորներ ու ռազմավար:

Քարինտակցիները «դատապարտված» էին հաղթանակի, և Քարին-

տակը հաղթեց Ադրբեջանին: Այդ հաղթանակի գոհասեղանին իրենց մատաղ կյանքը դրեցին խիզախ հայորդիներ և միացան անմահների զորաբանակին:

Վաղարշակ Առուշանյան, Այլոշա Վարդանյան, Հենրիխ Ամիրջանյան, Ալբերտ Աբաղյան, Միշա Հովհաննիսյան, Արշավիր Մարգարյան, Վոլոդյա Համբարձումյան, Կարո Առուշանյան. Կարոյի երևանցի ընկերները՝ Անուշավան Հարությունյան, Նորայր Մանասյան, ինչպես նաև շրջակա գյուղերից օգնության հասածներից այն յոթ կտրիճները, որոնց անունները մեկ առ մեկ հիշատակել չկարողանալու համար ներողություն ենք հայցում:

Քարինտակյան հաղթական հերոսամարտի առաջին և ճշմարիտ գնահատականը տվեց Ադրբեջանի կառավարությունը, երբ քննարկեց պարտության պատճառները և ճակատամարտը տանուլ տալու համար դատեց Մեհտիևին: Նրանք Քարինտակը որակեցին «արյունոտ ձոր» թուրքերի համար: Խորապես սպառիչ գնահատական:

Հունվարի 26-ի հերոսական հաղթանակից հետո քարինտակցի կտրիճները զենքը ցած չդրեցին. նրանք դարձան ակտիվ մասնակիցը ղարաբաղյան հետագա հերոսամարտերի՝ սկսած Շուշի-Լաչին տարածքի ազատագրումից, ուր անմահներին միացավ Աշոտ Գասպարյանը: Այսօր էլ քարինտակցիները երկու ջոկատով մասնակցում են հայրենի տարածքների վերջնական ազատագրման հերոսամարտին, և մի քանի օր առաջ Մարտակերտի պաշտպանության դիրքերում հաղթանակի գոհասեղանին բարձրացան Գառնիկ Առաքելյանը, Ջանիկ Առուշանյանը, Կարո Բաղդասարյանը:

Շարունակվում է ղարաբաղյան հերոսամարտը, և հայ կտրիճների շարքերում բացճակատ ու հպարտ քայլում են նաև քարինտակցի Ազատամարտիկները: Իսկ թե ինչպես են պատերազմական այս թոհ ու բոհի մեջ քարինտակցիները վերականգնում թուրքերի կողմից ավերված հայրենի գյուղը՝ առանձին խոսակցության նյութ է, առանձին գոյամարտ:

ՄԵՐ ԲԱՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ Է ՆՎԱՃՈՒՄԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ԱԶԱՏԱԳՐՈՒՄՈՎ*

Որ Ղարաբաղն իր Լեռնային ու Դաշտային արհեստական բաժանումով մի միասնական հայրենիք է, հայ ժողովրդի մի հատվածի հազարամյակների բնօրրանը, խոստովանել են անգամ բոլոր նվաճողները՝ հնագույն ժամանակներից մինչև բոլշևիկները: Անդրկովկասը նվաճած Նիկոլայ ցարը ներգաղթեցրած պարսկահայերին բնակեցրեց հայոց երկու մայրաքաղաքների՝ Երևանի ու Պարտավի արանքում՝ գործնականորեն հաստատելով այդ ամբողջ տարածքի հայկականությունը: Լենինը այդ իրողությունը խոստովանեց հայտնի այն քարտեզով, որ շրջանառության մեջ մտավ 1988 թվականին: Ուրիշ հարց է, որ բոլոր նվաճողներն էլ մեր ազգային իրավունքը վաճառքի են հանել իրենց պետական շահերից ելնելով, մի հանգամանք, որ այսօր էլ հավանական սպառնալիքի տեսքով կանգնած է մեր դիմաց:

Ցավով պետք է արձանագրել, որ այսօր, երբ ղարաբաղյան հիմնահարցը վերաճել է Հայ Դատի կիզակետի, երբ մեր ժողովրդի լավագույն զավակներն իրենց կյանքն են զոհում հայրենիքի պաշտպանության համար մղվող մարտերում, մեր պատմաքաղաքական միտքը պատշաճ ուշադրություն չի դարձնում Արևելյան Անդրկովկասում կատարված ու կատարվող տեղաշարժերին, հանդես չի գալիս իրական ճշմարտությունների վերհանմամբ. որից օգտվելով՝ մեր հակառակորդները մեզ աշխարհով մեկ ներկայացնում են որպես ուրիշի հայրենիքը նվաճող ագրեսոր: Մինչդեռ Արևելյան Անդրկովկասից սկսվեց հայ ժողովրդի՝ պետական մակարդակի բարձրացված ցեղասպանությունը՝ սկսած Պետրոս Առաջինի ժամանակներից:

Պատմական ճշմարտության վերհանումը ամենից վեր անհրաժեշտ է մեր հայրենիքի քաջամարտիկ պաշտպաններին՝ որպես նրանց պայքարի արդարացիությունը հաստատող գաղափարական զենք: Իսկ ո՞րն է պատմական ճշմարտությունը:

Լենկթեմուրյան ավերիչ արշավանքներից հետո Արևելյան Անդրկովկասի տափաստանային շրջանները, առանձնապես Քուռ-Արաքսի Մի-

* Առաջին անգամ տպագրվել է «Երկիր» օրաթերթում, 1994 թ., 22 ապրիլի:

ջագետքը, վերջնականապես վերածվեցին անմարդաբնակ անապատի: Ֆիզիկական ապահովության թելադրանքով դաշտային տարածքների բնակիչները քաշվեցին լեռնային ապահով շրջաններ, բայց դրանով նրանք չկորցրեցին իրենց իրավունքը դաշտային հողերի նկատմամբ: Ուշագրավ է, որ Պետրոս Առաջինին գրած առաջին նամակը ստորագրող մելիքների մեջ առաջինը Պարտավի մելիք Եսային է, որն արդեն նստում էր Գյուլիստան գյուղում՝ պահպանելով իր սեփականատիրական իրավունքը մելիքության ողջ տարածքի նկատմամբ, իսկ երկրորդը՝ Գանձակի մելիք Հովսեփը՝ սեփականատիրական նույն իրավունքով: Պարսկական տիրապետությունը Անդրկովկասում իրականացվում էր քաղաքական իշխանությամբ՝ առանց խախտելու ֆեոդալական սեփականատիրության իրավունքը: Այնպես որ, լեռնային շրջաններում ապաստանած հայերը, Շամխորից մինչև Գյուլիստան ու Դիզակ, և՛ պարսկական, և՛ ցարական տիրապետության ժամանակներում անարգել պահպանել էին և՛ Քուռի, և՛ Արաքսի մերձակա տարածքների նկատմամբ իրենց սեփականատիրական իրավունքը: Այդ տարածքներում հայերը ստեղծել էին բարձր զարգացման հասած այգեգործություն ու շերամապահություն: Այդ տեղերը հայաթափելուց հետո անգամ, Ադրբեջանի կառավարության պարտադրանքով, մերձքուռյան թթենիները մինչև 1988 թ. մարզի աշխատավորներն էին օգտագործում շերամապահության կարիքները հոգալու համար:

Իսկ այդ տարածքների քոչվոր ցեղերը, որոնց Պետրոս Առաջինի Կասպիական արշավանքից հետո պարսկական իշխանությունները մտցրեցին Արաքսից մինչև Թիֆլիսի մատույցները՝ հայ-վրացական զինական ուժերը ջլատելու քաղաքական նկատառումով, իրենց հոտերի հետ շրջում էին հայերի կողմից չմշակվող տարածքներում՝ առանց որոշակի սեփականատիրական իրավունքի, առանց որոշակի բնակավայրի: Երբ իշխանությունը անցավ բոլշևիկներին, ադրբեջանական նորաթուխ կառավարությունը ձեռնամուխ եղավ ադրբեջանական «սրբազան հայրենիք» ստեղծելու գործին:

Մի կրկին անգամ վկայակոչենք փաստեր, որոնց մասին արդեն խոսվել է նախորդ հոդվածներում: Դեռևս 1918թ. դեպի Անդրկովկաս թուրքական արշավանքի ժամանակ Քուռի ձախ ափին գտնվող Արեշի գավառի 18 հայկական գյուղեր, ուր 1916թ. ցարական վիճակագրության համաձայն ապրում էր 19 հազարից ավելի հայություն, ավերեցին, իսկ բնակիչներին դարձրին փախստականներ: Այնուամենայնիվ, նույն տարածքում գտնվող գյուղերի մի մասը կարողացել էր գոյատևել մինչև դրանց տեղում Մինգեչաուրի ջրամբարի կառուցումը: Հայկական հողերում, հայկական գյուղերի ոչնչացմամբ և հայկական աշխատուժով ստեղծվեց Մինգեչաուրը և դարձավ ադրբեջանական «սրբազան հայրենիք»: Դրանով իսկ Ադրբեջանի կառավարությունը Մինգեչաուրի, Եվլախի, Պարտավի ու Գանձակի միջև գտնվող հայկական հսկայական հողատարածքը զրկեց հայկական էթնիկական տարածք լինելուց՝ այնպես էլ չկարողանալով այն բնակեցնել ադրբեջանցիներով՝ ադրբեջանական էթնիկական տարածք դարձնելու համար:

Որպես Լենին-Աթաթուրք գործարքի տրամաբանական ավարտ՝ Կավբյուրոն 1921թ. հուլիսի 5-ի որոշումով Արևելյան Անդրկովկասի հայկական մարզերը միացրեց նորաթուխ Ադրբեջանին՝ հայությանը տալով ինքնավարության իրավունք: Կավբյուրոյի որոշման 2-րդ կետով հայկական ինքնավարության սահմանների որոշումը վերապահվեց Ադրբեջանի ղեկավարությանը: Նրանք էլ հայկական տարածքների մի փոքրիկ հատվածում, Ղարաբաղի լեռնային շրջանների գյուղերի մոտով, սահմանագծեցին Ինքնավար մարզ՝ մարզի սահմաններից դուրս թողնելով ոչ միայն Քուռ-Արաքսի Միջագետքի հայկական հողատարածքները, այլև Շահումյանի, Խանլարի, Դաշքեսանի, Շամխորի հայկական շրջաններն ու գյուղերը: Ստեղծվեց Ադրբեջանի պետական քաղաքականության համար բնորոշ, բայց իրականում մի տարօրինակ վիճակ. մարզի և հայկական մյուս շրջանների վարելահողերի մեծ մասը հայտնվեց սահմաններից դուրս՝ չնայած դրանք դեռ շարունակում էին մշակել հայերը: Այդ դրությունը տևեց մինչև 1949թ., երբ մի կարգադրությամբ այդ հողերը խլվեցին հայերից: Այսպես, Պարտավի մոտ գտնվող Ղարբանը, որ պատկանում էր Կարաչինարին, կամ Գերանը, որ պատկանում էր Գետաշենին, մի կարգադրությամբ դարձան ադրբեջանական:

Նույն հեռահար ռազմավարությամբ, ինչպես արդեն ասվել է, Ադրբեջանի կառավարությունը յուրացրեց արաքսամերձ տարածքները:

Այսպիսով, պատմական մի կարճ ժամանակահատվածում Ադրբե-

ջանի կառավարությունը Ինքնավար մարզը և հարակից հայկական շրջանները խցկեց լեռների մեջ, իսկ 50-ական թվականներից գործողության մեջ դրեց ադրբեջանցիների կազմակերպված ներհոսքը մարզ ու հարակից շրջաններ: Մինչդեռ նույն ժամանակ աշխատանք չլինելու պատճառով հայերը ստիպված էին արտագաղթել Միության տարբեր վայրեր: Այդ է պատճառը, որ մարզը, ստեղծվելուց մինչև վերացումը, հայ բնակչության աճ չգրանցեց, և մինչև 1988թ. տարբեր ժամանակներում արտագաղթած 1,5 միլիոն ղարաբաղցի կա Ղարաբաղի սահմաններից դուրս:

Եվ եթե 1988թ. Ղարաբաղի բնակչությունը ոտքի է ելել իր հայրենիքը վերջնական կործանումից փրկելու համար, ապա այսօր պետք է լրջորեն մտածել կորցրածը ետ բերելու մասին:

Պետք է վճռական շրջադարձ կատարել դեպի ազգային շահերը և անխարդախ նվիրվածությամբ համայն հայության ներուժը ի սպաս դնել Ղարաբաղը հնարավոր ամբողջությամբ ազատագրելու գործին: Ղարաբաղի լիակատար ազատագրումով մենք կլուծենք այս աշխարհատարածքում մեր ժողովրդի գոյատևման ամենակենսական հարցերից շատերը. ազատագրված Ղարաբաղը իր ժողովրդին ոչ միայն կապահովի հացով, այլև ինչ-որ չափով հացի ավելցուկ կունենա: Էլ չենք խոսում այն բազում-բազում բարիքների մասին, որ կպարգևի Ղարաբաղը:

Սեփական հայրենիքում հայ ժողովրդի վաղվա գոյատևման հնարավորության հրամայականը թելադրում է՝ տեր կանգնել մեր արդար իրավունքին, մեր հայրենիքին ու մեր հացին:

Աշխարհը ոչինչ չարեց, երբ Սումգայիթից սկսած մեր ժողովրդին բնավեր էին դարձնում Ադրբեջանի բոլոր անկյուններում: Աշխարհն իր հունից դուրս չեկավ, երբ մեր քաջորդիները ազատագրեցին Շուշին, Լաչինը և այլ տարածքներ: Աշխարհը ըմբռնումով կընդունի նաև Ղարաբաղի լիակատար ազատագրման փաստը և այն չի որակի ագրեսիա, քանի որ 20-րդ դարի մեծագույն ագրեսիաներից մեկը հենց Ադրբեջանի հանրապետության գոյության փաստն է: Աշխարհը ըմբռնումով կընդունի, որ հազիվ 3-4 տասնամյակ առաջ նստակեցության անցած թափառական քոչվորները իրավունք չունեն տեր դառնալու ուրիշ ժողովուրդների հազարամյակների հայրենիքին: Մնում է աշխարհին հասցնել պատմական ճշմարտությունը:

Այսօրվա համաշխարհային թոհուբոհը և մեզ պարտադրված պատերազմը, որից չկարողացանք խուսափել, բնական իրավունք են տալիս մեզ՝ հարվածին հարվածով պատասխանելու, բռնազավթմանը՝ ազատագրումով: Չէ՞ որ Ղարաբաղը մեր բռնագավթված ինը տասնորդական հայրենիքի հատվածներից մեկն է, այսօրվա մնացորդաց կենսապահովման գրավականը՝ ընկած արյան ծովի մեջ: Մե՛նք պետք է փրկենք մեր հայրենիքը, ուրիշ ճշմարտություն չկա:

ՔԱՐԻՆՏԱԿՑԻՆԵՐԸ ՉՀԵՌԱՑԱՆ ԳՅՈՒՂԻՑ...*

Մեկ էլ 10 տարի առաջ Արցախը նորից ոտքի կանգնեց՝ շարունակելու 300 տարի առաջ սկսած իր Ազատամարտը՝ օտարի լուծը թոթափելու, սեփական հայրենիքում ազատ ու անկաշկանդ ապրելու համար: «Քաղաքակիրթ» աշխարհում քաղաքակիրթ բոլոր միջոցները սպառելուց հետո, Արցախն ընդունեց իրեն պարտադրված պատերազմը և դուրս եկավ հաղթանակած: Դա հայ ժողովրդի մեծագույն նվաճումներից մեկն է 20-րդ դարում, որի պայծառ էջերը միշտ էլ պետք է մնան սերունդների հիշողության մեջ: Այսօր հիշենք արցախյան հերոսամարտի դրվագներից մեկը, ազատամարտի մի պայծառ էջ, որն իր մեջ խտացնում է մեր հերոսական պայքարի ողջ էությունը: Խոսքը Քարինտակի հերոսամարտի մասին է:

Ինչպես եղավ, որ ընդամենը 700 բնակիչ ունեցող այդ փոքրիկ գյուղը փառավոր հաղթանակ տարավ մարտի դաշտում: Չէ՞ որ ուժերի հարաբերակցության, հակառակորդի զինվածության չափերի առումով նման հաղթանակը հավասարազոր էր հրաշքի: Ինչպե՞ս կատարվեց հրաշքը:

Ամենից առաջ շեշտենք, որ դա Ոգու հաղթանակն էր, անընկճելի այն Ոգու, որ սնունդ է առել հայրենի հող ու ջրից, անկոտրում դարձել շրջապատի լեռների պես:

* Առաջին անգամ տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, 1998 թ., 4 փետրվարի:

Հավատարիմ իրենց նախնիների ավանդներին՝ քարինտակցիները շարժման հենց սկզբից որոշեցին, որ գյուղից հեռացող չպետք է լինի, և մինչև վերջ հավատարիմ մնացին իրենց որոշմանը: Շուտով արցախյան շարժման գործուն մասնակից, երևանաբնակ քարինտակցի Միշա Պետրոսյանը տեսավ, որ օպերայի հրապարակում բռունցք բարձրացնելուց ավելի օգտակար ու կարևոր գործ կարող է կատարել հայրենի գյուղում, համագյուղացիների հետ, և չսխալվեց: 1989 թ. գարնանը նա իր բազմանդամ ընտանիքով արդեն գյուղում էր, և նրա վերադարձը բարոյահոգեբանական որոշակի լիցք հաղորդեց բնակիչների վճռականությանը, մանավանդ նա դառնալու էր Երևանն ու Քարինտակը կապող օղակ.

Անհրաժեշտ էր խելացի հետևողականությամբ հոգալ գյուղի ինքնապաշտպանության կարիքները: Իսկ դրանք շատ էին, բազմաբնույթ: Քարինտակը աշխարհի հետ կապվում էր միայն մեկ ճանապարհով, որն անցնում էր Շուշի քաղաքի անմիջական կողքով: Շարժման հենց սկզբից այդ ճանապարհը վտանգավոր էր դարձել, իսկ որոշ ժամանակ հետո օմոնականները փակել էին այն: Քարինտակը պետք է իր համար կյանքի ու փրկության ճանապարհ բացեր և հայրենի լեռների ու կիրճերի միջով բացեց 18 կմ-ոց ճանապարհ, կապվեց «մեծ աշխարհի», հարևան Շոշ գյուղի հետ:

Անհրաժեշտ էր մտածել բնակչության կենսապահովման մասին, և Միշա Պետրոսյանը ստեղծեց հացի փուռ, ժողովրդին ապահովեց հացով, իսկ մանկապարտեզին, տուժած ընտանիքներին, ծայրահեղ վիճակում հայտնվածներին օգնում էր անվարձահատույց: Ազերիները կտրել էին էլեկտրաէներգիան, ալրաղացները չէին աշխատում: Միշա Պետրոսյանի ջանքերով վերակառուցվեց նախահեղափոխական տարիներին կառուցված, բայց վաղուց արդեն ավերված երկհարկանի ջրաղացը: Շուշիից տեղացող գնդակների տարափի տակ՝ գյուղացիները երկու օրվա ընթացքում վերաբացեցին 2 կմ-ոց ավերված առուն՝ ապահովելով ջրաղացի աշխատանքը: Հետագայում ջրաղացը նվիրվեց հերոսաբար զոհված ազատամարտիկ Ալյոշա Վարդանյանի ընտանիքին՝ նրա երեխաների ապրուստն ապահովելու համար:

Զինաբախման նախորդած օրերին գյուղ էին տեղափոխվել մեծ քանակությամբ շինարարական նյութեր՝ գյուղի հասարակական շենքերը՝ մանկապարտեզը, ակումբը, գյուղխորհրդի շենքը վերանորոգելու համար, 4 կմ ջրատար խողովակներ էին ստացել՝ գյուղի ջրամատակարարման հարցը լուծելու համար:

Հենց այս կարգի կենսականորեն կարևոր, ստեղծագործ աշխատանքն է լիցքավորում քարինտակցիներին, ամրապնդում հակամարտությունից հաղթանակով դուրս գալու համոզմունքը: Բարձր ու մարտական այդ ոգու դրսևորումներից էր նաև այն, որ 1990 թ. ամռանը Քարինտակն էր միակ այն գյուղը, որ կարողացավ իր անասնահոտերը բարձրացնել հարազատ ֆիդայիներով պաշտպանված Քիրսի լանջերը:

Այս ամբողջ «խաղաղ» աշխատանքին զուգընթաց գյուղը ոչ մի րոպե չի մոռացել օրավուր անխուսափելի դարձող զինված ընդհարումից պատվով դուրս գալու մասին: 1988 թ. սկսած՝ գյուղը գործում էր նաև ինքնապաշտպանության զինական միջոցների ստեղծման ուղղությամբ: Ստեղծվում է պաշտպանության շտաբ՝ Վաղարշակ Առուշանյանի գլխավորությամբ: Գյուղի պաշտպանությանն են զինվորագրվում ոչ միայն զենք կրելու ընդունակ տղամարդիկ:

1991 թ. գարնանը գորբաչովյան զորքերը ձեռնամուխ եղան Արցախ աշխարհի հայաթափմանը՝ սկսած Շամխորի շրջանից մինչև Հադրութի շրջան: Մի քանի տասնյակ հայկական գյուղեր բռնությամբ տեղահանվեցին իրենց դարավոր օջախներից: Մայիսի 15-ին նույն բախտին արժանացան նաև Բերդաձորի ենթաշրջանի հինգ հայկական գյուղեր: Այդ տագնապալի իրադարձության ազդեցության տակ գյուղի պաշտպանության շտաբի նախաձեռնությամբ հրավիրվեց ընդհանուր ժողով: Մի գիշերվա մեջ գյուղից դուրս բերեցին երեխաներին, աղջիկներին ու կանանց: Իսկ ինքնապաշտպանական ջոկատները դիրքեր գրավեցին շրջակա լեռներում:

Բերդաշենի ենթաշրջանում իրենց սև գործը վերջացնելուց հետո, խորհրդային զինվորներն ու ադրբեջանական օմոնը մայիսի 16-ին շրջափակեցին գյուղը, սակայն ցանկալի արդյունքի չհասան, պարզվեց, որ Քարինտակը դեռևս չէր մտել հայաթափման սաֆոնովյան ցուցակի մեջ: Այնուամենայնիվ, այդ օրը ձերբակալվեցին պաշտպանության

կազմակերպիչներ Հրանտ Ղարախանյանը, Գուրգեն Պողոսյանը, Միշա Պետրոսյանը, Ռազմիկ Թևոսյանը և տասնյակ այլ գյուղացիներ:

Մթնոլորտը գնալով շիկանում էր, ճակատագրական բախումը՝ դառնում անխուսափելի:

Դեռևս 1989 թ. երիտասարդների 14-հոգիանոց մի ջոկատ անցել էր Քարինտակ՝ գյուղի ինքնապաշտպանությունը հոգալու համար: Սակայն ուրիշ էր 1991 թ.-ը: Արդեն հայաթափվել էին ադրբեջանի ողջ տարածքով մեկ ցրված հայկական դարավոր բնակավայրերը՝ Բաքվից մինչև Ղազախ, Վարդաշենից մինչև Ժդանովի շրջան: Հայաթափվել էին նաև մարզի բնական շարունակություն, բայց արհեստականորեն կտրված Շամխորի, Դաշքեսանի, Խանլարի շրջանները, մարզի Հադրութի շրջանի 13 գյուղ, Բերդաձորի 5 գյուղերը: Իրական սպառնալիք էր կախվել Արցախի յուրաքանչյուր բնակավայրի, յուրաքանչյուր թիզ հողի վրա:

1991 թ. ամռանը Միշա Պետրոսյանը համագյուղացիներից և ղարաբաղցի երիտասարդներից կազմակերպում է 17-հոգիանոց մի զորաջոկատ, հայթայթում անհրաժեշտ զինամիջոցներ և տեղափոխում գյուղ: Այդ ջոկատը, միանալով տեղի ուժերին, վճռական դեր է կատարում հաղթական ճակատամարտի օրը:

1992 թ. հունվարի 26-ի գիշերը թշնամիները շրջափակման օղակի մեջ առան գյուղը և առավոտյան 6.30-ին սկսեցին գրոհը: 1500 հոգուց կազմված ադրբեջանական զորագնդի գործողություններն անձամբ ղեկավարում էր պաշտպանության նախարար Մեհտիևը: Ազերիներն ունեին զենքի համարյա բոլոր տեսակները, գրոհն ուղեկցվում էր այնպիսի ահավոր գնդակոծությամբ, որ պաշտպանական դիրքերում գտնվող 60-70 ազատամարտիկներին օգնության հասնելը դարձել էր անհնարին: Սակայն մի բուռ հայ քաջորդիներ թվաքանակով ու զինվածությամբ բազմապատիկ ուժեղ հակառակորդին 12 ժամ տևած մարտում այնպիսի ջարդ տվեցին, որ երեկոյան ժամը 19-ին նրանք մազապուրծ փախան դաշտից՝ թողնելով 100-ից ավելի սպանված, բազմաթիվ վիրավորներ և զինտեխնիկա: Իրենց ամոթալի պարտության վրեժն առան նրանով, որ 5 օր շարունակ թնդանոթային կրակ տեղացին գյուղի վրա, որպեսզի գյուղում կանգուն շենք չմնա, և ավերեցին բազմաթիվ տներ:

Բախտորոշ ու պատմական այս ճակատամարտում վճռորոշը ոչ թե հակառակորդ կողմերի թվական կազմն էր կամ զինվածության աստիճանը, հանգամանքներ, որոնք ուրիշ դեպքերում, իրոք, վճռորոշ են, այլ Ոգին, հավատը սեփական ուժերի նկատմամբ:

Այդ օրը Անմահների զորաբանակին միացան բազմաթիվ հայ քաջորդիներ:

Երբ բացվեց Արցախը մայր հայրենիքի հետ միացնող ճանապարհը, քարինտակցիները շարունակվող պայքարին զուգահեռ ձեռնամուխ եղան ավերված գյուղի վերականգնմանը: Միշա Պետրոսյանը հերթական անգամ տեղափոխվեց Երևան, Էրեբունու և Մյասնիկյանի շրջխորհուրդների գործուն օգնությամբ հայթայթեց պատկառելի չափերի հասնող շինանյութ (ցեմենտ, շիֆեր, մեխ և այլն): Նրա շնորհիվ 25-30 ավտո շարասյուն կազմած մտավ Քարինտակ:

ԱՐՑԱԽՆ Է ԼՈՒԾՈՒՄ ԻՐ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ

Արցախյան ազատամարտի տասնամյակի առթիվ

Արդեն տասը տարի է, ինչ մեծ տիրությունների քաղաքական շրջանակներն իրենց համար զբաղմունքի առարկա են դարձրել ղարաբաղյան հիմնահարցը և տասնամյա որոնումներով փորձում են «ինչ-որ արդարացի լուծում» գտնել, բայց «չեն կարողանում»: Եվ չեն էլ կարողանալու...

Այդ մասին է վկայում մեր ժողովրդի վերջին երեքհարյուրամյա ողբերգական պատմությունը, որի արդյունքում մեզ զրկեցին մեր հայրենիքի 9/10 մասից: Պատմությունը նման դատավճիռ է կայացնում այն ժողովուրդների նկատմամբ, որոնք չեն կարողանում իրենց գոյության իրավունքը սեփական ուժերով պաշտպանել և միամիտ հույսեր են կապում հզոր «բարեկամների» բարի կամեցողության հետ: Իսկ փոքր, թույլ, նվաճված և ճնշված այլ ժողովուրդներ, որոնք սեփական ճակատագրի հարցը վստահել են սեփական հնարավորություններին, հասել են իրենց նպատակին, նվաճել են երազած ազատությունը:

Երբ մի հետաքրքիր հայացք ենք ձգում մեր պատմության վերջին ե-

րեքիարյուրամյակի վրա, տեսնում ենք, որ մեր ազգային-ազատագրական պայքարի նախաքայլերից իսկ սկսած մեծ տերությունները, որոնց հետ ինչ-ինչ հույսեր ենք կապել, հետևողականորեն մեր պայքարը ծառայեցրել են իրենց աշխարհակալական նպատակներին՝ ամեն անգամ մեզ դնելով զոհասեղանին, ամեն անգամ պատճառ դառնալով կամ նպաստելով, որ մեզ գրկեն մեր հայրենիքից:

Այսօր էլ շարունակվում է մեծ տերությունների նույն մրցակցությունն ու հակամարտությունը, միայն այն նորությամբ, որ մեծերի ցուցակի մեջ որոշ տեղաշարժեր ու փոփոխություններ են կատարվել. ցուցակից դուրս են մնացել, ասենք, Ավստրո-Հունգարական կայսրությունը, տեղը բռնել ու առաջին պլանում է հայտնվել գերտերություն դարձած ԱՄՆ-ն:

Հիշենք, թե ԽՍՀՄ-ը կործանելու գորբաչովյան ծրագիրը՝ մշակված անդրօվկիանոսյան գիտական կենտրոններում, իրականացնելու համար ինչպե՞ս էին քարեքար գցում մեզ, ինչպիսի համաշխարհային աղմուկ էին սարքել ղարաբաղյան պահանջատիրության պաշտպանությամբ, ինչպե՞ս էին իրենց պատվավոր քաղաքացիները դարձնում շարժման մեջ անուն հանածներին, ինչե՞ր էին խոստանում, ընդհուպ մինչև Եվրոպոլիս, այն էլ, ո՞չ ավելի, ո՞չ պակաս, Նախիջևանի սահմանագլխին: (Բարեբախտաբար թե դժբախտաբար հայ ժողովուրդը չգնաց դրսից մատնացույց արված նախիջևանյան ճանապարհով, չնայած հազար տարի էլ անցնի, նա չի մոռանա իր Նախիջևանը):

Երբ մեզ համար նախասահմանված դերն արդեն կատարել էինք, երբ արդեն իրական փաստ էր դարձել ԽՍՀՄ փլուզումը, Արևմուտքն էլ բացեց իր ավանդական քաղաքականության երկրորդ էջը: Իրար կողք դրեք Տեթչերի ելույթները Հայաստանում և Բաքվում, և ամեն ինչ հասկանալի կլինի: Մեր այդ «անփոխարինելի» բարեկամները բերանները ջուր լցրեցին ու մի կողմ կանգնեցին, երբ թուրք ազերիները գորբաչովյան զորքերի գործուն մասնակցությամբ ու «Կոլցո» օպերացիայով հայաթափում էին Ադրբեջան կեղծանունով շրջանառության մեջ մտցված Արևելյան Անդրկովկասը, մի երկրատարածք, որ հայ ժողովրդի բնական հայրենիքն է: Իսկ երբ սեփական գոյատևման իրավունքը

պաշտպանելու բոլոր միջոցներն սպառած արցախցին իրեն պարտադրված պատերազմի ժամանակ ստիպված եղավ գենք վերցնել և ոչ միայն կարողացավ չվաստակած հաղթանակներով լկտիացած հակառակորդի հաղթարշավը կանգնեցնել, այլև որոշ փշրանքներ էլ ետ բերեց նախկինում իրենից բռնազավթվածներից, այդ նույն արևմտյան «բարեկամները» շաբաթը մի անգամ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումներով սպառնալիքներ էին տեղում արցախցիներիս գլխին:

Է՜հ, աղքատ ու հպարտ Արցախը ինչո՞վ և ինչպե՞ս կարող էր բավարարել Արևմուտքի ախորժակը, երբ հարյուր տարուց ավել է, ինչ այն գրգռված է Բաքվի նավթի հոտից: Եվ ահա, ազգային-ազատագրական պայքարի փոխարեն մեջտեղ են ցցել պետության սահմանների անձեռնմխելիության նորօրյա խրտվիլակը, այն էլ մի պետության նկատմամբ, որը ձևավորվել է ոչ հեռավոր անցյալում երկրատարածք բերված քոչվոր ժողովրդի համար, Արևելյան Անդրկովկասի հինգ տեղաբնիկ ժողովուրդների՝ հայերի, լեզգիների, թալիշների, թաթերի և ուդիների հայրենիքների հաշվին:

Այսօր պարզից էլ պարզ է, որ Մինսկի խումբը իր համանախագահներով կամ միջազգային որևէ այլ ատյան, ուր խաչաձևվում են մեծ տերությունների արյունոտ կամ անարյուն շահերը, չի կարող լուծել ղարաբաղյան հիմնահարցը. բացառվում է մի այնպիսի լուծում, որ ձեռնտու լինի բոլոր կողմերին: Մեծ տերությունների կամեցողությամբ ղարաբաղյան հիմնահարցի լուծումը բացառվում է ամենից առաջ նաև հենց այն պատճառով, որ **ղարաբաղցին արդեն լուծել է իր հիմնահարցը՝ ծանր ու անձնազոհ պայքարում նվաճելով սեփական ազատությունն ու անկախությունը:** Այս անգամ ուրիշների բախտը որոշող հզորները փոքր-ինչ ուշացել են, և նրանց «մտահոգությունը» արդարության հաստատման գործում ժամանակավրեպ է:

Թիկունք ունենալով համայն հայության զորակցությունը՝ Արցախն այսօր հասել է արդեն մի այնպիսի ինքնահաստատման, որ նրա գլխին այլևս չեն կարող սարքել Բեռլինի վեհաժողով, Սևր ու Լոզան, Բրեստ ու Ղարս... Արցախը ձեռք է բերել իր ազատությունն ու անկախությունը և անցել սեփական պետականության վերականգնմանը՝ շարունակելով

իր առանների, վաչագանների, համամների հայրենաշեն ավանդները:

Արցախն իր նորաստեղծ իշխանությամբ այս անգամ էլ պատվով կպսակի ազատամարտի երկրորդ էտապը, չնայած մեծ տերություններն իրենց հակամարտ շահերի թելադրանքով փորձում են խլել նրա ձեռքբերումները՝ քթները խոթելով մեր լեռների, կիրճերի ու անտառների խորքերը: Իսկ դրա համար իր շատ ու շատ անելիքների հետ միաժամանակ արցախցին պետք է հիշի իր երեկվա օրը, իր անցած ճանապարհը, նրանից անհրաժեշտ դասեր քաղի և աներեր հետևողականությամբ պաշտպանի իր ազգային-պետական շահերը: Արցախը փրկվել է և վերջնականապես փրկվելու է հայ ժողովրդի հավաքական ջանքերի շնորհիվ, նա մենակ չի եղել և մենակ չի մնա դեպի հավերժություն ընթացող իր երթում:

1998թ. հունվար

ՓՈԽՁԻՁՈՒՄ

Ղարաբաղյան հիմնահարցի նկատմամբ «անհանգստության» նոր ալիքը գալիս է մի կրկին անգամ հաստատելու, որ աշխարհի հզորները իրենց աշխարհակալական շահերի թելադրանքով դարձյալ հետամուտ են մեզ զոհասեղան հանելու ավանդական քաղաքականությանը: Հարյուր տարի առաջ Գլադստոնի կրակոտ ելույթներով մեզ քարեքար էին գցում, որպեսզի Սոլզբերիի բերանով հայտարարեն, թե անգլիական նավերը Սասունի լեռներ բարձրանալ չեն կարող: Հարյուր տարի հետո Բեռլինի պատի փլուզումը վերագրում են Ղարաբաղյան շարժման ալիքին, որպեսզի հետո դեմներս ցցեն «տերիտորիալ ամբողջականության» խրտվիլակը: Հարյուր տարի առաջ նրանց պետք էր մեր արյան և հայրենիքի հաշվին Թուրքիայից յուղալի կտորներ պոկեին, տեր դառնային թուրքական շուկային, հարյուր տարի հետո փոխարինելու է եկել Բաքվի նավթը:

Նայեցեք վերջին տասնամյա իրադարձությունների ընթացքին: Ադրբեջանի ողջ տարածքով մեկ իրականացրեցին հայերի ջարդերն ու բռնագաղթը: Բաքվի կեսմիլիոնանոց հայության ջարդի մոլուցքի մեջ հասան մինչև մարդակերության: Աշխարհի բախտը տնօրինող «արդարամիտ, մարդու իրավունքների պաշտպան» գերտերությունները բռնել էին «անշահախնդիր» ականատեսի դիրք: Ավելին: Սումգայիթի թուրքական բարաքների ցուցադրումով ու հակահայկական տևական քարոզարշավով ավելի բորբոքեցին հակառակորդի վայրենի բնազդները, ամեն ինչով. նույնիսկ պետական զորքերով հանրապետության ողջ տարածքով մեկ իրականացրեցին հայերի ջարդն ու բռնագաղթը: Եվ այդ ամենը գնահատվեց որպես բնական ու հասկանալի երևույթ: Բայց երբ պետք էր նույն ճակատագրին արժանանար նաև Ղարաբաղը, և ղարաբաղցին իր գոյության բնական իրավունքով լռեցրեց Խոջալուի թուրքական կրակակետը, նույն «արդարամիտ, մարդու իրավունքի պաշտպան» հզորները ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումով ագրեսոր հռչակեցին ղարաբաղցուն՝ հետագայում բազմապատկելով նման որոշումները մեր ամեն մի հաջողության առիթով: Ահա թե ինչու այսօր համազգային քաղաքական գերխնդիրն աշխարհի հզորների «արդարամտությանը» կուլ չգնալու մեջ է ամփոփված:

Այսօր պարզից էլ պարզ է, որ Մինսկի խումբը իր համանախագահներով կամ միջազգային որևէ այլ ատյան, ուր խաչածնվում են մեծ տերությունների արյունոտ կամ անարյուն շահերը, չի կարող լուծել ղարաբաղյան հիմնահարցը: Քանի դեռ հզորության և ուժի համաշխարհային մրցակցությունը չի ավարտվել մեկի հաղթանակով, նման կառույցները հիշեցնելու են թուրքական բաղնիք, ուր ընկած օճառը վերցնելու ռիսկի չի դիմելու որևէ կողմ: Հենց դրա համար էլ, որպես ժամանակ շահելու միջոց, մեջտեղ են գցել Ալիև-Քոչարյան հանդիպումները:

Հիմնահարցի լուծման գործընթացի քաշքշուկները ներքին ու արտաքին մի շարք պատճառներով այսօր մեզ ավելի ծանր կացության առաջ են կանգնեցրել, քան եղել ենք պատերազմի դաշտում: Ինչպես երեկ, այսօր ևս թե՛ քաղաքական, թե՛ դիվանագիտական, թե՛ ինքնապաշտպանական բնագավառում դատապարտված ենք մեր բոլոր հնարավորություններով դիմագրավելու առաջին հերթին տարածաշրջանով շահագրգիռ տերությունների պարտադրանքին, որից և սնվում է ադրբեջանական սպառնալիքը:

Մեր պայքարի այս երկրորդ, առավել ծանր էտապում, ամեն ինչից բացի, պետք է շրջանառության մեջ դնել նաև մեր իրավունքը փաստող երկու անշրջանցելի իրողություն: Առաջինն այն է, որ Ադրբեջան կեղծանունով շրջանառության մեջ մտած Արևելյան Անդրկովկասը հայ ժողովրդի բնօրրանն է եղել այն հեռավոր ժամանակներից սկսած, երբ ա-

ռանձնացել է հնդեվրոպական հանրությունից և ձևավորվել որպես ինքնուրույն էթնիկական միավոր: Այդ մասին են վկայում նախ լեզվական, ապա՝ պատմական փաստերը՝ սկսած հինգհազարամյա հնություն ունեցող շումերական գրավոր հուշարձաններից: Երբ ձևավորվեց պատմությանը հայտնի առաջին հայկական միասնական պետությունը, Արևելյան Անդրկովկասը ևս կազմեց նրա մաս: Դա տեղի ունեցավ մ.թ.ա. 8-րդ դարի վերջերին: Հենց այդ ժամանակ էլ հիմնարկվել են Բագուն ու Մարդականը, տեղանուններ, որոնք կազմված են հայոց լեզվի բառակազմական միջոցներով («բագ» բառարմատով վերջին անգամ նոր բառ է կազմվել մ.թ.ա. երկրորդ դարի սկզբին. Երևանդ Վերջինը կառուցեց Բագավանը):

Հազարամյակներ շարունակ այդ երկրատարածքը ինչպիսի նվաճումների էլ ենթարկվել, նվաճողները ինչպիսի վարչատերիտորիալ բաժանումներ էլ կատարել են այնտեղ, էթնիկական առումով այն բացառապես մնացել է հայ հայրենիք մինչև 18-րդ դարի առաջին կեսը: Բոլոր նվաճողներն էլ, սկսած Ալեքսանդր Մակեդոնացուց, երկրատարածքի էթնիկական նվաճմանն խնդիր չեն դրել և շատ թե քիչ էթնիկական, պատմամշակութային նստվածքներ չեն թողել: Եվ քանի անգամ էլ հնարավորություն է ստեղծվել օտարի տիրապետության թոթափման, տեղը կանգնել է հայկական իշխանություն՝ սկսած Վաչագան բարեպաշտից մինչև Բաքվի կոմունան 1918 թվականին՝ չնայած ղեկավարության ինտերնացիոնալ կազմին ու առաջադրած ծրագրին: Իսրայել Օրու տվյալներով՝ ժամանակակից Ադրբեջանի համապատասխան տարածքի բնակչության 87%-ը հայեր են եղել, 13%-ը՝ մահմեդականներ, որոնց կազմում նաև թուրքեր:

Երկրորդ անշրջանցելի իրողությունն այն է, որ ղարաբաղյան ներկա հակամարտությունն օրգանական շարունակությունն է ազատագրական այն պայքարի, որի ակունքում կանգնած է եղել Իսրայել Օրին, և ծրագրվում էր Արևելյան Հայաստանը ազատագրել պարսկական տիրապետությունից և վերականգնել կորցրած պետականությունը: Դա մի Արևելահայաստան էր, որի սահմանագլուխը Բաքուն էր, և որը պարսկական կառավարությունը բաժանել էր յոթ վարչատերիտորիալ մարզերի՝ խանությունների՝ Բաքվի, Շամախու, Նուխու, Գանձակի, Ղարաբաղի, Նախիջևանի ու Երևանի: 18-րդ դարում Ղարաբաղում ու Զանգեզուրում ծավալված ազատագրական պայքարը բնավ էլ տեղական բնույթ կրող երևույթ չէր, այն հետապնդում էր համաանդրկովկասյան խնդիրներ: Պատահական չէ, որ Ղարաբաղում ազատագրական պայքարը ղեկավարում էին «Շամախու տղերքը», իսկ Զանգեզուրում՝ Վրաստանից եկած զինվորականները:

Սկսված ազատագրական պայքարը և այն Ռուսաստանի շահերին ծառայեցնելու համար Պետրոս Առաջինի ձեռնարկած Կասպիական արշավանքը եկան հիմնովին փոխելու Անդրկովկասով շահագրգիռ Թուրքիայի ու Պարսկաստանի քաղաքականությունը: Պետական շահերով ու աղանդներով իրար թշնամի, փոխադարձաբար իրար ոչնչացնող Պարսկաստանն ու Թուրքիան, որ մինչ այդ հայերին խլում էին իրարից որպես իրենց կերակրող, երկիրը շենացնող աշխատավորական ուժի, պետական քաղաքականության մակարդակի բարձրացրեցին հայերին ոչնչացնելու և երկիրը մահմեդականացնելու ճանապարհով Ռուսաստանի դեմ պատնեշ ստեղծելու խնդիրը՝ սկիզբ դնելով երեքհարյուրամյա շարունակվող ցեղասպանությանը Արևելյան Անդրկովկասում:

Թուրքիայի հետ առճակատումից խուսափելով՝ Պետրոս Առաջինը Պարսկաստանին ենթակա Անդրկովկասը ճանաչեց որպես թուրքական սեփականություն: 1724 թ. Թուրքիան ռազմակալեց Անդրկովկասը և կոտորածներին զուգահեռ բռնի մահմեդականացրեց մեծազանգված հայերի: Միայն Նուխու խանությունում, Մակար եպ. Բարխուդարյանի ոչ սպառիչ տվյալներով, բռնի մահմեդականացված հայերի թիվը 19-րդ դարի վերջերին 15480 ծուխ ազգաբնակչություն էր կազմում: Իսկ բռնի մահմեդականացման գործողությունը ձգվել է մինչև Դերբենդի շրջակաները:

Տասը տարի հետո, 1734 թ., Իրանի տիրակալ Նադիրը ռազմակալեց Անդրկովկասը և Թիֆլիսից մինչև Կասպից ծովն ընկած տարածքից գերի տարավ 700000 բնակչի: Միայն Շամախի քաղաքը, որն ուներ տասը հազար ծուխ հայ բնակչություն, հիմնովին կործանվեց շահի հրամանով, և բնակիչները քշվեցին Պարսկաստան: Փոխարենը շահը Պարսկաստանի խորքերից ու Իրաքից Արևելյան Անդրկովկաս տեղափոխեց թրքախոս քոչվոր ցեղերի զանգվածներ՝ հիմք դնելով երկրատարածքի էթնիկական նվաճմանը: Այդ քաղաքականությունը հետագայում որդեգրեց ցարիզմը՝ իր կորցրած պետականության վերականգնման հույսը փայփայող հայության հնարավոր անջատողական տրամադրությունների դեմ քոչվորական վայրենի ուժը օգտագործելու հեռանկարով, և օգտագործեց 1905-07 թթ. հայ-թուրքական ընդհարումների տեսքով: Ցարերի քաղաքականությունը շարունակեցին նաև բոլշևիկները՝ ոչ միայն

հայկական մարզերը դնելով նորաթուխ ադրբեջանական իշխանությունների տրամադրության տակ, այլև մինչև 1954 թ. թուրքախոս զանգվածների ներհոսք էին կազմակերպում այդ հանրապետության հարևան Իրանից:

Չնայած այս հետևողական, հայության համար ողբերգական քաղաքականությանը՝ Արևելյան Անդրկովկասը մինչև 1988 թ. հայրենիք էր մնացել հայության համար՝ սկսած Կովկասյան լեռների փեշից մինչև Արաքս, Բաքվից մինչև Ղազախ, այս դեպքում արդեն որպես ընդհանուր հայրենիք՝ թուրքական տարրի թվական գերակշռությամբ: Այո՛, դարերի մաքառումը ծանր ու շատ դեպքերում կորստաբեր է եղել, բայց ամեն անգամ, երբ միջանկյալ դադարներ են եղել, երբ ջարդ ու գերեվարումին հաջորդել են խաղաղ ու ապահով ժամանակներ, հայ ժողովրդի փրկված բեկորները վերադարձել են իրենց բնօրրանը, վերաշինել իրենց քանդված օջախները: Միայն գորբաչովյան վարչակարգի հրահրած հակամարտության արդյունքում էր, որ նույն գորբաչովյան զորքերի ակտիվ դերակատարմամբ ու «Կոլցո» օպերացիաներով հայ ժողովուրդը զրկվեց հազարամյակների իր հայրենական տարածքներից՝ կարողանալով փրկել միայն մի փոքրիկ բեկոր: Ի դեպ, Պարսկաստանը Ռուսաստանին է հանձնել 14 հազար քառակուսի կմ տարածք ունեցող մի Ղարաբաղ, որը բոլշևիկները դարձրին 4 հազար:

Այս է պատմության ընթացքը, պատմական ճշմարտությունը, որը բնավ էլ պատմություն չէ իր ավանդական ըմբռնումով, այլ երեքհարյուրամյա ընթացք ունեցող ու այժմ էլ շարունակվող մի ողբերգություն, որի ծայրը դեռևս չի երևում:

Փոխանակ այս նախադրյալներից ելնեն ներկա հակամարտության շուրջը ծավալված գործընթացներում, փոխանակ տարբեր իշխողների շահերի թելադրանքով երկու ժողովուրդների համար ընդհանուր տան վերածված մեր հայրենիքից իր օրինական բաժինը պահանջելու, փոխանակ փոխադարձ զիջումների սեղանին Բաքվի, Շամախու, Նուխու, Գանձակի հարցերը դնելու՝ մեր քաղաքական ղեկավարներն այսօր սակարկում են ոչ թե ազատագրված, այլ գրավյալ տարածքների շուրջը, զբաղվում «ինքնավարությունից բարձր, անկախությունից ցածր» լարախաղացությամբ: Այո՛, պատերազմը վերջացնելու, երկու ժողովուրդների միջև խաղաղություն հաստատելու համար զիջումներ են պետք: Բայց այդ զիջումների համար պետք է ամեն ինչ դրվի կշեռքի նժարին, որ ինչքան էլ ամհամարժեք ու անհավասար, այնուամենայնիվ, ինչ-որ հավասարակշռություն հաստատվի:

Փոխադարձ զիջումների սեղանին պետք է հարցը դնել հետևյալ կտրվածքով:

Անդրկովկասով շահագրգիռ տերությունների երեքհարյուրամյա հակամարտության արդյունքում հայ հայրենիքի հաշվին ադրբեջանցիների համար նոր հայրենիք է ստեղծվել: Երբ ազերբուրքերը դեռևս ոչխար էին արածեցնում, հայերը իրենց երեքհազարամյա հնությունից վերածնված Բաքուն հարյուրերեսունամյա մի ժամանակահատվածում դարձրին համաշխարհային հնչեղության քաղաք, որը մնում է նրանց: Դրան հակակշիռ, կշեռքի մյուս նժարին է դրվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը իր ներկա դրությամբ, և Բաքուն ճանաչում է նրա անկախությունը: Երկրամասի մյուս տարածքներից ԼՂՀ-ի նժարին են դրվում այն շրջանները միայն, որոնք վերջին երեքհարյուրամյակում թուրքերը զենքով նվաճել չեն կարողացել և բռնազավթվել են միայն գորբաչովյան զորքերի դերակատարմամբ: Խոսքը Օսմանյան թուրքերին է վերաբերում, որը և՛ 1724, և՛ 1918 թթ. չկարողացավ նվաճել այդ շրջանները: Մի վերջին անգամ շեշտենք, որ ազերբուրքերի համար նոր հայրենիքի հիմքերը դրել են Թուրքիան և Իրանը, իսկ վերջնական ավարտին է հասցրել Ռուսաստանը՝ ամեն մեկը ելնելով իր աշխարհաքաղաքական նկրտումներից:

ԼՂՀ-ին վերադարձվելիք այդ շրջաններն են՝ Շամխորը, Քարհատ-Դաշքեսանը, Գետաշենը, Շահումյանը: Դրանց գումարվում է նաև ժդանովը՝ ԼՂԻՄ-ի վարչական տարածքում, Ղարաբաղի ազգաբնակչության ձեռքով ստեղծված շրջանը, որը կամայականորեն կտրեցին մարզից և դարձրեցին հանրապետական ենթակայության շրջան:

Իրականում կայացած երկու պետությունների՝ Ադրբեջանական Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջև շատ թե քիչ կայուն ու տևական խաղաղության ու փոխըմբռնման հաստատման համար ներկա պայմաններում փոխզիջումային առավել բանական ու տանելի տարբերակ մենք չենք տեսնում:

ՊԱՅՔԱՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Հոդվածների այս շարքում փորձեցինք մեր ընկալումով պատասխանել արցախյան ազատամարտի հետ առնչվող ինչ-ինչ հարցերի, ներկայացնել հիմնահարցի ձևավորման պատմական ընթացքը՝ իմաստավորելու համար մեր ժողովրդի ձեռքբերումների արժեքը ազերբուրքերի հետ ունեցած հակամարտության արդյունքում: Բայց դա իրականության մի երեսն է միայն, երբ դրված էր մեր գոյության իրավունքի հաստատումը մեր հազարամյակների հայրենիքում, և անվերականգնելի զոհողությունների գնով հաստատեցինք այն:

Իրականության մյուս երեսը սպառնացող հարցականի տեսքով կանգնել է մեր դեմ և պատասխան է պահանջում. կկարողանա՞նք Հայրենիքի փրկված այդ հատվածում մեր գոյության հարատևումը ապահովել, կկարողանա՞նք ստեղծել մի այնպիսի առաջընթաց, մարդավայել կյանքի մի այնպիսի կայուն վիճակ, որ ժողովուրդը ամուր կանգնի հայրենի հողին, որ հայրենի հողը մագնիսի պես դեպի իրեն ձգի իր պանդուխտ զավակներին:

Առաջիկային թողնելով մեր նկատառումներն այդ հարցերի մասին՝ ընթերցողի դատին ենք հանձնում որոշ ահազանգող իրողություններ:

Արցախյան առաջին ազատամարտի ժամանակ, 18-րդ դ. սկզբին, Արցախն ունեցել է 100 հազար ծուխ ազգաբնակչություն և տնտեսական այնպիսի ներուժ, որ խոստանում էր հոգալ ռուսական զորքի ծախսերը, եթե Պետրոս Առաջինը ձեռնարկի հարավային արշավանքը: Պատկերացնելու համար բնակչության թվակազմը՝ բերում ենք հետևյալ զուգահեռը՝ չնայած այն վերաբերում է արդեն կործանված նահապետականության ժամանակներին: Մակար Բարխուդարյանցի հաշվումներով՝ նախկին Շաքիի խանության բռնի մահմեդականացված հայերը 19-րդ դարի վերջին կազմում էին 15480 ծուխ: 1916 թ. ցարական վիճակագրությամբ նրանց թիվը 188000 էր: Այսինքն՝ ծուխը բաղկացած էր 10-ից ավելի անձից: Իսկ 1926 թ. մարդահամարով ԼՂՀՄ-ում կար ընդամենը 111000 հայ, որոնց թվակազմը 1970 թ. մարդահամարի համաձայն հասել էր 121000-ի: Նույն ժամանակահատվածում ազերբուրքերը 1438977-ից հասան 3776778-ի:

Երկուհարյուրամյա դաժան փորձությունների հետևանքով, նույն Մ. Բարխուդարյանցի հաշվումներով, Արցախում ավերվել են «երեք քաղաք, տասը գյուղաքաղաք, 360 գյուղ, որոնց բնակիչներն գաղթել են այլևայլ կողմեր»[19]: Զանց առնելով 1918-1921 թթ. ավերածությունները՝ միայն 1988-ով սկսված հակամարտության ժամանակ, գորբաչովյան զորքերի ակտիվ դերակատարմամբ, հայաթափեցին մարզի սահմաններից դուրս թողնված արցախյան 240, մարզի 12 գյուղ, ՀՀՇ-ականները թուրքերին թողեցին Մարդակերտի շրջանի 9 գյուղ:

Թե ինչպիսին է վիճակն այսօր չդադարող արտագաղթի պայմաններում, բավարարվում ենք մեկ փաստով միայն: Հակամարտության ընթացքում ավերածությունից զերծ մնացած, նյութական կորուստ չտված, հարաբերականորեն կայուն վիճակ ունեցող Գիշի գյուղը 2001-ին տվել է միջնակարգի 37 շրջանավարտ: 2000թ. ունեցել է ընդամենը 18 ծնունդ...

Ահա թե ինչու արտաքին ամեն մի ճնշումի դիմագրավելուց առավել, Արցախի վերջնական փրկության համար անհրաժեշտ է համազգային մի նոր շարժում՝ ավերվածը վերականգնելու, կորցրածը ետ բերելու համար: Այլապես իրականության ներկա զարգացումները կարող են հանգեցնել մի կետի, երբ մի նոր Գորբաչով կհայտարարի, թե Արցախում բնակչություն չկա, այնտեղ կուտակված «էքստրեմիստ բոյեվիկների» դեմ պետք է կրկնել «Կոլցո» օպերացիան:

Մեր պատկերացումով՝ Արցախի վերականգնումը պետք է սկսել գյուղատնտեսությունից: Նախ՝ ելնելով այն իրողությունից, որ երկրամասը ագրարային է, ժողովուրդն այդ ուղղությամբ է մասնագիտացած: Ապա՝ գյուղատնտեսության մեջ քիչ ծախսերով և կարճ ժամանակամիջոցում շոշափելի արդյունք է ստացվում:

Գյուղատնտեսական Արցախը շատ բան ունի տալու աշխարհին, եթե տեր կանգնենք առկա հնարավորություններին:

Ադրբեջանական իշխանությունների ծայրահեղ գաղութատիրական, Ղարաբաղի հայաթափմանը միտող քաղաքականության պայմաններում անգամ մարզը պետությանն էր հանձնում այնքան եկամուտ, որ այսօր երազել կարող են երկու հայկական պետությունները միասին վերցրած: Ի՞նչ ասեք, որ չի աճում Արցախում, սուրճից ու բանանից բացի: Բավական է հիշել տնտեսության առաջատար ճյուղերից մի քանիսի որոշ տվյալներ. խաղող՝ 172000 տ., ցորեն՝ ավելի քան 100000 տ, միս՝

19 Մակար եպս. Բարխուդարյանց, Աղվանից երկիր և դրացիք, Արցախ, Ե., 1996, էջ 13:

13000տ, կաթ՝ 65000 տ, բուրդ՝ 700 տ, ձու՝ 7,5 միլիոն հատ, բոժոժ՝ 250 տ, թթի օղի՝ 300000 դ/լ: Էլ չենք խոսում զանազան պտղատու այգիների, բանջարաբոստանային մշակումների և այլնի մասին՝ ընդհուպ մինչև դեղաբույսերը:

Նշենք, որ վերոգրյալ ցուցանիշները բնավ էլ իրականության սպառիչ պատկերը չեն ներկայացնում. դրանք պետությանը հանձնվածի ցուցանիշներն են միայն: Իրականում հողի աշխատավորից մինչև երկրի առաջին դեմքը գողանում էին բոլորին, բայց ոչ ոքի պատկանող բարիքները՝ ամեն մեկն իր հնարավորությունների չափով: Հիշենք Անտոն Քոչինյանի Բրլիյանտիչ դառնալը, նաև մի մասնավոր, բայց բնութագրական դեպք:

70-ական թթ. սկզբներին մի օր Գիշի գյուղի կոլտնտեսության նախագահը գյուղի մի երկու մտավորականի մոտ իրավացիորեն պարծենում էր իր կատարած աշխատանքներով: Այդ պահին մոտենում է խաղողի գյուղամերձ այգիների պահակը, բողոքում, թե այսինչը հաճախակի խաղող է գողանում: Նախագահը պահակի ամբողջ ազգն ու տակը նախշելուց, նրանց «մունդառությունը» փնովելուց հետո ավելացնում է.

- Շան տղա, թող մի 50 տոննա խաղող էլ գողանան, դրանով Գիշին աղքատանալո՞ւ է, ի՞նչ ես զահլա տանում:

Ավելորդ է ասել, որ ջարքայինը պայուսակով էր գողանում, ինքը՝ բեռնատար մեքենայով, որ պատասխան տար նաև վերադասներին, այլապես կզրկվեր եկամտաբեր պաշտոնից:

Տնտեսական այն մեծ ներուժը, որ ունի գյուղատնտեսական Արցախը, լիարժեք գործողության մեջ դնելու դեպքում կլուծվեն շատ ու շատ հիմնախնդիրներ, և դուռ կբացվեն հարկադրաբար պանդխտության դիմածների վերադարձի համար: Արցախի վերջնական փրկության համար պետք է հասնել նրան, որ վերականգնվի Եսայի Հասան Ջալալյան կաթողիկոսի ժամանակի ազգաքանակը: Իսկ դրան կարելի է հասնել, եթե ազգը սատարի Արցախի տնտեսական վերակենդանացմանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 4

Ինչպես Արևելյան Անդրկովկասը դարձրին Ադրբեջանում

Ներածության փոխարեն 5
Երեքհարյուրամյա շարունակվող ցեղասպանությունը
Արևելյան Անդրկովկասում և նրա հետևանքները 7
Լաչին-Գետաբեկի ադրբեջանականացման պատմությունից 26
Ժդանովի անվան շրջանի ադրբեջանականացումը 31
Ադրբեջանի խաղաղ զավթումների հետքերով 35

Երբ «կացնի կոթը» մեզանից է

Ջարդարարության հերթական բռնկումը 42
Իսկապես, ինչքա՞ն կարելի է վնասել ժողովրդին 51
«Անկանխատեսնելիի» կանխատեսված իրականությունը 58
Սատանան ասում է՝ խոսիր 63

Արցախյան ազատամարտի ակունքների մոտ

Ղարաբաղյան հիմնահարցը 69
Ի՞նչ են ասում փաստերը 72
Բաց նամակ Մ. Ա. Գորբաչովին 76
Դարձյալ փաստերի ճնշման տակ 81
Գորբաչովը պետք է դատվի 85
Բաց նամակ ՌԴ պետական դումային 92

Արցախն է լուծում իր հիմնահարցը

Տագնապի կանչ Արցախի պանդուխտ զավակներին 95
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ղեկավարությանը 97
Քարինտակ՝ «արյունոտ ծոր» թուրքերի համար 99
Մեր բնական իրավունքն է բռնազավթումին
պատասխանել ազատագրումով 103
Քարինտակցիները չհեռացան գյուղից 107
Արցախն է լուծում իր հիմնահարցը 111
Փոխզիջում 114
Պայքարը շարունակվում է 120

ԱՐՏԱՇԵՍ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄՈՏ

Տպագրության են պատրաստ հեղինակի հետևյալ աշխատությունները

1. Ղազարոս Աղայան, (Գրական ժառանգություններ), 14 մամուլ

2. Դասական ավանդներին հավատարիմ (Գրականագիտական ուսումնասիրություններ և հոդվածներ), 12 մամուլ

3. Կորցրածը ետ բերելու ակնկալիքով (Մերօրյա մտորումներ), 2 մամուլ

«Ամարաս» տպարան

Երևան, Տերյան 44,